Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

Օ՛ԶԱԼՈՅԱՆՑ

ԷՆԿԱՐԱԿԻՆ

Բանասեր Բոլշին. անմոռաց
Կարախանի տիրոջն է նվիրում
հեղինակն այս տառապալից
էջերը:
Ջուզեպե Ջալմա Օ՝Ջալոյանց

Ը Ն Կ Ճ Ա Խ Տ

Երևան

ՀՏԴ 891.981-3 Օ'Ջալոյանց
ԳՄԴ 84Հ 7-44
Օ-62Ջ

Օ'Ջալոյանց (Կարեն Գուրգենի Մխիթարյան)
Օ-62Ջ Ընկճախտ: Պատմվածքներ:
Օ'Ջալոյանց -Եր.: «Լեգալ Պլյուս», 2004, 92 էջ:

Ժողովածուում զետեղված են «Գրական թերթ», «Առավոտ», «Ժամանակ», «Սատիրիկոն» թերթերում, «Գարուն», «Բնագիր» հանդեսներում տպագրված երգիծական ակնարկներն ու պատմվածքները:

Գիրքը նախատեսված է, ընկճախտով տառապող, 8-80 տարեկան երիտասարդների համար:

Օ $\frac{4^{-}702080201}{01^{-}70(01)-2004}$ 2004 ԳՄԴ 84 Հ 7-44

ISBN 99930-885-4-4

© Օ'Ջալոյանց,2004

Խմբագիր՝ Արա Գալոյան
Նկարիչ՝ Գևորգ Պողոսյան (Ժոռ)
Էջադրող՝ Լևոն Կուրղինյան
Ձևավորում և մինչտպագրական աշխատանքներ «Լեգալ Պլյուս» ՍՊԸ
Տպագրված է «Լեգալ Պլյուս» տպարանում
ՀՀ ք.Երևան Գրիբոյեդովի 2, Հեռ. 23 11 09
E-mail: legal@freenet.am

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԹՄԲՈՒԿՆԵՐԸ

«Եթե դուռդ չորս անգամ բախեցին,
դա կամ ճակատագիրն է, կամ ժավելի սպիրտ են
վաճառում, իսկ եթե երեք անգամ քեզ տանում են...»
Կ Մխիթարյան

Դժվար է առարկել Դելակրուայանի այն խոսքին, որ ամենատափակ մարդը գերադասելի է ամենահաճելի հիշողությունից: Սակայն հիմա ես գնալով ավելի ու ավելի հաճախ եմ հետադարձ հայացք գցում անցածս ճանապարհին և երկար լսում, թե ինչ մեղեդիների էին ուղեկցում ճակատագրի թմբուկները կյանքիս այս կամ այն հատվածում· Իմ հիշողություններում ամեն մարդ մի մեղեդի է տխուր կամ ուրախ: Հաճախ դեմքերն աղոտ են երևում, երբեմն լսվում է միայն ձայնը, սակայն հենց որ հնչում է խելագար տարանտելլան, աչքերիս առաջ անմիջապես հառնում են երկու պայծառ կերպար. բանասեր Բոլշը և նրա հավատարիմ ճագար Կարախանը...

Համալսարանն ավարտելուց հետո Բոլշին աքսորեցին ահավոր հեռու գտնվող մի կիսաքոչվոր գյուղ ռուսաց լեզու և գրականություն դասավանդելու: Հրաժեշտի բուռն երեկոյի վերջում բոլորս ներողություն խնդրեցինք, որ չենք կարող հաճախակի այցելել նրան, և այդպես էլ եղավ: Սակայն, հուսով եմ, ավելորդ է հիշեցնել, որ սիրո համար տարածությունը խոչընդոտ չէ շաբաթ էլ չէր անցել այդ պատմական երեկոյից, երբ Բոլշի վարձակալած նախկին հավաբնի շեմին հայտնվեց նրա վերջին սեր էսմերալդան «Սև Գուլիվեր» ցեղի մի ճագար կողքին· Ճագարի թե տեսքը, թե վզին կապած «թիթեռնիկ» փողկապը ակնարկում էին Բոլշի «փլեյբոյ» անցյալը և թեթևակի ընկճախտ առաջացնում: Խնդրելով էսմերալդային հավաբնում իրեն զգալ ինչպես սեփական տանը, Բոլշը վազեց փոստ, և հետևյալ հեռագիրն ուղարկեց. «Բիձա, սև ճագար եմ նվեր ստացել, մի հսկա անասուն, ի՞նչ անեմ: Բոլշ»: Հաջորդ օրը ստացվեց պատասխանը, «Անունը դիր Կարախան: Բիձա»:

Վարդի թփի տակ մի սոխակ չէ, որ խեղդել է դաժան կենցաղը. զուգարանի և լվացարանի միջև եղած հեռավորությունը ուղիղ գծով 150 մետր էր, և Բոլշի ու էսմերալդայի սիրո մակույկը մի օր սկեց... Առաջին պատահած կոմբայնը նստելով, էսմերալդան հիշողություն դարձավ, իսկ հավաբնում մնացին ընկճված Բոլշը և քաղցած Կարախանը: Ներողություն եմ խնդրում տհաճ մանրամասների համար, բայց Կարախանը շատ էր կեղտոտում, չլսված շատ... Խախտելով նյութի պահպանման Լոմոնոսով*-

*Լոմոնոսով- ռուս գիտնական

Լավուազիեի* օրենքը, նա դուրս էր գնում օրը տասը անգամ, ընդհանուր առմամբ իր քաշից 1,5 անգամ ավելի, իսկ կերածից 3 անգամ: Հուսահատված Բոլշը դադարեց կերակրել Կարախանին, բայց դա էլ չօգնեց: Մեկ ամիս Կարախանը շարունակում էր կեղտոտել ինտերցիայով և անընդհատ վազվզում էր, ինչով խախտում էր արդեն էներգիայի պահպանման օրենքը, իսկ մի օր իր կնքահոր հյուր եկած Բիծու ձեռքից խլեց ապխտած ձկան կտորը և, սառած հայացքների ներքո, գռմռալով կերավ. Սարսափած Բիծեն ցատկեց մի դաշտ գնացող կոմբայն և նույպես հիշողություն դարձավ: Նորից մնացին երկուսով: Շուտով պարզվեց Կարախանի գաղտնիքը և վերականգնվեց Բոլշի հավատը պահպանման օրենքների նկատմամբ. նախկին ճագարը ուտում էր թաղի բոլոր շների լափը: Միայն մի գամփռ էր փորձել դիմադրել, այն էլ շատ անհաջող. Կարախանը տեղում խեղդել էր նրան և լափը ուտելուց հետո տեղավորել բնում քնածի տեսք տալով: Տաղանդ էր... Ձմռան մի ցուրտ գիշեր, երբ Բոլշը, վառարանի մոտ նստած, ծխում էր Բիծու մոռացած ծխամորճը, իսկ նրա ոտքերին փաթաթված քնել էր Կարախանը, սարալանջի անտառից գայլի ոռնոց լսվեց: Տիրոջը գետնին տապալելով, Կարախանը ծառս եղավ պառկած տեղից և, կյանքում առաջին անգամ, մռնչաց: Դրանից հետո այդ կողմերում գայլեր ընդհանրապես չեն երևացել, իսկ գյուղի աքաղաղները սկսեցին ծուղրուղու կանչել կիսաձայն և կակազելով...

Թվում էր, ապագան պարզ է. Բոլշն ու Կարախանը պետք է ծառայության անցնեին սահմանապահ զորքերում և գերազանցեին Կարացուպայի** և նրա Ինգուս շան նվաճումները, բայց ճակատագրի թմբուկները այլ բան ասացին...

Գարնանային մի անձրևոտ առավոտ, գյուղի մեղվապահը իր մեղվանոցի եզրին արջի դեռ տաք դիակ գտավ: Արջի կոկորդից աքցանի նման կառչած, ամբողջովին արյունլվա և կոտրտված կողոսկրերով, ընկած էր Կարախանը. Նրա խամրող աչքերը ատելություն էին ճառագում: Հանկարծ հայացքը պայծառացավ, Կարախանը բաց թողեց արջի կոկորդը, լիզեց ծնկի իջած Բոլշի ձեռքը և աչքերը փակեց...

Թաք ծառից վերև, անտառին չհասած, թարմ հողաթմբի մոտ նստած էր Բոլշը: Սաստկացող քամին ալեկոծում էր նրա սպիտակող մազերն ու մորուքը, իսկ դարավոր անտառի խորքից հնչում էին ճակատագրի թմբուկները. ավետելով տխուր և ծանձրալի օրեր:

*Լավուազիե- ֆրանսիացի գիտնական

* *Կարացուպա- խորհրդային սահմանապահ

ԿԱՅԱՑԱՎ

Վերջապես, երկար սպասումներից հետո, մայրամուտից առաջ, բնության գրկում կայացավ Ազգային Բրոունյան Շարժում (ԱԲՇ) կուսակցության հիմնադիր ժողովը: Շարժման ինտենսիվությունը երկար ժամանակ թույլ չէր տալիս ժողովը սկսել.*

Միայն երեկոյան, ջերմաստիճանի անկման հետ, երբ նվազեց մասնակիցների միջին արագությունը, բացման խոսքով հանդես եկավ համընթաց շարժման հին ջատագով Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանը: Համառոտ ներածական խոսքից հետո, երբ ներկաների համար պարզ դարձավ ազգի վիճակը և իրենց կարգավիճակը, Քրիստափորիչը ցույց տվեց պայծառ ուղին Բրոունյան շարժումը: Սակայն այդ մասին հետո: Պատահակա՞ն էր արդյոք ԱԲՇ ծագումը Այո, պատահական էր, քանզի պատահականության գաղափարն էլ հենց հանդիսանում է ուսմունքի հիմնաքարը· Ամեն ԱԲՇ-ուկ պարտավոր է կյանքում (թե անձնական, թե հասարակական) ընդունել և իրագործել միայն պատահական որոշումներ, որպեսզի հետագայում, նրա թոռներն անիծեն ոչ թե իրենց պապին, այլ ճակատագիրը: Դժվար խնդիր է... Հատկապես շատ են խանգարում այնպիսի իրենց դարն ապրած հասկացություններ, ինչպիսիք են կյանքի փորձն ու «առողջ» տրամաբանությունը: Դրանցից ազատվելու համար սկսնակ ԱԲՇ-ուկին կօգնի պատահական որոշումների գրպանի գեներատորը: «Այ Բի էմ» համատեղելի, վայրկյանում քսան միլիոն պատահական որոշում կայացնող այդ հրաշքը ստեղծված է անձամբ Քրիստափորիչի և նրա հետ նույն կալանավայրում եղած մի շարք պատկառազդու մտածողների ձեռքով:

Համագումարը բնականոն ձևով վերածվեց գեներատորի շնորհանդեսի, քանզի նրան հանձնարարվեց ժողովի հետագա վարումը: Ընտրվեցին ԱԲՇ-ի չորս ատենապետ, վեց ատենակալ, տասներկու մեծ և փոքր մագիստրոս: Որոշում ընդունվեց կուսակցություն անդամագրվելու համար դիմողներին կշռել: Բալային ցենզ որոշվեց. տղամարդիկ 70 + - 30կգ, կանայք 60 + - 20կգ: Գաուսի բաշխումը չպղծելու համար քաշային ցենզով չանցնող դիմողների հարցը որոշվեց դնել համաժողովրդական քննարկման:

ԱԲՇ տնտեսական ծրագրում հարմոնիկ կերպով միահյուսվել էին զարգացած սոցիալիզմի և ճապոնական սամուրայների «Բուսիդո» կոդեքսի գաղափարները: Հրաշալի լուծում առաջարկվեց կոնյակի

* ԱԲՇ - Ազգային Բրոունյան շարժում, դարի հիմնական կուսակցությունը

գործարանի և վառելիքաէներգետիկ համակարգի շրջանակներում գոյություն ունեցող պրոբլեմների ոլորտում կոնյակ-բենզին համասեռ խառնուրդի արտադրման և արտահանման ձևով: Դրամի արժեզրկումը դադարեցնելու նպատակով որոշվեց դիմել համապատասխան ատյաններ, մարմնավաճառության հետ համատեղ ժամանակավորապես թույլատրել ստրկավաճառությունը: Բյուրականի աստղադիտարանի հետ համատեղ կառավարությանն առաջարկվեց կատարել գալակտիկ և մետագալակտիկ օբյեկտների աստղերի և միգամածությունների սեփականաշնորհում հաշվի առնելով հեռավորությունն ու զարգացման փուլը:

Ժողովի վերջում բոլոր մասնակիցները հոտընկայս երգեցին կուսակցության հիմնը «Քա դե եսի՞մ, եսիմ, եսիմ...»:

Փակման խոսքում Քրիստափորիչը խոստացավ մի օր նորից հավաքվել:

ԸՆԿՃԱԽՏ

Խորն ու հին են ընկճախտի արմատները հայ իրականության մեջ: Փոքր Միհրի Ագռավաքար մտնելը, Մարոյի և Անուշի ժայռից ներքև ցատկելը, Արա Գեղեցիկի տվայտանքները...
Մ՞ր մեկը հիշեսՈ

Բանը բանից անցավ, և հայի աչքերը դարձան այնքան տխուր, որ նրանց անհուն խորության մեջ նայող այլազգիների մոտ էլ սկսեց ընկճախտ առաջանալ: Հիշենք թեկուզ Պետրոսյան-Սպասսկի, Կարպով-Կասպարով մրցամարտերը՝ (Կարդա - Օ~Ջալոյանց՝ «Ցայտնոտը աննկատ մոտեցավ, չնայած երևում էր հեռվից»): Իսկ ընկճախտը խորացավ և վերածվեց համամարդկային պանդեմիայի. Անկումային արվեստ և գրականություն, հեղափոխություններ, համաշխարհային պատերազմներ, միաձայն ընտրություններ . Մարդկությունը, ինչպես միշտ, վտանգի տակ էր:

Ժամանակակից գիտությունը առաջարկում էր վերականգնել Հայաստանի բլոկադան և պարտադրել բոլոր հայերին սև ակնոցներ կրել: Մշակույթի նախարարության հրահանգով, Նկարիչների միությանը կից, ստեղծվեց աշխատախումբ. ականավոր հայ գործիչների դիմանկարներին սև ակնոցներ ավելացնելու գծով: Մի խոսքով սկսվեց...

Այս օրհասական պահին, վերջին հայ մոհիկան Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանը, հանուն մեր փրկության, դավաճանեց «Իմաստունները չեն գրում» կարգախոսին և «Սույնով կբուժենք» հոդվածով հանդես եկավ ԱԲՇ «Նորից Բաբելոն» օրաթերթի էջերում: Ձեզ եմ ներկայացնում հատվածներ այդ պատմական հրապարակումից.

«Դեռ Հիպոկրատի և Ամիրդովլաթի ժամանակներից հայտնի է, որ հիվանդին պետք է բռնաբարել անկողնում, քանզի եթե վեր կացավ, նա քեզ կբռնաբարի Ուրեմն խեղդենք ընկճախտը բարուրում:

Ձեզ եմ ներկայացնում մի հին դեղամիջոց և դրա կիրառման ժամանակակից ձևը: Ինչ-որ հրաշքով, Իջևանից բերել ես տալիս 3 լիտր հոնի օղի: Խմում ես այնքան, որ մատնահետքերդ փոխվեն: Գործողությունը պետք է կատարվի ՆԳՆ փորձագիտական լաբորատորիայում, որևէ սպայի աջալուրջ հսկողության տակ: Յուրաքանչյուր 0,5 լիտրը մեկ կատարվում է մատնահետքերի օպերատիվ ստուգում: Մատնահետքի փոխվելուն պես դու արդեն առողջ ես, քանի որ դա արդեն դու չես: Հետագա հսկողությունը հանձնարարվում է թաղային տեսուչին: Ընկճախտի ախտանշանների երևալուն պես (տխուր ժպիտ,

բողոք էլեկտրաէներգիայի սակագներից) խորհուրդ է տրվում բուժումը կրկնել»:

Հանճարեղը միշտ պարզ է լինում. Ամեն պարզը չէ, որ հանճարեղ է: Եթե ասվածը ձեզ համար պարզ է, հոտնկայս խմենք հանճարեղ մարդու Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանի կենացը:

ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԸ

«Մի վնասիր»
ՀԻՊՈԿՐԱՏ

Վաղուց հայտնի է, որ հոնի օղու բացակայության պայմաններում ժամանակակից բժշկությունն անզոր է ընկճախտի դեմ: Հակառակ դրան, էդիպի կոմպլեքսի գծով ՀՀ առողջապահության փոխնախարար պրն Աթարենցը «ԱՐ» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարեց, որ «ընկճախտի առաջին նշանների հայտնվելու դեպքում դրական արդյունքի է հասցնում նաև ցորենի օղին: Այն պետք է ընդունել վաղ առավոտյան, երկու թեյի բաժակի չափ և ոչինչ չուտել»: Ընդ որում, փոխնախարարը ընկճախտի առաջին նշաններ է համարում մարդու ժպիտի հազվագյուտ և հիմարավուն դառնալը: Բայց նախ. դա ոչ թե առաջին նշաններն են, այլ վերջին, ու ոչ թե ընկճախտի, այլ մենինգիտի, և ընդհանրապես, հաղորդումը դիտելուց հետո հարց է առաջանում, փոխնախարարը Հիպոկրատի երդում տվե՞ լ է, թե՞ ոչ:

Ցորենի օղին, ինչպես ցանկացած այլ դեղամիջոց, արդյունավետ է միայն նորմավորված կիրառման դեպքում, իսկ դրա խախտումը բերում է այնպիսի այլանդակ երևույթների, ինչպիսիք են ալկոհոլային կախվածությունը, սպիտակ տենդը և բոսորագույն մղձավանջները: Նույնիսկ կալի եզի առողջություն ունեցող տղամարդը, մեկ ամիս նման «բուժում» անցկացնելով, կարող է բոսորագույն մղձավանջներ ունենալ, և եթե սպիտակ տենդը դեռ տանելի է (մարդն ուղղակի պայքարում է իր վրայով վազվզող երևակայական առնետների և միջատների դեմ), ապա բոսորագույն մղձավանջից փրկություն չկա, որովհետև մարդու միակ ցանկությունն է դառնում թռչել դեպի արևը, ընդ որում՝ մոտակա պատուհանից (հիշիր՝ «Դեպի արևն էին գնում ամբոխները խելագարված...»):

Այս պարզ ճշմարտությունը վաղուց բացահայտվել էր ԱԲԾ «Ճշմարտություն կամ մահ» ֆրակցիայի անդամներ Logus-ի և Բիձու կողմից՝ թթի և ցորենի օղիների համեմատական փորձարկումների ժամանակ Երբ մենք դեպի արևը թռչելու փորձը կանխելու նպատակով, սեղանին էինք գամել այդ երկու քաջերին, Քրիստափորիչն* ասաց իր պատմական խոսքերը. «Գիտելիք չունեցողները դժվարություններ էլ չունեն, Օ ջա՜լ, սոդայաջուր տուր այս անասուններին...»:

Հիրավի, տգիտությունը սարսափելի չարիք է և դեռ շատ կվնասի մարդկությանը ընդհանրապես և մի բուռ ազգիս՝ մասնավորապես:

Հասկանալի է, դիլետանտների ժամանակն է եկել, բայց ինչպե՞ս կարելի է էդիպի կոմպլեքսի գծով առողջապահության փոխնախարարի

*Քրիստափորիչ- ԱԲԾ հոգևոր հայր և անփոխարինելի առաջնորդ:

պաշտոնը վստահել մի մարդու, որ նախկինում եղել է գյուղատնտեսության փոխնախարար՝ ագրոարդյունաբերական կոմպլեքսի գծով... Ժամանակը չէ՞ արդյոք, որ այդպիսի պրպտող խառնվածքի տեր մարդը զբաղվի կոմպլեքս թվերի անալիզով որևէ գաղութում: Դեպի արևը քանի՞ թռիչք պիտի ընդհատվի, որպեսզի բոլորս գիտակցենք, որ ազգս կոտորվում է... Բոլորիս է հայտնի, որ կայծակը թզուկներին չի խփում, և բոլորովին պատահաբար չէ «Տարերային անարխիստի հիշատակարան»-ում Քրիստափորիչը գրել. «Ամենավեհ այրերը կմեռնեն օղուց»: Ի վերջո, Գվարդիան կթռչի դեպի արևը, բայց ինչու՞ արագացնել այդ գործընթացը, այն էլ այդքան անմարդկային ձևով: Ցանկացած հարցի պատասխան որևէ գիտելիքի առկայություն է պահանջում: Դա շատ տխուր փաստ է: Ինձ մնում է հիշեցնել փոխնախարարին բժշկապետի խոսքերը՝ «Մի վնասիր...»:

ՄԵԿՈՒՍԻՉԸ

Քաղաքակրթությունը առաջ է շարժվում, մեծացնելով այն գործողությունների թիվը, որոնք մենք կատարում ենք առանց մտածելու:
ԱԼՖՐԵԴ ՆՈՐԹ ՈՒԱՅԹՀԵԴ

Գիտության պատմությունը հիշում է բազմաթիվ դեպքեր, երբ մի խնդրի ուսումնասիրությունն անսպասելիորեն հանգեցրել է մեկ այլ խնդրի լուծման: Չեմ կարող չնշել էպիլեպսիայի (ընկնավորություն) բուժմանն ուղղված մի առաջնակարգ հետազոտություն: Արևմտյան գիտության և բժշկության մի խումբ կառկառուն գործիչներ փորձում էին հիվանդների թափառող նյարդի էլեկտրական գրգռման միջոցով դադարեցնել էպիլեպտիկ նոպաները: Փորձը բացասական արդյունք ունեցավ. էպիլեպսիան չնահանջեց...

Այնուամենայնիվ, հետազոտող խմբի ամենաաչալուրջ գիտնականը (ազգանունը չեմ հիշում, բայց ծագումով, կարծեմ, հայ էր) նկատեց, որ հոսանքահարվածների մոտ դիտվում է, ոչնչով չբացատրվող, բարձր տրամադրություն: Փաստորեն, անսպասելի կերպով բուժամիջոց գտնվեց մարդկությանը սպառնացող մեծագույն չարիքներից մեկի ընկճախտի դեմ (դեպրեսիա):

Օբյեկտիվության համար պետք է նշեմ, որ մարդու օրգանիզմի վրա էլեկտրական հոսանքի ազդեցությանը վերաբերող Մեսմերի հայտնի փորձերը հաջողությամբ շարունակվել են Հայաստանում 93-94 թթ.: Այդ տարիներին էր, որ բազմաթիվ շենքերի էլեկտրական սնուցման եռաֆազ կաբելների գերբեռնվածության պատճառով հոսանքատարներից որևէ մեկի շարքից դուրս գալիս տվյալ գծից օգտվող բնակիչները սեփական նախաձեռնությամբ անցում էին կատարում հարևան գծին և երբեմն սեփական մաշկի վրա զգում 220 վոլտ լարման զորությունը: Հաճախակի հոսանքահարվածները նույնիսկ նոր անուն էին ստացել «ֆազը գցած» կամ «ֆազը փախած» և, որպես կանոն, մնացած քաղաքացիներից տարբերվում էին արտակարգ բարձր տրամադրությամբ: Փաստորեն բժշկական խոշորագույն հայտնագործության համահեղինակ են դարձել մարդիկ, ովքեր ուղղակի դուրս էին եկել շենքի շքամուտք հոսանքի «ֆազը փոխելու»: Ընկճախտի մինչ այժմ հայտնի միակ դեղամիջոց իջևանյան հոնի օղին ստացավ հզոր փոխարինող ի դեմս բարձր լարման էլեկտրական հոսանքի: Հասկանալի է, որ համատեղ կիրառումը ոչ միայն չի բացառվում, այլև կարող է արմատականորեն վերացնել ընկճախտը (ինչպես ասում են «... պլյուս էլեկտրիֆիկացիա): Ներից մարդկությունը

հաղթանակ տարավ ինքն իր նկատմամբ: Բայց մնում է մի հարց. այն է. «Ինչո՞ւ եմ այսքան տխուր»: Ես տխուր եմ, քանզի ճանաչել եմ մի մարդու, որի վրա երկու դեղամիջոցն էլ չէր ազդում: Ու ես պետք է պատմեմ վարպետ Հակոբի մասին, ում անունը բոլորովին էլ Հակոբ չէր...

Նրա անունն էր Ուռգավկոս: Դա УРА! ГАГАРИН В КОСМОСЕ! արտահայտության հապավումն է: Հուսով եմ, մեկնաբանություններն ավելորդ են. նման անուն ունեցողը չէր կարող որակյալ ճակատագիր ունենալ .. Ուռգավկոսը սևագործ բանվոր էր գիտա-արտադրական հիմա արդեն չեմ հիշում ինչում: Հիմնարկի կոլեկտիվը աշխատանքային առաջին օրից համոզվելով, որ ոգելից ոչ մի խմիչք, ներառյալ մաքուր սպիրտը, Ուռգավկոսի վրա չի ազդում, խորագույն հարգանքով լցվեց այդ փոքրամարմին, ուրիշ ոչնչով աչքի չընկնող մարդու հանդեպ և վերանվանեց նրան վարպետ Հակոբ: Բայց գլխավոր զարմանքը առջևում էր...

Այդ հիմնարկը հզոր լազեր ուներ, որն ինձ որպես գործիք շատ էր հետաքրքրում, ուստի ես հաճախ հյուրընկալվում էի այնտեղ: Հերթական այցելության ժամանակ էլ ծանոթացա վարպետ Հակոբի հետ և մեխհալցնելիքի ստեղծման ականատեսը եղա...

Հասկանալի է, դատարկ ձեռքով հյուր գնալը անհարմար է: Այդ տարի իմ հետազոտություններն ուղղված էին ճակնդեղի սպիրտից ցորենի սպիրտի ստացմանը և խոստումնալից արդյունքներ էին տալիս, ուստի ես երբեք տղաների մոտ դատարկ ձեռքով չէի գնում, ու պետք է խոստովանեմ, որ այդպես էլ չպարզեցի, թե լազերը ինչ ուղղությամբ է ճառագայթում..

Մի հրաշք երեկո, երգ ու պարից արդեն հոգնած, նստած էինք արհեստանոցում և դիտարկում էինք մի ֆանտաստիկ կառույց, որ մեր աչքերի առջև ստեղծվում էր վարպետ Հակոբի ձեռքերով: Փաստացի դա մի հսկա տրանսֆորմատոր էր, որի երկրորդային փաթույթ էր հանդիսանում պղնձե հաստ խողովակը: Մեր այն հարցին, թե ինչ է ստեղծվածը, Հակոբը հակիրճ պատասխանեց. «Մեխհալցնելիք»: Իմ շրջապատում ընդունված չէ հարցերը կրկնել, ուստի համբերատար սպասեցինք փորձարկմանը:

Հակոբը վերցրեց մի մեծ մեխ և տեղադրեց այն փաթույթի ազատ ծայրերին կամրջակի ձևով: Հոսանքը միացնելուն պես մեխը հալվեց ու թափվեց, բետոնե հատակին: Հիմա կարելի է տալ երկրորդ հարցը.

- Ինչի՞ համար է սա, Հակոբ:

- Դե կարող ա պետք ըլնի մեխ հալացնել... Էս ա, սարքել եմ...

Այդ օրից տարիներ են անցել: Անձամբ ինձ երբեք պետք չի եղել մեխ հալեցնել, նույնիսկ ամենադաժան օրերին: Իսկ թե կոնկրետ որն էր Հակոբի մեծությունը, դուք հիմա կիմանաք: Մեր այն հարցին, թե որքան է առաջնային լարումը 220 , թե՞ 380 վոլտ, նա ուղղակի ձեռքը սեղմեց հոսանքի բաց լարերին: Բոլորս վեր թռանք ու վրա հասանք փրկելու... Իսկ

Հակոբը բոլորովին փրկվելու միտք չուներ. ձեռքը հոսանքից վերցրեց, հաղորդականությունը մեծացնելու համար թքեց մատներին և, դեմքի կենտրոնացած արտահայտությամբ, նորից միացավ բարձրավոլտ էլեկտրական հոսանքին.. Հրաշք էր, ընդ որում շարունակվող:

- Տղեք, 380 ա:
- Ի՞նչ իմացար, վարպետ Հակոբ:
- Մզզացնում ա:

- - - - - - - - - - - - - - - - - - -

Աշխարհի առաջավոր մտածողները հզոր դեղամիջոց գտան ընկճախտի դեմ. Ես հրաժարվում եմ ընդունել այն, որպես դարի խոշորագույն հայտնագործություն, որովհետև ընկճախտի հզոր ճիրաններից կփրկվի ամբողջ մարդկությունը, բացառությամբ վարպետ Հակոբի, իսկ մարդկության երջանկությունը, մեկ մարդու բացառությամբ, արդեն երջանկություն չէ... Ինձ սփոփում է միայն այն, որ Իջևանում աճած հոնի օղին, որպես ընկճախտի այլընտրանքային դեղամիջոց, այնուամենայնիվ, մի քիչ կմեղմի վարպետ Հակոբի վիշտը, երբ նա կհասկանա, որ մեխհալցնելիքը, իրենից բացի, ոչ ոքի պետք չէ..

«ՔՐԻՍՏԱՓՈՐԻՉ - 50»

(Հոբելյանական)

Աշխարհի առաջադեմ մարդկությունը այս օրերին նշում է իր պայծառագույն դեմքերից մեկի. խոր և անընդհատ մտածող, ԱԲՇ հոգևոր հայր և անփոխարինելի առաջնորդ, մարդկության հավերժ հերթապահ փրկարար, անխորտակելի հածանավ Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանի 50 տարին: Հաշվի առնելով այն փաստը, որ նշված ժամանակահատվածի 1/3-ը հոբելյարն անցկացրել է քնած, 13 տարի նստած, իսկ մինչև 16 տարեկանը հանցավոր վարչակազմի կողմից համարվել է անչափահաս և գտնվել ինֆորմացիոն բլոկադայի մեջ, շշմել կարելի է, թե այդ ե՞րբ նա հասցրեց վերահայտնագործել շարժումը...

Վաղ մանկության տարիներին, երբ Քրիստափորիչը պատկերացում անգամ չուներ մոլեկուլների շարժման միջին արագության մասին, նա իր ինքնաշեն պարսատիկը պահում էր սառնարանում կանխելով ռեզինի չորացումը, իսկ թե ինչ ճշտությամբ էր կրակում այդ պարսատիկից գետառի առնետները գիտեն· Դեռ մինչև գիտելիքներ ունենալը, բնական գիտությունների նկատմամբ ձգտումը խեղդում էր փոքրիկ Վլադիմիրին, և նույնիսկ սերը ընտանի կենդանիների նկատմամբ անկարող էր կասեցնել նրա հետազոտական աշխատանքները էքսպերիմենտալ կենսաբանության ոլորտում: Շիլաչիի տարիքով մարդիկ հիշում են, թե ինչպես մի գանգրահեր մանուկ գտավ մանանեխ-պղպեղ ճիշտ հարաբերակցությունը. չափելով կատվի ցատկերի մեծությունները, այն կատվի, որի հետանցքին նա քսում էր հետազոտվող խառնուրդները: Հենց այդ ժամանակ էլ նա ստացավ իր առաջին պատիժը և առաջին վիրավորանքը «սադիստ»: Տարիներ անցան, և «սադիստին» գումարվեցին «ավազակ», «բանդիտ», «տեռորիստ», «մոլագար» իրենց համապատասխան պատժամիջոցներով: Այսպես էր կոփվում պողպատը...

Այսօրվա նման հիշում եմ մեր առաջին հանդիպումը «Կռունկ» գարեջրատանը, երբ մենք Բիձու հետ փորձում էինք Ռ.Զահրումյանին մտցնել սեղանի տակ, իսկ այնտեղից լսվեց. «զբաղված է»: Ինձ թվաց, թե սեղանի տակից դուրս եկավ փյունիկ թռչունը, ուղղեց փետուրները և հարցրեց «Քաջեր, ո՞ր գյուղի յաթրջին եք գերադասում այս հեքիաթային պահին»: Եթե մի բանի համար ես պետք է շնորհակալ լինեմ ճակատագրից, դա նման մարդկանց հետ կյանքում հանդիպելն ու համատեղ գործելն է, մարդիկ, որոնք հեքիաթը իրականություն դարձրին և հակառակը:

Պատմության մեջ շատերին է հաջողվել ուսմունք հորինել, ունենալ

աշակերտներ և հետևորդներ, սակայն ստեղծել դարի հիմնական կուսակցությունը ԱԲՇ-ն և վերականգնել Բրոունյան շարժումը որպես ապրելակերպ և գաղափարախոսություն, կարողացավ միայն մեկը Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանը:

Դժվար, և նույնիսկ մի քիչ տարօրինակ է հետագա աշխատանքային հաջողություններ ցանկանալ, եթե խոսքը գնում է, ասենք, Նյուտոնի կամ Մոցարտի մասին: Նույնը Քրիստափորիչի առումով: Ուրեմն երկար կյանք և քաջ առողջություն ցանկանանք մեր շարժման հնոցապանին Նա աշխարհ եկավ մի անձրևոտ գիշեր: Առաջին բանը, որ տեսավ կյանքում կայծակն էր, իսկ այդ կայծակին ուղեկցող որոտը երկար թափառում էր քաղաքի դատարկ փողոցներով և ավետում «Մարդի~կ, Աստված մտածող է ուղարկել»...

ՅԱՂԱԳՍ ԻՆՔՆԱՍՊԱՆԻ

70-ական թվականների վիճակագրությունը ցույց տվեց, որ բնակչության 1000 շնչին ընկնող ինքնասպանների թվով աշխարհում առաջին տեղն են գրավում Ավստրիան և Հունգարիան, բացահայտորեն գերազանցելով բոլոր մյուս երկրներին:

Աշխարհի խոշորագույն գիտնականները ոչ մի բացատրություն չէին կարողանում գտնել այս արտառոց փաստին: Ամենամանրակրկիտ ուսումնասիրություններն ու վերլուծությունները միաձայն պնդում էին դա անհնարին է, բայց ինչը կարող է փաստից ավելի համոզիչ լինել...

Հետադարձ հայացք նետելով կարող եմ ասել, որ սխալը ռազմավարական էր, խնդրի լուծումը ընկած էր զգայական ոլորտում: Ահավոր կյանք էր տարիներն անցնում էին, պրոբլեմը մնում: Ժամանակը հանճար էր պահանջում, իսկ կանայք ծնում էին ինչ-որ ախմախների· Իմ քոստ գոյությունը նորից անտանելի դարձավ և ես ստիպված էի հրավիրել ԱԲՇ «Բոլոր պրոբլեմների վերացման» ֆրակցիայի արտահերթ ընդհատակյա նիստ «Փրկիր և կփրկվես» օրակարգով. Արդյունքները շատ տխուր էին. Նիստի հիմնական եզրակացությունն այն էր, որ վերջին հանդիպումից հետո անցած ժամանակամիջոցում Ֆրակցիայի բոլոր անդամներն ավելի են հիմարացել: Մի ելք էր մնում դիմել մեր հույս և հավատ Վլադիմիր Քրիստափորի Դելակրուայանին: Ահա դիմումը. «Ուսուցիչ, ներիր նվաստ հետնորդներիդ, որ հանդգնում են ընդհատել քո վաղուց վաստակած անժամկետ արձակուրդը... Դու, որ փրկեցիր մեզ տրամաբանության և առողջ բանականության անջուր անապատում, դուրս բերեցիր մտածելու և գործելու գարշահոտ ճահճից, ցույց տվեցիր պայծառ ապագան և բացատրեցիր, թե ինչու է նա անհասանելի, կատարիր մի սխրանք ևս փրկիր Ավստրիան և Հունգարիան: Գտիր հանելուկային երևույթի բանալին»:

Երկրորդ անգամ խնդրելու կարիք չեղավ: Քրիստափորիչը պահանջեց 1 արկղ Վեդու արտադրության ցորենի օղի, Մոցարտի 30-րդ սիմֆոնիան, «Դանուբի ալիքները», «Կապիտան Թենքեշ» բազմասերիանոցը և փակվեց «օղորմածիկից» ժառանգություն ստացած բնակարանում: Հետագայում լուր տարածվեց, թե նա սկզբում օղին է խմել, իբր թե հարևանները լսել են, թե ինչպես է գիշերը բղավում. «Մոցա՜րտ, ներիր ինձ...» և «Սրիկաներ, որտե՞ղ է Յակով Բուգան»: Հերյուրանք է այդ բոլորը. օղին միասին ենք խմել, պրոբլեմի լուծումից հետո:

Գիշերվա ժամը չորսն էր, երբ «օղորմածիկի» տան շքամուտքում հերթապահող եռյակը հավաքի հրաման տարածեց և մենք վազեցինք:

Լուսաբացի առաջին ճաճանչների հետ պատշգամբ ելավ հոգնած Քրիստափորիչը և ազդարարեց. «Խաշը պատրաստ է, -քաջեր, վերև բարձրացեք»:

Անհամբերությունից դողում էինք, մինչև նա լցրեց բաժակը, նայեց ծագող արևին և խոր հոգոց հանելով ասաց. «Մասսայական ինքնասպանությունների պատճառը Դանուբ գետն է, ավելի շուտ այդ գետի չտեսնված գեղեցկությունը: Հարմար կամրջից նրա ալիքների ծփանքը դիտողը, եթե թեկուզ մի կոպեկի գեղեցիկի զգացում ունի, չի կարող ներքև չնետվել: Ժամանակին մեր Լոռու ձորն էլ է նույն հմայքն ունեցել. հիշենք թեկուզ Մարոյին և Անուշին... Հուսով եմ, բոլորիդ համար պարզ է, որ գյուղացի աղջիկը չի կարող խելագարվել, ինքնասպանություն գործել առավել ևս, դա տեսականորեն բացառվում է, նա ժամանակ չունի, պատճառը Դեբեդի գեղեցկությունն է Ավստրո-հունգարական խնդրի լուծումը ևս բավական հստակ եմ տեսնում առափնյա բոլոր բնակավայրերի քաղաքային աղբը, մեր գետառի օրինակով, լցնել Դանուբ, որպեսզի նայողը, վատագույն դեպքում, փսխի կամրջից ներքև և հետագայում ընդհանրապես խուսափի գետին մոտենալուց:

Անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր»*. Ի~նչ քեֆ սկսվեց . Ո՞վ ասաց, թե խաշի ժամանակ կենացներ չեն ասվում, Դանուբը նետեք այդ թշվառականին:

*Ներող եղեք, մեր կարողացածն այսքան էր

ՀԱՄԱՌՈՏ ՀՐԱՏԱՊ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

... Ու խելահեղ մի գրոհով
Ամբիոնը գրավեցին...
Թերթերից

Ափսոս... հազիվ էի սկսել ինչ-որ բան հասկանալ: Թվում էր, թե ամեն ինչ պարզ է. պետք է բացել ևս 600 ակնոցի խանութ, և տնտեսությունը կկարգավորվի, բայց ավաղ... Ամբողջ դժվարությունն այն է, որ մեր թշնամիներին աջակցում է բնությունը. մոլիբդենն իրեն չարդարացրեց, ջերմուկը, մի շշից ավելի խմելու դեպքում, առողջ օրգանիզմը դարձնում է հիվանդ, իսկ հիվանդը առողջ, ասել կուզի ամեն շշից առաջ պետք է հետազոտվել, իսկ դա ջերմուկից շատ ավելի թանկ է նստում... Ազգիս զգալի մասն այս հակասությանը չդիմացավ և գաղթեց: Եթե ավելի զգույշ արտահայտվեմ. «Արտագաղթը գերազանցեց ներգաղթին»: Գործին մեծապես աջակցեցին այս պահին մեր բարեկամ պարսիկները. այնքան էժան տոմատ բերեցին, որ փաստորեն հիմնավորապես խաթարեցին Աշխարհը պոմիդորով հեղեղելու մեր ռազմավարական ծրագիրը: Խորագույն ցասումով մենք շրջադարձ կատարեցինք բանջարանոցներից դեպի այգիները, բայց պարզվեց, որ մարդկությունը ոչ միայն չի ճանաչում Շալախ ծիրանը, այլև չի ուզում ճանաչել:

Բնությունն ու թշնամիները ջհանդամը, ներքին պառակտում կա մեր շարքերում... Ոչ մի կերպ չենք կարողանում սկսել նավթի արդյունահանումը, քանի որ հատկացվող միջոցները ծախսվում են ծրագրի կազմմանն ու կատարելագործմանը: Տասը տարուց ավելի է անցել այն պատմական օրից, երբ երկու սերնդից երկար ժամանակ Հայաստանից բացակայած, սարսափելի սրված պարզատեսությամբ մի կին, հենց ինքնաթիռից իջնելիս նայեց շուրջը և ասաց. «Այստեղ նավթ կա...»: Թվում էր, թե անհապաղ պետք է գործի անցնել, բայց մոտակա միտինգում մի սրիկա բարբաջեց, թե. «... Լեռնային երկիր ենք... օրումեջ հրաբուխ է լինում... նավթին հասնելու համար պետք է լրացուցիչ 1,5-2 կմ բազալտ ծակենք»: Նշեմ, որ իսկական դեմագոգը երբեք չի ստում, նա ուղղակի ասում է ճշմարտության այն շահեկան մասը, որը համընկնում է իր կուսակցության ծրագրին... 1,5-2 կմ բազալտ ծակելու մասին լսելով, միտինգի մասնակիցներից շատերը տխրեցին, և արտագաղթը նորից գերազանցեց ներգաղթին, իսկ ժողովրդի մեջ բամբասանքներ տարածվեցին, թե նավթ չկա... Թիկունքին հասցված հարվածից անակնկալի եկած, միառժամանակ մենք ամրացնում էինք մեր միասնությունը և արտագաղթը գերիշխում էր միայն այն պարզ պատճառով, որ ներգաղթ չկար: Հերթական միտինգի ժամանակ որոշվեց,

որ շահելու ենք ամեն դեպքում. եթե նավթի փոխարեն տաք ջուր ժայթքի բաղաքը կջեռուցենք: Հեռու չգնալու համար որոշվեց հորատանցքը փորել Ազատության հրապարակում և առաջինը ջեռուցել Ազգային Օպերան Այստեղ «կանաչները» փորձեցին վախեցնել էկոլոգիական աղետներով, բայց նրանց ծեծեցին: Տեսնելով, որ եռագույնները ծեծում են միագույններին, «երկնագույնները» հետաձգեցին իրենց «Ոչ մի տղամարդ հակառակ սեռին» կարգախոսով միտինգը, որի անցկացման թույլտվությունը ստացել էին Հոլանդիայից: Ներքին թշնամուն ծեծելուց հետո, նախաձեռնող խումբը ձեռնամուխ եղավ ծրագրի նախապատրաստմանը և կատարելագործմանը: Թանաքը դեռ չչորացած, պարզվեց, որ խնդիրն ավելի է դժվարացել. բացի 1,5-2 կմ բազալտը, պետք է ծակել նաև 20 սմ բետոն. Ազատության հրապարակն ամբողջովին ծածկվել էր սրճարաններով... Այս հարվածին նախագծի հեղինակը չդիմացավ և ընտրվեց Ազգային ժողովի անդամ, իսկ նախագիծը կատարելագործողն ու լրամշակողը քոչեցին: Եվ հիմա ես, որ մնացել եմ համարյա մենակ, հորատանցքի համար հարմար հողակտորի որոնումներով, մտամոլոր շրջում եմ Ազգային Օպերայի շրջակայքում ու չեմ դադարում կրկնել. «Դա՞ռը բնություն, պառակտվա՞ծ ժողովուրդ, հավե՞րժ կոկա-կոլա...»:

Իսկ արտագաղթը նորից գերազանցում է ներգաղթին...

ՇԵՐԵՓԻ ԱՍՊԵՏԸ

«ՄԵԾ ՆԱՎԻՆ ՄԵԾ ՏՈՐՊԵԴ»
Ռուսական ասացվածք

Տաղանդը, ի տարբերություն փողոցային երթևեկության, երբեք միակողմանի չի լինում: Դա կհաստատեն Longus-ի ոչ միայն ընկերները, այլ նաև թշնամիները: Ոչ ոք չի կարող ինձ առարկել, թե նրա գործունեության ոլորտներից որևէ մեկը կասեցրել է թռիչքները մյուս ոլորտներում: Զինակից, փրկարար, հաշվապահ, կակտուսագետ, մատռվակ, խոհարար միայն մասնագիտությունները և կոչումները թվարկելիս միշտ մի քանիսը մոռանում եմ: Անընդհատ շարժման մեջ գտնվող այդ վեհ անձնավորությունը, կարծես սեփական գոյությամբ, հաստատում է Ռուսոյի* այն միտքը, թե լավ է մաշվել, քան ժանգոտել: Երբ ժամանակը չի բավականացնում, նա գերադասում է գործել, առանց մտածելու, ի տարբերություն նրա alter ego** Բիձու, որը նման դեպքերում գերադասում է մտածել, առանց գործելու: Եվ Longus-ը ճիշտ է, քանզի «սկզբում գործն էր, հետո սկսեցին մտածել...»: Վաղ առավոտյան 2մ հասակ ունենալով, երեկոյան, օրվա հոգսերից ճնշված, նա դառնում է 1մ 98սմ, բայց միշտ իր մեջ ուժ է գտնում մյուս օրը նույնպես 2մ-ից սկսելու: Ինքս բարձրահասակ լինելով ես միշտ թերահավատորեն էի վերաբերվում երկարների մտավոր կարողություններին, բացատրելով դա այն պարզ պատճառով, որ սրտից համեմատաբար հեռու գտնվող ուղեղը չի կարող նորմալ սնուցվել, հետևաբար արժեքավոր մտքեր ունենալ: Ներկայումս ես համոզված եմ, որ Բնության հնարավորություններն անսահման են բարձրահասակները կարող են մտածել, իսկ փոքրամարմինները մեծ գաղափարներ ունենալ: Սա ապացուցում է կյանքի փորձը, որը, ինչպես հայտնի է, բացարձակ ճշմարտություն է. իր սխալների միջանցքում տեղակայված:

Մեր ծանոթությունը կայացավ Բիձու ռանչոյում, ուր երկուսս էլ հրավիրված էինք թունավոր սնկեր հավաքելու և ոչնչացնելու մարդասիրական միջոցառմանը: Երբ ես հիացմունքս հայտնեցի Բիձուն այգու հրաշալի տեսքի, մասնավորապես մոլախոտերի բացակայության առիթով, նա ասաց, որ մոլախոտերը հավաքված են Longus-ի կողմից. խնջույքին ծառայեցնելու նպատակով: Ժամուկես անց մատուցվեցին տապակած կաչաղակներ կռոտնուկի և եղնջի գարնիրով: Ազնվորեն պետք է խոստովանեմ, որ մինչ այդ ինձ երբեք չէր հաջողվել նիրվանային հասնել

* ժան ժակ Ռուսո - ֆրանսիացի փիլիսոփա

** alter ego - երկրորդ «ես»

առանց Վեդու արտադրության ցորենի օղու կիրառման, իսկ Քրիստափորիչը* , որ մինչև խնջույքի սկսվելն անզգուշություն էր ունեցել ասելու, թե խորոված քառափը կիտրոնի հյութով, բավական հետաքրքիր ուտեստ է, համտեսումից հետո ապշահար նայեց Longus-ին և ասաց. «Մոցա՜ռտ, ներիր ինձ»: Խոհարարական արվեստից հեռու մարդկանց պետք է ասեմ, որ որակյալ սննդամթերքից համեղ ուտեստներ կարող է պատրաստել ամեն մի տնային տնտեսուհի: Ավելին որոշ մթերքներ նույնիսկ փչացնելն է դժվար, օրինակ բողկը: Longus-ի մեծությունը նաև այն է, որ նրա կողմից օգտագործվող շատ մթերքներ մարդկությունը համարել է թունավոր, ավելին. այդ նպատակով էլ օգտագործել է· Ստեղծել բարին չարից, վերադաստիարակել բոլոր աղվեսներին և ստիպել նրանց պահակային ծառայության անցնել հավաբներում սա է տաղանդների ուղին...

Երբեք չեմ մոռանա նրա անհամար գյուտերից մեկը, քանզի ինքս ներկա եմ եղել արարման գործընթացին: Դա տեղի ունեցավ ԱԲՇ «Նորից Բաբելոն» օրաթերթի խմբագրությունում: Համատեղ ուժերով թերթի հերթական համարը հանձնելուց հետո, բոլորս բարձրացանք շենքի կտուրը լուսաբացը դիմավորելու: Երբ պարզվեց, որ բաժակները մոռացել ենք վերցնել, Բիձեն պատրաստակամություն հայտնեց անմիջապես բերել, բայց, դատելով ձայներից նա աստիճաններով գլորվեց մինչև շքամուտք և այնտեղ քնեց: Դրությունն օրհասական էր արևը ծագում էր, և Longus-ի կողմից կատարվեց մի գյուտ, որ միայն հասկացողները կգնահատեն... Ահա այն.

Գյուտի առարկան կոկթեյլ

Գյուտի անվանումը «Անարյուն Մարիամ»

Նախատիպը «Արյունոտ Մերի» կոկթեյլ

Գյուտի համառոտ նկարագրությունը. միջուկը նախապես հեռացրած պոմիդորի մեջ լցվում է 100գ Վեդու արտադրության ցորենի օղի: Պոմիդորն օգտագործվում է խմելուց հետո հետուտեստի ձևով:

Առավելությունը նախատիպի համեմատ բաժակի, պատառաքաղի և ափսեների կարիք չկա:

Թերությունները (եթե կան) չի չխկում:

Հարգելի ընթերցող... Սա միայն մի դրվագ է «Գրավյալ տարածքների խոհարարական գրքույկ»-ից, որը պատրաստվում է տպագրության «Նորից Բաբելոն» հրատարակչության տպարանում և շուտով կներկայացվի քո ուշադրությանը· Համբերատար եղիր .

* Վլադիմիր Քրիստափորի Դելակրույան - ԱԲՇ (Ազգային Բրոունյան Շարժում) կուսակցության հոգևոր հայր և անփոխարինելի առաջնորդ·

ԽԱՏՈՒՏԻԿԻ ԳԻՆԻ

(Գրավյալ տարածքների խոհարարական գրքից)

Այս հոյակապ խմիչքը միաժամանակ էֆեկտիվ դեղամիջոց է հարբուխի և անցանկալի հղիության ժամանակ: Այն արժեքավոր է նաև նրանով, որ պատրաստվում է վաղ գարնանը, երբ մյուս խոտաբույսերը նոր-նոր են ծլում և դեռ պիտանի չեն գինի պատրաստելու համար:

Վաղ առավոտյան, քանի ցողը դեռ չի գոլորշացել, հավաքում եք 888 հատ խատուտիկ: Թեթևակի չորացնում եք հավաքածը ստվերում, միջանցիկ քամու ազդեցության տակ: Տերևները ճլորելուն պես պետք է սկսել ֆերմենտացիոն պրոցեսը: Դրա համար ճլորած տերևներով խատուտիկը պետք է թրջել և 3-5սմ հաստության շերտով դասավորել էմալապատ կաթսայի հատակին ու կափարիչը ծածկելով դնել արևի տակ: Մի քանի ժամ հետո, համոզվելով, որ ֆերմենտացված մասսան ունի խատուտիկին ոչ հատուկ, զզվելի հոտ, էմալապատ կաթսայի հետ միասին, նետեք այն աղբանոց: Մոտակա խանութից գնեք 2 շիշ Վեդու արտադրության ցորենի օղի: Հրավիրեք ձեր տուն Հին գվարդիայի տղաներից մեկնումեկին (ցանկալի է Օ՜Ջալոյանցին կամ Բիձուն) և չմոռանաք ասել, որ իր հետ բերի 1կգ թթու վարունգ: Երաժշտությունը և կանայք ըստ ճաշակի: Անուշ լինի:

ՏԽՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Դուք վախենու՞մ եք ապագայից:
- Ոչ, բայց անցյալը հիշելիս, երբեմն փշաքաղվում եմ:
Կուրտ Վոնեգուտ «Նախաճաշ չեմպիոնների համար»

Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում /իսկ վերջերս դա հաճախակի երեւույթ է դարձել/, այս փոքրիկ ողբերգությունը կատարվեց 1993թ ձմռանը. Այն ոչ մի կերպ չի կարող համեմատվել նույն ձմռանը տեղի ունեցած բազմաթիվ այլ աղետների հետ, բայց անպայման պետք է ներկայացվի ձեր ուշադրությանը, քանի որ չեմ հոգնի կրկնելով անցյալը հիշողի մեկ աչքն է կուրանում, իսկ մոռացողի երկու:

Թշվառականը, որի մասին պետք է պատմեմ, կրում էր Ժոռ անունը: Նկատած կլինեք, որ անունը հաճախ պարտավորեցնում է բոլոր ժոռերը խմում են եթե դրան գումարենք նաեւ այն, որ նրա երկու հնարավոր տատիկներից մեկը ռուս էր, հուսով եմ, ավելորդ կլինի նշել, որ Ժոռը հարբեցող էր: Մի ոչ այնքան գեղեցիկ օր, երկու խումհարների ճիշտ մեջտեղում, նա զգաց ինֆլյացիայի ամբողջ դաժանությունը եւ որոշեց շշերը հանձնելուց ստացված ամբողջ գումարը նվիրաբերել որեւէ մնայուն եւ արժեքավոր ապրանքի ձեռքբերմանը, որպեսզի մինչեւ խոր ծերություն նայի դրան եւ հիշի, որ ժամանակին ինչ-որ գումար է ունեցել: Մոտակա տոնավաճառում շատ արագ պարզվեց, որ ունեցած կապիտալը կարող է բավականացնել միայն դատարկ շշեր գնելուն, ընդ որում զգալիորեն ավելի քիչ, քան հանձնել էր. Միառժամանակ նա շփոթված շրջում էր առեւտրական շարքերով, իսկ ինֆլյացիոն պրոցեսը շարունակում էր խորանալ: Բայց ճակատագիրը երբեմն ժպտում է խիզախներին. հանկարծ Ժոռը տեսավ արտաքինից հղի կին հիշեցնող մի տղամարդու, որը ոչ մի կերպ չէր կարողանում իր դիմաց շարված ճտքավոր կոշիկներից գեթ մի զույգ վաճառել ֆանտաստիկ էժան գնով: Շուտով պարզվեց անհաջող բիզնեսի գաղտնիքը. բոլոր ճտքավոր կոշիկները աջ ոտքի համար էին... Ընթերցող, ինչ ասես Հայաստան չի եկել մարդասիրական օգնության հետ:

Ղեկավարվելով «եթե ձրի են տալիս, ամենամեծը վերցրու» կարգախոսով Ժոռը գնեց Տորք Անգեղին վայել մի Salamander եւ վերադարձավ ռուս տատիկի տուն, որպեսզի միասին որոշեն, թե ինչ անեն հետագայում: Չկարողանալով գնահատել ինֆլյացիոն պրոցեսի ողջ ծանրությունը զայրացած տատը Ժոռի նվաճումն անվանեց «Ցուսիմայից հետո մեծագույն հիմարություն» եւ արտաքսեց նրան տնից: Խնդրի ծանրության տակ կքած Ժոռը իր մոլոր քայլերն ուղղեց Բիձու մոտ, քանզի այդ տարիներին Հին Գվարդիայի տղաներից միայն վերջինս էր

պատասխանում պատասխան չունեցող հարցերին: Տեսնելով, որ Ժոռի թեւատակինը ոչ թե շիշ է, այլ ինչ-որ անհեթեթություն, Բիձեն հանգամանորեն վերլուծեց Ժոռի բոլոր տատերի բարոյական կերպարները եւ երկու տոպրակ դատարկ շիշ տալով ուղարկեց խմիչքի: Մինչ հյուրին վայել տեսք ստացած Ժոռը կվերադառնար, խնդիրն արդեն լուծված էր Կարճատեւ հաշվարկից հետո, քրոմ-նիկելե պարույրի մի որոշակի հատված, համապատասխան էլեկտրամեկուսացմամբ, տեղավորվել էր կոշիկի ներբանում, իսկ կրունկի վրա անջատիչ էր տեղադրվել: Այդ երեկո կարելի էր մոռանալ Բիձու բոլոր խորհուրդները, բացի մեկից. «Ժոռ, 12 վոլտից ավել չտաս: Եթե տվիր, սեփական խաշի հոտից ես զարթնելու ..»· Հիմա արդեն դժվար է պարզել մոռացե՞լ էր Ժոռը, թե՞ հումանիտար կրթություն ունենալով կարծել էր. ինչքան վոլտերը շատ, այնքան լավ:

Մի բան է պարզ եթե Երեւանում մեկը կա, որ զգացել է իսպանական ինկվիզիցիան, դա Ժոռն է:

Հովհարային անջատման ժամ էր, երբ նա հարբած տուն վերադարձավ ու, հագնելով Բիձու ստեղծագործությունը, միացրեց այն հոսանքազուրկ ցանցին եւ քնեց· Երազները իրականության արտացոլումն են, ընթերցող, բայց ոչ հայելային, ո՛չ անմիջական արտացոլումը: Հմուտ հոգեվերլուծողը կասի, որ երազի նախաբանի համար հիմք հանդիսացան Բիձու վերջին խոսքերը «Իսպանական կոշիկ չդառնա քեզ համար. Դա ինկվիզիցիայի ամենացավոտ գործիքներից էր»: Երազում իսպանական ինկվիզիցիան բացահայտել էր Ժոռի աթեիստական հայացքները եւ պատրաստ էր այրել նրան խարույկի վրա, ժաննա դ'Արկի եւ Յան Հուսի հետ միասին, առանց որեւէ հարցաքննության: Ներկաներից միայն ժաննա դ'Արկն էր մի քիչ հայերեն հասկանում եւ Ժոռի «Աթեիստը ես չեմ, Բիձեն է» ճիչը լսելով ուշադիր նայեց նրա սարսափահար աչքերին եւ ասաց. «Բայց գուցե՞ դա պետք է Ֆրանսիային»: Իսկ Յան Հուսը ընդհանրապես ոչինչ չէր հասկանում եւ անընդհատ գոռում էր. «O՜ sancta simplicitas!..»: Աութոդաֆեն ընդհանրապես անտանելի բան է, իսկ այստեղ նաեւ սարսափելի նեղվածք էր. երեքին էլ տեղավորել էին մի խարույկի վրա, եւ այրվում էր Ժոռի միայն աջ ոտքը...

Հովվերգություններ չսպասես ինձնից, ընթերցող: Այս դաժան եւ տարօրինակ պատմությունների համար հիմք են հանդիսացել իմ եւ իմ ընկերների դաժան ու տարօրինակ տարիները· Երկրորդ աստիճանի այրվածքներով, իսպանական ինկվիզիցիայի ճիրաններից հրաշքով փրկված Ժոռը, թե այրված, թե սառած ոտքերին կաղալով, մի կերպ հասավ հեռախոսին եւ շտապօգնություն կանչեց:

Տարիներ են անցել այդ օրից, կամաց-կամաց մոռացվում են թե չարը, թե բարին, բայց ամեն անգամ, երբ քնած Ժոռը երազում շշնջում է «ժաննա ջան, Ֆրանսիան ի՞նչ կապ ունի...», նրա ռուս տատը վախեցած խաչակնքում է եւ, համենայնդեպս, դուրս հանում հոսանքի ապահովիչը:

ՌԱԶՄԻԿԻ ՈՒՂԻՆ

Ծղրիդի երգը չասաց
Ինչքան է նա ապրելու:
Ճապոնական պոեզիայից

Անելանելի վիճակներ չեն լինում Սրանում համոզված էր նաեւ հանգուցյալ պապիկս: Ավելի քան արժանավոր անձնավորություն լինելով նա ամբողջ կյանքում հետեւեց ճապոնական սամուրայների «Բուսիդո» /Ռազմիկի ուղի/ կոդեքսին, առանց ճապոնիայի տեղն իսկ իմանալու Ողբախտաբար, երբ իմ կյանքում եկավ վճռական որոշում կայացնելու ժամանակը, պապիկս արդեն 50 տարուց ավելի էր, ինչ Բուսիդոյի ասած վերամարմնավորվել էր, ինձ թողնելով ընդամենը մի փոքր ծոցատետր կցկտուր գրառումներով. Հիմնականում դրանք պատվիրաններ էին «Մի խմիր կամ եթե խմում ես, հետը մի բան կեր», «Թունդ խմիչքներից դեպի թույլ խմիչքներ անցումներ մի կատարիր», «Հարբած ժամանակ արեւի լոգանքներ մի ընդունիր».. Ապրածս տարիներն ապացուցում էին, որ պապը կանխատեսում էր թոռանը սպասող բոլոր արհավիրքները, այլապես ու՞մ երեւակայությունը թույլ կտա այսպիսի գրառում անել. «Որքան էլ զզվելի լինեն ճակնդեղի սպիրտն ու քացախը, նրանց խառնուրդն ավելի զզվելի է»:

Կարմայի պահպանման օրենքի անողոքությունը ես զգացել եմ սեփական կաշվիս վրա: Հրաշալի, թեթեւ կարմայով պապ ունեցողի կյանքը, հասկանալի է, պետք է մղձավանջային լիներ: Ավելին կասեմ, դա ոչ թե կյանք էր, այլ անընդհատ դեգերումներ ճահճային մառախուղներում:

Ինչեւէ, արդեն վաթսունի մատույցներում էի, երբ, չգիտես ինչու /գուցե կարմայի սպառվելու հետեւանքով/, մառախուղը ցրվեց եւ ես հայտնաբերեցի ինձ խոհանոցում նստած, բաժակը ձեռքիս, ինչ-որ ժրաջան կնոջ հաճոյախոսություններ անելիս: Շուտով պարզվեց մի բան, որից ես ամենաշատն էի վախենում դա իմ կինն էր...

Ճիշտ էր ասում Սյորեն Կյերկեգորը «Կյանքը քաոս է, իսկ մեր նպատակն է այդ քաոսում կարգավորվածության կղզյակներ ստեղծել»: Բայց ես գնալով ավելի ու ավելի էի համոզվում, որ այս կարգավորվածության կղզյակը փոքր է երկուսիս համար... Կնոջս ուշադիր նայելով, ես հասկացա, որ նախորդ կյանքում նա եղել է հնդկահավ, իսկ սամուրայն անկարող է ապրել հնդկահավի հետ, նույնիսկ նախկին: Կամքի գերագույն լարումով ես կասեցրի դեպի գրտնակը ձգվող ձեռքս եւ սկսեցի մտածել: Իսկ ճահճային մառախուղը սկսեց խտանալ... Վճռական գործողություն կատարելուց առաջ, ինչպես հայտնի է, սամուրայը պետք է

յոթ անգամ շնչի եւ արտաշնչի, որքան էլ առաջին հայացքից գործողությունը պարզ լինի:

Հասկանալի էր, որ պետք էր կնոջս թրի հարվածով կիսել, ուղղակի ես չէի կարողանում ընտրել լայնակի՞ կիսեմ /այդ հարվածը կոչվում է «ծիծեռնակի թռիչք»/, թե՞ երկայնակի /«չոր տերեւ» հարված/: Ոչինչ այնպես չի ծերացնում մարդուն, ինչպես տարիները, ընթերցող .. Հիրավի, եթե երիտասարդությունն իմանա՜ր, իսկ ծերությունը կարողանա՜ր . Իսկ ինչո՞վ կարելի է փոխարինել երիտասարդության ուժը, եթե ոչ ծերունական իմաստությամբ... Ու ես սկսեցի մտածել: Վասալ է պետք: Բոլորովին պարտադիր չէ, որ դժվար խնդիրը սամուրայը մենակ լուծի· Դժվարին խնդրի լուծումից առաջ սամուրայը պետք է սափրի գլխի գագաթը, բայց ես ազատված էի դրանից, քանի որ ճաղատ եմ: Ու՞մ վասալ վերցնեմ, ու՞մ եմ փրկել այս կյանքում: Հանկարծ հիշեցի իմ հարեւան Ռազմիկին, որին բախտ եմ ունեցել բազմակի ազատել խումհարային տանջանքներից: Կարծես թե ամեն ինչ հաջող էր դասավորվում. Ռազմիկին գտա մեր բակի փշատի ծառի տակ, խումհարային տանջանքներում: Համապատասխան բուժում անցկացնելուց հետո անցա բուն գործին: «Ռազմիկ, դու սամուրա՞յ ես»: «Հա, քու ցավը տանեմ»: «Ռազմիկի ուղին գիտե՞ս»: «Ո՞նց չգիտեմ, ցավդ տանեմ»: «Վասալս կլինե՞ս»· «Բա հո թաղայինի վասալը չե՞մ լինելու, Վալոդ ջան»: «Ուրեմն լսիր: Հիմա գնում ես իմ տուն, ու սկսում եք կնոջս հետ ինձ դավաճանել: Ես գալիս ձեզ բռնացնում եմ ու կնոջիցս բաժանվում: Սա հրաման է... Դու կարող ես այն բողոքարկել, բայց կատարելուց հետո միայն... էս էլ խմիր...»:

Կես ժամ անց երկու վկաների ներկայությամբ տուն բարձրացա եւ խոհանոցի հատակին հայտնաբերեցի արյունլվա Ռազմիկին, մի վիճակում, որ բռնցքամարտիկներն անվանում են «գրոգգի»: Լացակումած կինս, որ գրտնակով կասեցնում էր Ռազմիկի կանգնելու բոլոր փորձերը, շշնջաց «Վալոդ, գիտե՞ս ինչ էր ասում էս անասունը»...

Սամուրայը չպետք է դիտի մյուս սամուրայի տանջանքները, ուստի ես վերցրի խոհանոցային դանակը, որպեսզի գլխատեմ ընկերոջս: Վերջին խոսքերը, որ հիշում եմ, կնոջս ճիչն էր «Վալո՜դ, չանես ..»: Էլ ոչինչ չեմ հիշում, երեւի կինս ինձ էլ էր գրտնակել... Հիմա ես նստած եմ այստեղ .. Այստեղ ավելի լավ է, քան մեր տանը... Թե քույրերը, թե՛ բժիշկները շատ հոգատար են իմ նկատմամբ, իսկ գլխավոր բժիշկը այլ կերպ չի դիմում ինձ, քան «Սենսեյ»... Իմ այս վերջին տարիներն ամբողջովին իմն են, եւ ես թաքուն հույս եմ փայփայում, որ այս գրառումներս չեն կորչի ու կհասնեն թոռնիկիս, որն աղջկաս պատմածներից դատելով, հիմա դեգերում է ճահճային մառախուղներում.

ԴԱՆԿՈՆ

«Առասպելներն ու նախատիպերն
ապրում են մեր կողքին»...
ՌՈԲԵՐՏ ՅՈՒՆ

Հետաքրքիր ժամանակներ էին... Իսկ գուցե մե՞նք էինք հետաքրքիր, չգիտեմ, բայց, ամեն անգամ, այն պայծառ, արևոտ օրերը հիշելիս, աչքերիս առաջ հանկարծ հառնում է Դանկոյի կերպարը և մթնեցնում ամեն ինչ: Հիմա էլ, կարծես, աչքիս առաջ է նիհարած, դողդոջուն քայլվածքով, քայլումեջ ուսը պատին հենելով, մի կերպ առաջ է շարժվում, մինչև պատի վերջանալը: «Այսպիսին է կյանքը. այն ավարտվում է, դեռ չսկսված...» ասում էր մի մարտաֆիլմի հերոս հերթական թշնամուն սպանելուց հետո:

Այդ անցած տարիներին, որոնք մեզ այն ժամանակ անանցանելի էին թվում, մի օր բավական հիշարժան մի շարժում սկսվեց. գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ այն, ինչ արգելված չէ թույլատրված է... Ու սկսվեց... Հին Գվարդիայի տղաները մեկը մյուսից արտառոց գործերով տարվեցին. Բոլշը հիմնադրեց «Ակամա հրշեջների ընկերությունը»: Բիձեն ձեռնամուխ եղավ սինթետիկ որդան կարմիրի որոնումներին և անընդհատ ներկոտ ձեռքերով դեգերում էր, ընդ որում, ձեռքերին ինչ գույնի բիծ ասես չկար, բացի կարմիրից, դե, ձեր խոնարհ ծառան էլ աշխատում էր «հումանիտար» զարթուցիչի ստեղծման վրա (ժամացույցի և ջերմաչափի մի յուրօրինակ խառնուրդ, որը 37 աստիճանից բարձր ջերմության դեպքում, մարդուն չի արթնացնում, քանի որ նա մեղք է հիվանդ է, չարժե արթնացնել): Ժամանակը հումանիստներ էր պահանջում, և մենք երկար չսպասեցրինք...

Հումանիզմի թեթև ձեռքով մեր շարքերը սողոսկածներից, առաջին հերթին, պետք է հիշատակեմ Գափոյին: Այն օրը, երբ Բիձեն մեզ ծանոթացրեց, նա ցանկանում էր գրավիտացիոն էլեկտրակայան կառուցել, բայց չգիտեր, թե ինչպես կառուցի: Հումանիզմից կուրացած, ես չնկատեցի, որ գործ ունեմ մարդու ամենազզվելի տեսակներից մեկի մարտնչող տգետի հետ: Գարեջրի արկղի շուրջ ծավալված անդրանիկ զրույցի ժամանակ, համենայնդեպս, խորհուրդ տվեցի զբաղվել մի գործով, որից գոնե թեթևակի տեղյակ է: Զայրացած Գափոն Մակբեթին վայել մի մենախոսություն արտասանեց այն մասին, թե ինչպես իր ծիզվիտ ծնողները, իբր ընտանեկան ավանդույթները չխախտելու համար, բռնի ուժով իրեն անասնաբույժ դարձրին, մինչդեռ նրա առաջին և միակ սերը գրավիտացիան էր, որից նա մինչև հիմա ոչինչ չի հասկանում և սարսափելի տանջանքով է օր մթնեցնում: Տանջանքներով ինձ չես

զարմացնի. այն օրից, երբ սիրածս շունը ինչ-որ անհայտ հիվանդությունից սատկեց, ես երդվեցի անասնաբույժ դառնալ, երդմնազանց եղա ու մինչև օրս անտանելի կյանք եմ ապրում, չմոռանալով հետևել անասնաբուժական վերջին նորություններին:

Դրանցից մեկն էլ պատմեցի Գափոյին. «Ճապոնական էլիտար անասնագոմերում մսատու ցեղի ցլիկներին ընտիր տեսակի գարեջուր են տալիս և անընդհատ մերսում, ինչի հետևանքով նրանց միսը իր համային հատկանիշներով գերազանցում է այծքաղին և տասնապատիկ թանկ է գնահատվում միջազգային շուկայում...»: Ի՞նչ իմանայի, որ իմիջիայլոց նետված այս տեղեկությունը պարարտ հող կգտնի Գափոյի խամ ու խոպան ուղեղում...

Իրենց գյուղի տան գոմում Գափոյի պապը (նրան անվանում էին «Գափո լայթս». համարյա նորմալ մարդ էր) մի ցլիկ էր բտում: Թոռը, իր կարծիքով, գերազանցեց պապին. համակցված կերը փոխարինվեց «ժիգուլևյան» գարեջրով, իսկ մերսումը մտրակումով: Արդյունքը երկար սպասեցնել չտվեց: Ցլիկը ձեռք բերեց լյարդի ցիռոզ, ալկոհոլային կախվածություն և ֆոբիաներ (վախենում էր նույնիսկ մկներից):

Երկու բան չեմ կարողանում մոռանալ այս կյանքում. ցլիկի դողդոջուն քայլերը և Գափոյի ապուշ դեմքը:

Ես հիշաչար չեմ. ուղղակի չար եմ և լավ հիշողություն ունեմ, մի բան, որ աշխատանքում առավելություն է, իսկ կյանքում ոչ միշտ, ու ինչքան էլ Բոլշը փորձում է հանգստացնել ինձ, ասելով, որ ամեն մեկս ինչ-որ հանցանքի ակամա մեղսակիցներ ենք և ավելի լավ է ակամա մեղսակից լինել, քան ակամա հրշեջ, ես հանգիստ չունեմ...

Ցլիկի անունը Դանկո էր...

ԵՐԱԶՈՂՆԵՐԸ

Չկարգավորված երևակայություն ունեցող մարդը երազող է:
Ի. Կանտ

Աշխատանքս այցելուներ ընդունելն է: Հասկանալի է՝ մասնագիտություն չէ, մասնագիտությունս աշխատում եմ չհիշել: Չորս, թե հինգ տարի առաջ, Խմբապետը որոշում ընդունեց, որ գաղափար համտեսողների մեր ժրաջան փեթակում բոլոր ցնդած գյուտարարներին ես պետք է ընդունեմ... «Ինչ ուզում ես՝ արա, ոնց ուզում ես՝ արա, բայց երկրորդ անգամ ես դրանց չտեսնեմ.. »: Այդ տարի ես դեռ չէի հաղթահարել հիմար հարցեր տալու իմ վաղեմի սովորությունը և չգիտեի, որ վերադասի կարգադրությունները, նախ, կարելի է բողոքարկել կատարումից հետո միայն, և երկրորդ՝ բողոքկել հաջորդ վերադասին, երբ նախորդին հեռացնում են, ուստի հարցրի, թե կարո՞ղ եմ այդ տաղանդավոր միտքը տեսնել գրավոր հրամանի տեսքով: Պարզվեց, որ կարող եմ, և եթե միտքը պարզապես տաղանդավոր էր, ապա գրավոր տեսքը ուղղակի հանճարեղ էր «Զրոյից երկու շաբաթ ժամանակահատվածում ազգը, մարդկությունը, կամ Տիեզերքը փրկելու բոլոր առաջարկությունների փորձագիտական հետազոտությունը հանձնարարել ավագ փորձագետ...»՝ Կրկնում եմ դա վերջին տարին էր, երբ ես դեռ հիմար հարցեր էի տալիս և «Իսկ ինչու՞ ես»-ին հետևեց հանգամալից հիմնավորումը. «Քո գլխում ոչ թե խելք է, այլ աղբանոց... Ամեն առավոտ էստեղ գալիս, որ չեմ հիշում՝ քեզ եմ տեսնելու, թևաթափ եմ լինում. . էն օրը չկայիր, գրասեղանիդ գրքերը նայեցի. . Ավելի լավ էր՝ քեզ տեսնեյի... «Ձկների սնկային հիվանդություններ», «Ֆալոսի պաշտամունքը հին Հայաստանում»: Այ տղա, դու հո գիժ չե՞ս... Այսինքն, դա քո գործն է, բայց էդ մարդկանց մենակ դու պիտի ընդունես, կարող է նրանք էլ չուզենան քեզ նորից տեսնել... Իսկ, թե օգնության հարց կա, օգնե՛նք: Ես հիմա կառավարություն եմ գնում. ի՞նչ է պետք, մի թղթի վրա գրիր, տուր Ռոզային»:

Հին շախմատիստներին պետք չէ համոզել, որ սպառնալիքը , հաճախ, իր իրագործումից սարսափելի է, ուստի հասկանալով, որ նոր էջ է բացվում կյանքիս մատյանում(ըստ երևույթին՝ ողբերգական)՝ մի թուղթ վերցրի և սկսեցի մտածել, թե ինչը կարող է ինձ օգնել ստեղծված իրավիճակում:

«Ձեր հանձնարարականի կատարման համար խնդրում եմ ինձ ապահովել հետևյալ տեխնիկական միջոցներով.

1. զսպշապիկ - 1 հատ
2. զրահաշապիկ - 2 հատ
3. արցունքաբեր գազ (խտացված) - 20 խորանարդ մետր

Անհրաժեշտ եմ համարում նաև կրտսեր փորձագետի հաստիքում ունենալ «այկիդո» մարզաձևից սպորտի վարպետ, 90կգ.-ից ծանր որևէ տղամարդու կամ կնոջ՝ անկախ մասնագիտությունից:

Խնդրում եմ նաև, լուծել վնասակարության համար կաթով ապահովման հարցը (օրական ինձ՝ 0.5լ, կրտսեր փորձագետին՝ 1լ): Դժվարության դեպքում, հնարավոր եմ համարում կաթը փոխարինել 40 տոկոսանոց ցորենի սպիրտով (ինձ՝ 1լ, կրտսեր փորձագետին՝ 0.5լ):

Սույն դիմումի բոլոր կետերը մերժելու պարագայում, անհնար եմ համարում ոչ միայն իմ հետագա աշխատանքը՝ Ձեր ղեկավարած հիմնարկում, այլև կյանքս ընդհանրապես»:

Կարծես թե, սկիզբը վատ չէ: Գրոսմայստեր Սմիսլովն ասում էր, որ շախմատում չպարտվելու համար պետք է ուղղակի կատարել քառասուն ուժեղ քայլ և հետաձգել խաղը: Համենայնդեպս, սկսեցի ճամպրուկս հավաքել: Գրքերը մի կերպ տեղավորեցի, իսկ մանրադիտակն ու գեղագիտակը չէր ստացվում, մեկը մտցնելիս մյուսը դուրս էր պրծնում: Ուրեմն, երկար եմ լռվել այստեղ: Ի վերջո, գեղագիտակը գրպանիցս ցցված, ճամպրուկը ձեռքիս, դուրս եկա միջանցք, որտեղ և հանդիպեցի ժպտացող Ռոզային, ձեռքին՝ մակագրված դիմումս. «Կրտսեր փորձագետի պաշտոնում աշխատանքի եմ նշանակում Ռոզային, որը, համոզված եմ, կփոխարինի դիմումում թվարկածը»:

ՌՈԶԱՆ

Ծնող չեն ընտրում, իսկ երեխաները պատասխանատու չեն ծնողների համար: Ռոզան կարող էր ավելի կարգին ծնողներ ունենալ, հայրը հարբեցող էր, մայրը՝ կտրուկ միջոցների կողմնակից: Ընտանիքում տիրող իրավիճակին վերջ տալու համար, կինը քնած ամուսնու ականջի մեջ սնդիկ էր լցրել, այն հույսով, որ կողակիցը կհետևի արքա Համլետի օրինակին, բայց ստացվել էր հակառակը. ամուսինն սկսեց ավելի շատ խմել և անընդհատ երգել, ինչը բացարձակապես անտանելի էր: Ի վերջո, հուսահատ մայրը հասարակ մկնդեղ կիրառեց և դատվեց «կանխամտածված սպանություն» հոդվածով...

Ռոզայի մանկությունն անցավ տատիկի՝ Անգելինա Բադալովնայի տանը, որին այլ բառով, քան «հրեղենը», բնութագրել չեմ կարող: «Մանջուրիայի սոպկաները» երգը դարձավ մանկան օրորոցայինը, իսկ տիկնիկներին փոխարինեցին պապիկի ծանրաձողն ու կշռաքարերը: Դա Ռեմ Վռամովիչի միակ ժառանգությունը չէր. կար նաև մի հսկա գրապահարան՝ լեցուն «Զինվորական միտք» ամսագրերով և զրահատեխնիկայի վերաբերյալ գրքերով: Բնականաբար, տատի

հեքիաթներին փոխարինեց պատերազմի վերաբերյալ Կլաուզևիցի հայտնի աշխատությունը: Արդյունքում ստացվեց, բազմակողմանի զարգացած, այնպիսի մի կին, ինչպիսին ոչ մի աղջկանից չէիր սպասի: Չար լեզուներն ասում են, որ Ռոզայի առաջին և միակ ամուսինը տնից փախել է մեղրամսի եկրորդ օրը, համոզվելով, որ կնոջ տեղը ոչ միայն խոհանոցն է, այլ նաև՝ ճաշասենյակն ու ննջարանը Դա սուտ է, ամուսինը, ենթադրում եմ, նույնպես մահացել է Ռոզայի գրասեղանին մի լուսանկար կա, և միայն ես ու Խմբապետը գիտենք, որ պատկերվածը զորավար Անդրանիկը չէ (կոչումները չեն համընկնում)՝

Երբ Անգելինա Բադալովնան էլ խնդրեց երկար ապրել, փառապանծ տոհմի միակ ժառանգորդ մնաց բարձրագույն տեխնիկական կրթությամբ, արտաքնապես ոչ թե գեղեցիկ, այլ՝ վեհ, արտակարգ մարդասեր և պարկեշտ մի անհատականություն, մեր ժրաջան փեթակի մայր մեղուն և միակ սփոփանքը՝ երկար տարիների ընթացքում:

ԽՄԲԱՊԵՏԸ

Որքան հանճարեղ է լինում մարդը, այնքան կարելի է նրան ավելի համառոտ բնութագրել:

Ամառային մի բանաստեղծական երեկո, Խմբապետը, ծանր վարքի տեր մի կնոջ ուղեկցությամբ, հարբած դուրս է գալիս «Գառնի» խորովածանոցից և նստում իր մեքենան, ընդ որում, ղեկի մոտ նստում է ծանր վարքի տեր կինը: Ետընթաց շարժման ժամանակ հանդիպած առաջին իսկ արգելքը լինում է պետավտոտեսչության սերժանտի մոտոցիկլետը, ընդ որում՝ սերժանտը վրան: Հարվածի ձայնից արթնանալով՝ գազազած Խմբապետը, համոզված, որ մոտոցիկլետն է իր մեքենային խփել, և կասկածելով, որ ազգի վերջին մտածողին որոշել են վրաերթի ենթարկել, մոտ է վազում մոտոցիկլետախառը պառկած սերժանտին, և, չկարողանալով զսպել ցասումը, թքում է վրան: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ոստիկանի տուժելը խստացնում է ցանկացած պատժամիջոց, իսկ այն տարիներին իմ երկիրը փորձում էր հասնել Ամերիկային և անցնել: Օբյեկտիվ մոտեցման դեպքում Խմբապետին սպառնում էր երեք տարվա ազատազրկում՝ հետագայում տրանսպորտային ցանկացած միջոցից օգտվելու արգելքով: Բայց, ինչպես գրոսմայստեր Կորչնոյն էր ասում, մեծերին բախտը բերում է, իսկ փոքրերին՝ տանում. Խմբապետը դեպքի հաջորդ օրը ստացավ իր վարորդական իրավունքը, իսկ սերժանտը՝ արտահերթ կոչում «Անբասիր ծառայության համար»:

ԻՆՔՍ

Լուսաբացը սկսվեց տիեզերական թախծից և վերջացավ ընկճախտով: Արդեն սափրվելիս համոզվեցի Խմբապետի խոսքերի արդարացիությանը. «Ոչ ոք չի սխալվել՝ հրաժարվելով իր ճակատագիրը կապել այս թշվառականի հետ»: Տիեզերական թախիծը հուշում էր մի քիչ մտածել մահվան մասին: Հիշեցի Ջոն Դոնի՝ «Մի՛ հարցրու, ում մահն է գուժում զանգը», և մի հետաքրքիր միտք ծագեց. առաջարկել, որ բոլոր թաղումների ժամանակ, հանգուցյալի դիմանկարի փոխարեն, նույն չափի մի հայելի տանեն... Ափսոս, որ այս գաղափարն էլ, մյուսների նման, չի գնահատվի... Նույնիսկ մերժման տեքստն եմ կանխազգում: «Թաղումների ժամանակ հայելու կամ հայելային մակերևույթների կիրառումը անընդունելի է, քանզի կարող է դագաղները մի քանի հատ թվան, ինչը կխորացնի սուգը»: Ի՞նչ գաղափարներ են կորչում ... Ակամայից հիշեցի ուսուցչիս՝ «Առաջնորդների զմռսման նոր մեթոդ» գյուտը: Նա համոզված էր, որ Ստալինից հետո էլ են առաջնորդներին հերթականությամբ զմռսվելու և ի ցույց դնելու դամբարաններում, ուստի իր գյուտի գոնե մեկ ներդրման հույս ուներ, բայց՝ ավաղ... Հիշում եմ նույնիսկ մի հատված գյուտի նկարագրությունից. «Ինտենսիվ նեյտրոնային ճառագայթմամբ ոչնչացնելով մարմնում եղած բոլոր մանրէները՝ Առաջնորդին տեղադրել իներտ գազով լցված զրահապակյա արկղում»: Լույս իջնի գերեզմանիդ, ուսուցիչ... Ես երկար կհիշեմ քո հիմնական խրատը. «Երբեք մի՛ ընկճվիր, իմացի՛ր, եթե նույնիսկ քեզ կերել են, դու ամենաքիչը երկու ելք ունես...»:

Ուսուցչիս հիշելուց հետո մի բաժակ չխմելը ես մահացու մեղք եմ համարում. Հարցն այն է՝ ինչ խմել: Ռոզայի սարքած «Նապոլեոնը» վերջացել է, Վեդու ցորենը մի ամիս է՝ չկա, ունեցածս մի տափաշիշ «Մասանդրա» էր: Այդ հեղուկը, որ նվիրել էր օդաչու ընկերս, իրականում նախատեսված է կործանիչ ինքնաթիռների պատուհանները սառցակալումից պաշտպանելու համար և երբեմն այդ նպատակով էլ օգտագործվում է:

Անվանումը «Микоян Артем, сын Армянского народа, дал радость авиатором» արտահայտության հապավումն է:

Չմոռանամ ասել, եթե ցանկանում եք դիտել «Կարապի լիճը» բալետը, որևէ կնոջ մի բաժակ «Մասանդրա» հյուրասիրեք ու տեսեք, թե ինչ է կատարվում («Մեռնող կարապը» երաշխավորում եմ):

Ինձ վրա «Մասանդրան» հակառակ ազդեցություն գործեց. ես դարձա մտածող եղեգ ու ընկա դառը մտորումների մեջ: (Հետաքրքիր է, որ Ստանիսլավ Լեմը իր գործերից մեկում հիշատակում է մի բույս, որի

պահպանումը դժվար խնդիր էր, քանի որ բողբոջելուց հետո, ծաղկելու փոխարեն, այն ընկնում էր դառը մտորումների մեջ): Այս բոլորը հետաքրքիր է, բայց ինչպես ասում էր սրբերից մեկը. «Պետք է փորել սեփական բանջարանոցը...» Ու ես գնացի աշխատանքի:

ՀԱՄԲԵՐԱՆՔԻ ԲԱԺԱԿԸ

Սուտ է, թե կանայք և տեխնիկան անհամատեղելի երևույթներ են. Ռոզան հերքել է դա: Հինգ տարի առաջ, երբ շախմատի ակումբում ծանոթանալուց հետո, Խմբապետը ինձ աշխատանքի հրավիրեց ու ծանոթացրեց Ռոզայի հետ, առաջին լսածս բառերը «Ինչ մեղկ ա» արտահայտությունն էր, որ ինձ խիստ զարմացրեց· Հետագայում պարզվեց, որ Ռոզան այդպես է սկսում բոլոր նոր ծանոթությունները , բայց երբ տիեզերական ճառագայթների մասին զրուցելիս Ռոզան հանկարծ սկսեց հոնգուր-հոնգուր արտասվել, զարմանքիս արդեն չափ ու սահման չկար: Խմբապետն ինձ միջանցք տարավ և, համոզվելով, որ վկաներ չկան, շշնջաց. «Մոռացել էի քեզ ասել: Ամեն օր՝ էս ժամին, Ռոզան հինգ րոպե լացում է: Առաջին օրվանից էդպես է: Որ հարցրինք՝ ի՞նչ է պատահել, սկսեց հեկեկալ: Բոլորիս անունից շատ շնորհակալ կլինեմ, եթե ամեն օր՝ տասնմեկն անց կես , մի տաս րոպեով սենյակից դուրս գաս: Մնացածում ոնց որ նորմալ է... Ռոզայի պես բարի, զարգացած, խելոք կին կյանքում չեմ տեսել Մե՞ղկ ա ..»: Կես ժամ անց, Խմբապետի հետ թեթևակի հակաընկճախտային միջոցառում անցկացնելուց հետո (100-ական գրամ «Ընտիր» կոնյակ), վախվորած ներս մտա և հայտնաբերեցի ժպտացող Ռոզային՝ երկու թեյի բաժակ կոնյակ ձեռքին· Բաժակների եզրերին կիտրոնի շերտիկներ էին: Զարմանքս շարունակվում էր. առաջին իսկ ումպից հետո շշմած նայեցի նրան.

- «Նապոլեո՞ն»:

- Չէ՛, ես եմ սարքել:

Կանանց հետ առնչվելիս երեք տաբու ունեմ. չծեծել, չգոռալ և չվիճել: Ուստի, քմծիծաղը դեմքիս տեղավորվեցի բազկաթոռում և շարունակեցի ըմբոշխնել «Նապոլեոնը»... Կոնյակ ես մանկուց եմ խմում, ինձ խաբելը դժվար է: Իսկ Ռոզան, բաժակի միջով լույսին նայելով, երազկոտ ձայնով շարունակեց.

- Կաղնեփայտի չորացած թեփը՝ չժանգոտող պողպատե կաթսայում 125 աստիճանում և երեք մթնոլորտ ճնշման տակ, գումարած 42 տոկոսանոց սպիրտ: Հինգ րոպեն հավասարազոր է մեկ տարվա հնեցման՝ կաղնե տակառում· Եթե սա տաս րոպե էլ պահեի, «Վասպուրական» էր ստացվելու, բայց «Վասպուրական» չեմ սիրում: Ջերմաստիճանը չափում են թերմոռեզիստորով, իսկ ճնշումը՝ հասարակ մանոմետրով... Կաթսան հիվանդանոցից եմ ցրել, այսինքն՝ դեն էին գցել, վերցրի, նորոգեցի:

Աշխատանքային օրը վաղուց վերջացել էր, իսկ մենք տաքացած շարունակում էինք քննարկել այն հարցը, թե տրոտիլի պայթյունը կարո՞ղ է արդյոք, ակնթարթորեն կոնյակ առաջացնել սպիրտ-կաղնու թեփ

խառնուրդում:

Կարճ ասած, երբ վերհիշում ենք կյանքում մեզ հանդիպած լավագույն մարդկանց, զարմանքով համոզվում ենք, որ նրանք ոչ ամենախելացիներն էին, ոչ ամենագեղեցիկները, այլ ուղղակի ու զարմանալիորեն նման էին մեզ...

ԱՌԱՋԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԸ

Առավոտ լուսո... Արդեն հինգ տարի է՝ Ռոզան դիմավորում է ինձ: Ժամանակին գալու դեպքում մատուցվում է սուրճ, մինչև կես ժամ ուշանալիս՝ համբերանքի բաժակը, կես ժամից ավելի ուշանալու դեպքում՝ թթվի ջուր... Եթե ինձ այստեղից էլ հեռացնեն, երևի ես էլ հետագայում ամեն կեսօր հինգ րոպե հեկեկամ:

Դռների մեջ բախվեցի, երևի կառավարություն վազող, Խմբապետին: Բարևելու փոխարեն նա արագ շրջանցեց ինձ և, վազքը շարունակելով, գոռաց, « Այցելու ունե՞ս»:

Միջանցքում կանգնած էր հուզված Ռոզան՝ «համբերանքի բաժակը» ձեռքին:

- Ֆիշեր ջան, ծեր, հիվանդ մարդ ա, շատ եմ խնդրում, ձեռ չառնես, նենց մե՞ղք ա:

Սենյակի կենտրոնում, մաշված յափնջին ուսերին, ավտոբուսի մշտականը ձեռքին ու խելագար փայլն աչքերում, կանգնած էր առաջին ծիծեռնակս: Չէ, ներողություն եմ խնդրում, առաջինը չէր: Դեռ ուսանողական տարիներին, երբ ես «Հարթ երկրի կողմնակիցներ» երիտասարդական կազմակերպության քարտուղարն էի, սրանցից էլի եմ տեսել. ջուր մագնիսացնող բիծեն, ճագարի հոգին կշռած երիտասարդը, օդը փայլեցնողը... ո՞ր մեկին հիշեմ: Այդ տարիներին էլ մշակվեցին նրանց հետ շփման ձևերը: Հիմնականում դրանք երկուսն են՝ ընդգծված հարգանք և շատախոսություն: Վիճել, կոպտել, վիրավորելը խստիվ արգելվում է: Խոսել այնքան, մինչև այցելուն անջատվի:

- Բարև՛ Ձեզ, վերջապես եկաք, անընդհատ սպասում էինք:

- Որտեղի՞ց գիտեք իմ հայտնագործության մասին:

- Ամբողջ քաղաքն է խոսում, բայց մենք պետք է Ձեզ անձամբ լսենք. Խնդրու՛մ եմ, նստե՛ք, մի՛ շտապեք, ամեն բառ կարևոր է, մի րոպե՛, դեռ ոչինչ չասեք, թույլ տվեք կենտրոնանալ... Ռոզա, հյուրասիրիր այցելուին:

«Վասպուրական-2»-ի մի ըմպանակից այցելուս ուշաթափվեց: Մինչ լացակումած Ռոզան «Վա՜յ, պապի ջան, էս ի՞նչ եղավ» ախուվիշով իրար էր անցել, ես շարունակում էի կենտրոնանալ: Իսկապես, կարծես թե այս «Վասպուրական-2»-ը մի քիչ թունդ է ստացվել, պետք է ստուգել

մանոմետրը... Հանկարծ ծերուկը տիկնիկի նման աչքերը բացեց, ուղղվեց և խստորեն ինձ նայելով՝ հարցրեց.

- Դուք երբևիցե մտածե՞լ եք, թե ինչ սարսափելի ուժ է իրենից ներկայացնում փոշեհատիկը:

- Այո': Չէ՞ որ հենց նրանով են բացատրվում ալյուրի ու շաքարի գործարաններում տեղի ունեցած պայթյունների մեծ մասը:

Մի փոքր անակնկալի եկած ծերուկը, այնուամենայնիվ, խորամանկ ժպտաց և շարունակեց.

- Ես, իհարկե, չեմ բացատրի Ձեզ իմ հայտնագործության բուն էությունը...

- Խնդրում եմ, մի' բացատրեք, մի' արեք այդպիսի բան, չէ՞ որ կարող ենք գողանալ...

Սա արդեն ծերուկին շփոթեցրեց.

- Բա ու՞մ բացատրեմ:

- Անմիջապես այստեղից վազեք կառավարություն, հարցրեք այնտեղ Բորիս Շավարշևիչին, մականունը՝ Խմբապետ, և նրան բացատրեք հայտնագործության բուն էությունը:

Երկրորդ անգամ ասելու կարիք չեղավ. ծերուկը գնդակի նման դուրս պրծավ «փեթակից», իսկ շվարած Ռոզան նորից լցրեց «համբերանքի բաժակը» ու հարցրեց.

- Ֆիշեր ջան, էս ի՞նչ արիր...

Աշխարհի նախկին չեմպիոն Պետրոսյանի մարզիչ, գրոսմայստեր Բոլեսլավսկին հաճախ ասում էր, թե շախմատային ֆիգուրները շշնջում են. «Մեզ սևով սիրեք, սպիտակով ով ասես կսիրի». Կոնյակը խմելուց հետո ես խղճիս ձայնը խլացրի «Մասանդրա»-ով և ականջս հպեցի շախմատի տուփին, որպեսզի լսեմ, թե ուրիշ ի՞նչ են շշնջում նրանք: Տուփից լսվեց.

- Խմելն անհրաժեշտություն է... Թե չէ կմեռնես ու չես իմանա, թե ինչից մեռար...

Խոսողը, ըստ երևույթին, սևերի արքան էր:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՍՐԱՅՈՒՄ

Ամսաթիվ չկար: Օրն առանց ամսաթվի էր:
ԳՈԳՈԼ

Մարտի 1-ը նշվեց սովորականի նման. իմ սիրած իկեբանան (մեկ ծաղիկ շղթայված օղու լիտրանոց շշին), առողջության և համբերության ջերմ մաղթանքներ: Առաջին այցելուն էլ չուշացավ: Ներս մտավ, վախվորած նայեց շուրջը, հրաժարվեց ասել, թե ինչ հայտնագործություն է արել ու փախավ: Առաջներում կզարմանայի, հիմա ոչ...

Արդեն ութ տարի է անցել այն պատմական օրից, երբ վերջնականապես համոզվեցի, որ տաղանդավոր գյուտարար չեմ: Վերջին գյուտս մեխ էր, որն, ի տարբերություն սովորական մեխերի, բարակ տախտակում ճաք չառաջացնելու համար ուներ եռաթև սվինի կառուցվածք: Արտոնագրային որոնումը ցույց տվեց, որ մի քիչ ուշացել եմ. այդպիսի մեխեր հայտնի էին դեռ 700 տարի առաջ... Ընկճախտս այնքան խորն էր, որ հարախում մտա: Երբ ուշքի եկա, պարզվեց, որ սեփական դիմումիս համաձայն, ազատված եմ նախկին աշխատանքից և նոր հանգրվան եմ գտել արտոնագրային վարչությունում որպես փորձագետ: Հենց այդ օրվանից էլ մեկընդմիշտ հարգեցի նոր պետիս, որպես խոր մարդաբան և խոշոր մտածող (իզուր չէին հույն փիլիսոփաները զրուցում սեղանի շուրջ. գինին օգնում էր տեսնել այն, ինչ կա, ոչ թե այն, ինչ ձևացնում է): Ենթագիտակցական մակարդակով արած ընտրությունս էլ զարմանալի չէ. բազմաթիվ չբեր կանայք ձգտում են ուսուցչուհի կամ դաստիարակ աշխատել, ուրիշների երեխաներին մեծացնելով, մեղմել սեփականը չունենալու մորմոքը: Էլ չեմ խոսում գրականագետների մասին: «Քաղաքի սանիտար» պատվավոր կոչումը, որն ստացել եմ դեռ ուսանողական տարիներին, այստեղ լիովին արդարացրեց իրեն. բոլոր ցնդած գյուտարարներին ընդունելը դարձավ իմ մենաշնորհը, իսկ ինքս շատ արագ անցում կատարեցի ավագ փորձագետի հաստիքի:

Վերջին ութ տարիների մյուս նվաճումս այն է, որ հերքել եմ մի տարածված մոլորություն, այն է. գիտության և տեխնիկայի ոլորտում խորացողները ցնդում են: Ուրեմն, ուշադիր լսեք: Համաձայն վիճակագրության, մեզ մոտ բուհ և միջնակարգ ավարտածների հարաբերությունն է մոտավորապես 1:3: Տարիներիս փորձը ցույց է տալիս, որ «բարձրագույն» և «միջնակարգ» ցնդածների հարաբերությունն է 1:6: Այստեղից հետևություն. բարձրագույն կրթությունն օգտակար է առողջության համար: Ավելին ասեմ. այս ութ տարվա ընթացքում ցնդած

ասպիրանտ ընդամենը մեկն եմ տեսել, այն էլ հայտնագործություն չէր արել, ուղղակի եկել էր խնդրելու, որ իրեն թույլ տանք գորգագործությամբ զբաղվել:

Թույլ տվեցի գնաց...

Հանկարծ չթվա, թե իմաստունի տպավորություն եմ ուզում թողնել, ընդհակառակը, ուժերս համեստ են, քնարս կոտրված, զբաղմունքս տխուր: Մինչև հիմա չեմ պարզել նույնիսկ ցնդա՞ծ էր անցած ուրբաթ այցելած գեղեցկուհին, որը, ըստ իրեն, գտել է երջանկության բանալին. այն է. «Մեծերին՝ ծերանոց, փոքրերին մանկատուն»: «Տիկին, ձեր առաջարկը ոչ թե գյուտ է, այլ միտինգային կարգախոս: Մենք դիտարկում ենք միայն տեխնիկական առաջարկներ, դրանցով էլ դիմեք»· Երկրորդ անգամ նա էլ չեկավ (զարմանալի չէ. կանայք և տեխնիկան անհամատեղելի հասկացություններ են): Բարկանալս էլ իր հիմքերն ունի. տանել չեմ կարողանում, երբ այցելուն լինում է ոչ թե գիժ, այլ ապուշ· Հազիվ էի մի քիչ հանգստացել, երբ ներս մտավ նա: Անունն այդպես էլ չիմացանք, բայց մեր հիշողության մատյաններում նա մնաց որպես Իխտիանդր... Ոտից-գլուխ թաց էր, բայց խիստ խանդավառ: Երևի նույն խանդավառությամբ Արքիմեդն էր լողարանից դուրս ցատկել ու գոչել «էվրիկա՜»... Բայց ի տարբերություն սիրակուզցի ծերունու, իմ հաճախորդը ձմեռային արտահագուստով էր (կրկնում եմ ոտից-գլուխ թաց). Բնականաբար, ամբողջ վարչությունը փորձեց սենյակս խցկվել, համենայնդեպս, խուսափելով Իխտիանդրին ընդհուպ մոտենալուց:

«Եկել եմ ասեմ, որ իմաստունների սխալ եմ գտել»: «Շատ էլ լավ ես արել, հորեղբայր, մի ասա, տեսնենք, ո՞նց ես գտել»: «Դե էն որ ասում են մի գետը երկու անգամ չես մտնի, սուտ ա: Ես ծորում Զանգուն մտա, մինչև մտնում էի, գետը փոխվեց. սկզբում ոնց որ սառույց, հետո որ լրիվ մտա, մի քիչ տաքացավ»:

Դե պարզ է. շտապ օգնություն, հարազատներին գտնել... Ես քո հերն եմ անիծել, ծերություն...

Հավաքարարը հատակը սրբեց: Սենյակս վաղուց դատարկվել էր: Ձեռքս մեխանիկորեն ձգվեց դեպի ռադիոընդունիչը:

«... Գարուն ա, ձուն ա արել...»

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՁՄԵՐՈՒԿԻ ՄԱՍԻՆ

«Տարօրինակ բույսի նման տարօրինակ,
Անհնարին, ինչպես կղզին օվկիանոսում...»
ՄԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դժվար է այս կյանքում հանդիպել մի մարդու, որին երբևէ ձմերուկ չի հանդիպել: Այդ տարօրինակ բույսը, հենց միայն իր գոյությամբ, հաստատում է այն պարզ ճշմարտությունը, որ մեծ լինելու համար բոլորովին էլ պարտադիր չէ հզոր եւ խոր արմատներ ունենալ: Դա հաստատում է նաեւ մարդկության պատմությունը, չնայած այստեղ կողմնորոշվելն ավելի բարդ խնդիր է, որովհետեւ, Սենեկայի խոսքերով ասած՝ «շատերին մեծ են համարել, քանզի չափել են պատվանդանի հետ միասին»: Հատկապես դժվար է կողմնորոշվել մտածողների շարքում, քանի որ ստիպված ես պարզել նաեւ, թե ինչի մասին էին նրանք մտածում: Օրինակ, դարասկզբի մտածողներից մեկը պնդում էր, որ էլեկտրոնը անսպառ է... Հուսով եմ, բոլորդ կհամաձայնեք, որ այս առումով ձմերուկը չի զիջում էլեկտրոնին, եւ նրանում ջրի ամբողջ քանակությունը անհրաժեշտ է: Իսկ ջուրը, ինչպես Թալեսի ժամանակներից է հայտնի, ամեն ինչի հիմքն է: Որքանով ավելի հեշտ կլիներ մեր խնդիրը, եթե գոնե այսօրվանից սկսած՝ պայմանավորվածություն ձեռք բերվեր, որ մարդկության մեծագույն մտածողները խորհեին ընդհանուր թեմայի, ասենք, օրինակ, ձմերուկի մասին եւ նրա շուրջ: Ցավոք սրտի, մինչ այժմ, զարմանալի համառությամբ, մեծագույն մտածողները ծրագրում եւ իրագործում էին հեղափոխություններ: Մի տարօրինակ գործընթաց, որից անմիջապես հետո, զարմանալի կերպով, սկսվում են հետհեղափոխական ժամանակները: Հենց այդ պահից հեղափոխությունը սկսում է խժռել իր զավակներին: Սիրելի ընթերցող, մի բան է, երբ այդ մասին կարդում ես դասագրքերում, եւ բոլորովին այլ է, երբ միացնում ես հեռուստացույցը և տեսնում, թե ինչպես է հեղափոխությունը, դատարանի դահլիճում, փորձում խժռել իր զավակին: Հատկապես սրտաճմլիկ է, եթե զավակին հիշում ես դեռ ուսանողական տարիներից... Հիմա ես ավելի հազվադեպ եմ հեռուստացույց դիտում, քանի որ լավ չեմ հասկանում, թե ինչ է ցուցադրվում եւ ինչու: Վերջերս, օրինակ, մի ֆիլմ էր ցուցադրվում, որտեղ գլխավոր հերոսներից մեկին ինչ-որ արտառոց կենդանի պատառոտեց եւ կերավ: Ինձ թվաց, թե դա փաստավավերագրական ֆիլմ է այն մասին, թե ինչպես է հեղափոխությունը խժռում իր զավակներին, բայց ծրագիրը նայելով պարզեցի, որ դա սարսափների ֆիլմ էր եւ նկարահանված էր ինձ

վախեցնելու համար: Իսկ թե ինչու է դա անհրաժեշտ, ես չեմ հասկանում: Ավելի լավ չէ՞ր լինի արդյոք, մի ֆիլմ նկարել ձմերուկի նման հրաշալի բույսի մասին...

Քչերն են հիշում, որ Դանիայի արքայազն Համլետի հայրանունը նույնպես Համլետ էր («Այն տարի, երբ մեր արքա Համլետը հաղթեց Ֆորտինբրասին, եւ ծնվեց փոքրիկ Համլետը...»): Դա զարմանալի չէ, որովհետեւ մենք ապրում ենք ինֆորմացիոն հզոր աղմուկի մեջ, և նոր ինֆորմացիան, որքան էլ անհեթեթ լինի, ջնջում է հնի մի մասը եւ տանում բոլորիս հիմարացման ուղիով: Արժեքավորը աղբից տարբերելն էլ դժվար է, կարծես Գլյուկի «մեղեդին» ես լսում քարհատ հաստոցների նվագակցությամբ: Իզուր չէ իմաստուն ժողովուրդը գերադասում դիտել լատինամերիկյան բազմասերիանոց ֆիլմեր, որոնց իմաստը հասկանալը շատ հեշտ է՝ դրա բացակայության պարզ պատճառով: Բացի այդ, ենթագիտակցորեն զգում ես, որ այդ տափակ ֆիլմերում հեղափոխություն չի լինի, եւ որ ամենազզվելին է՝ հետո չի խժռի իր զավակներին: Մյուս կողմից էլ հիմարությունը ոչ միայն տհաճ է, այլ նաեւ վտանգավոր, քանզի «Եթե երկար նայես անդունդին, այն կանդրադառնա քո մեջ»: Այդ պատճառով, ես գերադասում եմ խաղաղ անկյուն գտնել եւ մտածել որեւէ հաճելի բանի, ասենք՝ ձմերուկի մասին· Հասկանալի է, անընդհատ նույն բույսի մասին մտածելը ծանր խնդիր է: Նույնիսկ Միչուրինի նման տաղանդը երբեմն փոխում էր թեման եւ բարելավեց բազմաթիվ պտղատու բուսատեսակներ: Ես մի ժամանակ մեծ ցանկություն ունեի կարդալու Միչուրինի բնագրերը, որովհետեւ մի մեջբերում դրանցից ինձ հանգիստ չէր տալիս. «Մրջյունը խելացի, հասկացող եւ արտակարգ խորամանկ էակ է» Հիմք կար կասկածելու, որ տաղանդ լինելուց բացի, Միչուրինը եղել է նաեւ խելագար: Ժամանակակից հոգեբաններից շատերը պնդում են, որ ոչ միայն նա: Ափսոս, որ ոչ մի սցենարիստ չի հանդգնի սցենար գրել Միչուրինին նվիրված մի ֆանտաստիկ սարսափների ֆիլմի, որտեղ գլխավոր հերոսի՝ձմերուկի եւ մրջյունի խառնուրդի կեղեւը կտրելուն պես, կորիզները փախուստի են դիմում,եւ մնում է արնածոր անկորիզ ձմերուկը, իսկ հեղափոխությունը մոտ է գալիս... Չէ, չի ստացվում, ես բազմաթիվ հիմար ֆիլմեր եմ դիտել, ու ,դրանք ոչ միայն անդրադարձել են իմ մեջ, այլեւ շարունակում են աղմկել: Աղմուկից ազատվելու համար անջատեցի հեռուստացույցը եւ սկսեցի հիշել, թե նշանավոր մարդկանցից ում ձիու անունը ինչ էր: Բուցեֆալը Ալեքսանդր Մակեդոնացու ձին էր, Ինցիտատուսը՝ Կալիգուլայի, Բայազեթը՝ Աթոսի, իսկ թե ում ձիու անունն էր Բոէներգոս, այդպես էլ չկարողացա հիշել: Ձիու անունով տիրոջը չես գտնի, դա դժվարին խնդիր է: Ու ես նորից վերադարձա ձմերուկին. Հարթության ցանկացած անցկացում ձմերուկի միջով տալիս է շրջանագիծ: Այդպես, ձմերուկը կտրելիս, մարդկությունը հայտնագործեց

անիվը եւ կատաստրոֆիկ արագությամբ սկսեց զարգանալ՝ չմոռանալով ժամանակ առ ժամանակ հեղափոխություններ անել, որից հետո... դե, ինքներդ գիտեք: Անցած դարի ֆանտաստ գրողներից շատերը մարդկության երջանկությունը կապում էին ռադիոհաղորդակցման հայտնագործման հետ: Տարիներ անցան, հիմա ռադիո կա, իսկ երջանկություն՝ ոչ: Ավելին, գեղեցիկ մեղեդի լսելու ակնկալությամբ միացնում ես ռադիոընդունիչը եւ լսում, թե ինչպես է հեղափոխությունը խժռում իր զավակներին:

Երբեմն իրական կյանքն այնքան է դժվարանում, որ մարդիկ նախընտրում են երազները: Նիցշեն «Զրադաշտում» հիշատակում էր մի իմաստունի, որն ապրում էր քնելու համար: Քնելու համար անհրաժեշտ է ուղղակի օրվա մի մասը արթուն անցկացնել, սնվել եւ այլն, իսկ փողի բացակայության պայմաններում առաջանում են տոկոսով պարտքեր, կյանքը ծանրանում է, եւ երազները դառնում են տհաճ ու անհանգիստ: Ուրեմն, երջանկության ձգտումը հաճախ ամրացնում է կապանքները, իսկ ծայրահեղ լուծումը՝ հեղափոխությունը, խժռում է իր զավակներին: Մտորումների այս լաբիրինթոսում մի հարց ինձ վերջերս հանգիստ չի թողնում.

«Այնուամենայնիվ, ինչո՞ւ է ձմերուկը շերտավոր»...

ՎԵՐԱԴԱՐՁ

Չախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան
ՋԻՎԱՆԻ

Այդ դժնդակ օրերին հանդիպում էի մի օրիորդի հետ, որը ոչ միայն համոզված էր, որ ես պետք է կրկնեմ Ստախանովի* սխրանքը, այլև գտնում էր, որ իր սիրագորով հսկողության տակ դառնալու եմ նոր մարդ. չխմող, չծխող, հայհոյանք լսելիս կարմրող մի արքայազն, որին նա սպասում է 1968 թվականից: Պետք է նշեմ, որ օրիորդը թավջութակահար էր, և ես մի քանի անգամ ստիպված էի տեղից տեղ տանել այդ լարային նվագարանը. Տեսնողներ էլ եղան, վատացողներ էլ: «Էնցեֆալիտ» Գագոն նույնիսկ դիմել էր իր տեղամասային պոլիկլինիկա գանգատվելով հալյուցինացիաներից: Բնական է, որ Հին գվարդիայի տղաների շրջանում արագ լուր տարածվեց, թե Օջալը հերթական անգամ խելագարվել է և անցել նոր ռեժիմի. առավոտյան մարզանք, երեկոյան սիմֆոնիկ երաժշտություն. Մի խոսքով, ուրիշ բառ չեմ գտնի, դժնդակ օրեր էին... Իսկ երբ, ծննդյանս օրը. նվեր ստացա Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագման մասին» աշխատությունը, համբերանքիս չիբուխը հանգավ: Հանգչելը ջհանդամը, ընկճախտ սկսվեց երազումս սիմֆոնիկ նվագախումբը ես էի ղեկավարում... Հաղկավոր էր կտրուկ միջոցներ ձեռք առնել, և ես զանգահարեցի ԱԲՇ ոերթապահ փրկարարին և ասացի, որ էլ չեմ դիմանում: Longus-ին ձայնս հրճվանք պատճառեց. «Փառքդ շատ լինի, Տեր Աստված, մեռելը տռեց... Վազքով այստեղ... Տեկիլան** պատրաստ է, Քրիստափորիչը ուր որ է կլինի, Բիձուն ինչ-որ խելառ հնդկահավ է նվիրել, էս կես ժամ է լողարանում մորթում ենք, էն ծալովի փուռդ վերցրու, արի: Հա, չմոռանամ ասել, եթե Ռոստրոպովիչիդ հետ եկար, երկուսիդ էլ կշինենք Քրիստափորիչի հրամանն է: Սրիկա, քո պատճառով բոլոր կակտուսներս վարի տվեցի, վազելով արի»: Աստված կա, թե չէ չգիտեմ, բայց ամեն դեպքում օրինվի' ընկերություն ստեղծողը եղբայրը եղբոր համար այդպիսի զոհողության չէր գնա. . Longus-ի կակտուսների հավաքածուն քաղաքում հայտնի էր: Հաճախակի գործուղումների պատճառով նա չէր կարողանում ուրիշ բույսեր աճեցնել երաշտին չէին դիմանում, իսկ կակտուսները անսասան էին «մամիլյարներից» մինչև «պեյոտ»: Հարբած Longus-ը հաճախ ասում էր. «Մարդը պետք է կակտուսի նման լինի համեստ, քչով բավարարվող, իսկ նրան կպնողը պետք է տեղում փոշմանի»·

«Քավարան»-ի բաց պատուհանից հնչում էր գրիգի դաշնամուրային կոնցերտը: Ես գիտեի, որ «օղորմածիկից» ժառանգություն ստացած

կահույքի կազմում ամբիոն կա, բայց երբ տեսա Դելակրուայանին, այդ ամբիոնի հետևում կանգնած, տեկիլայի կիսատ շիշը ձեռքին սիրտս դող ընկավ:

«Նախ բարի գալուստ, ճիվաղ, իսկ երկրորդը լսիր, ինչ բան է սերը...

Մարդկանց մոտ լինում է մի հոգեվիճակ, երբ երջանկության մասին բոլոր պատկերացումները կապված են լինում կոնկրետ մեկի ներկայության հետ· Դա կարող է շատ երկար տևել, երբեմն մինչև վերջնագիծ· Ոմանք խելքի են գալիս, և տեսնելով, որ շրջապատված են երեխաների և թոռների հոծ բազմությամբ, մանթրաժից դուրս գալու համար ինչ-որ բառեր են ասում, որ ժողովուրդը կոչում է ծերունական իմաստություն· Մյուսների մոտ կարող է ակնթարթորեն անցնել կախված ջերմաստիճանի կամ մթնոլորտային ճնշման աննշան փոփոխությունից Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ քեզ մոտ ոչ առաջինն է, ոչ երկրորդը, դու ուղղակի վարժվել ես թավջութակով զբոսնելուն: Որոշում կայացնողը դու ես, ես ընդամենը շարժման հնոցապանն եմ, բայց եթե որոշել ես ասել ոչ, ու չգիտես ինչպես, թող քեզ համար ուղեցույց ծառայի Օնեգինի նամակը Տատյանային: Իսկ հիմա լցրեք: Ես չեմ հասկանում, էդ Longus-ն ու Բիձեն հնդկահավի հետ լողարանում ի՞նչ են անում, երեքի ձայնն էլ կտրեք»:

Ուշ գիշերով, բոլորովին մոռացած, թե Պուշկինի ծնունդից քանի օր է անցել, ես մի նամակ գրեցի աշխատելով չշեղվել դասական գրականության կանոններից, և դեղին վարդերի փնջի մեջ տեղավորելով, ուղարկեցի հասցեատիրուհուն: Պատասխան նամակում խախտված էին դասական գրականության բոլոր կանոնները այն ավելի շատ հիշեցնում էր զապորոժցիների նամակը սուլթանին: Մի հատված եմ լավ հիշում. «Վաղուց էի ուզում քեզ ցրել, ուղղակի ինձ հետաքրքրում էր, ի՞նչ աստիճանի անասուն կարող է լինել տղամարդը»·

Բարձր, շա՜տ բարձր, ցանկացած անասունի համար անհասանելի աստիճանի, մտածեցի ես, մի բաժակի մեջ հավաքեցի տեկիլայի մնացորդները և արդեն կում էի արել, երբ հիշեցի մի չնաշխարհիկ կնոջ հեռախոս, որը, կարծեմ, ֆլեյտա էր նվագում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎԱՆԳՈՒՄԸ

Համալսարանից հետո աշխատանքի էի անցել Տիեզերական ճառագայթների կայանի լաբորատորիաներից մեկում, որպես ճառագայթվող, չնայած աշխատանքային գրքույկումս ուրիշ բան էր գրված: Ժամանակն էր այդպիսին. մի բան ասվում էր, մեկ ուրիշը գրվում, երրորդը իրականացվում: Լճացում, մի խոսքով:

«Բարև, ես եմ» ֆիլմից շատերին ծանոթ մեր կայանը տեղակայված էր Արագածի հարավային գագաթի մոտ, ծովի մակերևույթից 3250 մետր բարձրության վրա: Դա բոլոր առումներով հրաշալի մի տեղ էր, եթե, իհարկե, Հայաստանին հաշվի չառնենք: Այսօրվա շատ ականավոր ֆիզիկոսներ ինձ հետ կհամաձայնեն, որ Հայաստանը կլիմակտիկ պսիխոզի մեջ խրված մի լաչառ ջադու էր, այն աստիճանի անտանելի, որ հարազատ որդին և հարսը նրան մի կերպ վռնդել էին տնից և, իմ կարծիքով, հասել նիրվանային: Նկարագրածս ժամանակներում փողոցում մնալու համար բարի կամք էր հարկավոր, ուստի Հայաստանին, որը բարի ոչինչ չուներ, պատսպարել էին մեզ մոտ, խոհարարի հաստիքի, առանց հաշվի առնելու, որ ճաշ եփել չգիտի: Մինչև օրս զարմանում եմ. ինչպե՞ս կարելի է թանով ապուրի փոխարեն նույն հումքից ստանալ քիմիական զենք: Բայց ժամանակը ցույց տվեց, որ խոհարարական ապաշնորհությունը սահման չունի. նույնիսկ խաշած ձուն կարելի է անտանելի խաշել... Չնկարագրեմ Հայաստանի ստեղծագործությունները, նշեմ ուղղակի, որ Արմոյի հետ մեր առաջին ծանոթությունը կայացավ նախաճաշից հետո, երբ ժողովրդին չվախեցնելու համար, մենք տեղակայվել էինք լճափին և ճոճանակավոր ժամացույցի պես, հերթով զկռտում էինք: Մինչ փորձում էի շունչս պահելով կարգավորվել, Արմոն այն միտքն արտահայտեց, թե ինչ լավ է, որ Ալիխանյանը Հայաստանին չի ճանաչել, թե չէ Տիեզերական ճառագայթների ֆիզիկան կանգ կառներ: Հասկանալով, որ կողքինս մեծ մտածող է (լավ կարգավիճակում ով ասես կմտածի, իմաստունը մտածում է նույնիսկ զկռտալիս), կամքս մի կերպ բուռս հավաքեցի ու շշնջացի. «Բա հիմա ի՞նչ է լինելու, հը՞»:

Պատասխանը մի մեջբերում էր Կոնֆուցիոսից. «Լավ ժամանակ համարձակ եղիր և՛ գործում, և խոսքում, վատ ժամանակ համարձակ եղիր գործում, բայց ոչ երբեք՝ խոսքերումդ»: Դեռ չէի հասցրել մտքի ամբողջ խորությունն ըմբռնել, երբ մի հովիվ մոտեցավ: Ինչպես շուտով պարզվեց, մեզնից վատ վիճակում էր. կինը երկու ամիս առաջ մահացել էր, վեց անչափահաս երեխա ուներ, աղ էլ չուներ: Աղի հարցն ակնթարթորեն լուծվեց, մնաց կնոջ հարցը: Եվ այստեղ ես զգացի տաղանդի և ուղղակի

շնորհաշատ մարդու տարբերությունը. տաղանդը առաջադրված խնդիրը լուծում է ձեռքի տակ եղած միջոցներով...

Մի պահ մտածելուց հետո, Արմոն ասաց «Հայաստանին տա՛ր... Երկու ոչխար թող էստեղ, տա՛ր... Քսան տարի է մարդը մեռել է, ինչ-որ անթրաշ ասպետի է սպասում, աչքիս էդ դու ես, հենց հիմա էլ տար»:

Նկատած կլինեք, որ սխալների 90 տոկոսը մարդիկ թույլ են տալիս մանրուքներում, ռազմավարական հարցերում քչերն են սխալվում: Եթե մեր ծանոթը ուղղակի խոհանոց մտներ ու ասեր. «Հայաստա՛ն, գնա՛նք...», Հայաստանը վայրկյան իսկ չէր հապաղի (ցանկացած նևրոտիկի համար իր գտնված տեղից վատ տեղ չկա), բայց մեր հյուրը, հին ադաթներից ելնելով, որոշեց իր նոր կնոջ ֆունկցիոնալ փորձարկումն անցկացնել հենց խոհանոցում և, որպես չանցած, թավայածեծ, փախավ-հասավ իր ոչխարներին: Բնականաբար մեզնից խիստ նեղացած... Մնացինք մենակ. Հայաստանը հիստերիայի մեջ, ես ու Արմոն՝ լճափին· Միառժամանակ անց դերերը փոխվեցին. տնօրենի հրամանով եռամսյակային 50 ռուբլի հավելավճարից զրկված Արմոն ու ես ընկանք հիստերիայի մեջ, իսկ Հայաստանը սկսեց ամեն առավոտ լճափին երգել (ցանկացած կին, որին ուզեցել են փորձարկել, բայց չի ստացվել, խորագույն հարգանքով է լցվում սեփական անձի նկատմամբ և, հնարավորության դեպքում, ամեն առավոտ, լճափին երգում է):

Գործի մանրամասները պարզվեցին տարիներ անց, երբ լճացմանը փոխարինել էր զարթոնքը: Ինստիտուտի հին կադրերից մեկը, որի հետ հանդիպեցինք մի մռայլ օր, բարիկադի նույն կողմում, ծիծաղելով հիշեց Հայաստանի չհաջողված առևանգման բոլոր մանրամասները և ինձ նվիրեց մի դիմում-բողոք, ուղղված նախկին տնօրենին:

Ահա այն.

«Հարգելի ընկեր Ամատունի

Ձեր ինստիտուտում շատ լավ մարդիկ են աշխատում, բացի ֆիզիկոսները, նամանավանդ՝ Արմոն ու Կարենը:

Սույն թվի օգոստոսի 12-ին, նրանք, շուրջ երկու ոչխարով, ինձ ծախեցին մի չոբանի: Ես ազնիվ աշխատավոր եմ: Խնդրում եմ օրենքի տառով պատժե՛ք:

Տիեզերական ճառագայթների խոհարար՝

Հայաստան Հայրապետյան»:

Արմոյին ես վաղուց եմ կորցրել Ինչքան եմ ինքս ապրելու, տեղյակ չեմ, բայց հույս ունեմ, որ այս զորավոր դիմումը ինձ երկար կուղեկցի, ջերմացնելով ամենացուրտ ու դաժան օրերը:

ՀԱՆՃԱՐԸ

«Մեր մեծագույն հիմարությունները կարող են շատ իմաստուն լինել»:
Լյուդվիգ Վիտգենշթայն

Արհեստավարժությունը, ի տարբերություն ձեռնաշարժության,պահանջում է երկար տարիների քրտնաջան աշխատանք: Հազարամյակների պատմություն ունեցող ազգերը,հատկապես, եթե դարեր շարունակ զբաղված են եղել քարից հաց քամելով, սովորաբար հոգնած են լինում, և գործունեության երկրորդ ոլորտը նրանց տանջված շարքերում գերիշխում է·

Հաշվեկշիռը կարգավորելու համար մարդկությունը մի ելք ունի միայն՝ կիրառել ԱԲՇ հոգևոր հայր և անփոխարինելի առաջնորդ Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանի հզոր մեթոդը: Հուսով եմ, բոլորը հասկացան, որ խոսքը սելեկցիայի մասին է՝ որպես ուղիղ ճանախարհ: Ճիշտ է, մեր ծրագրում առաջինը քչակեր և ցրտադիմացկուն հայի ստացումն է, բայց ԱԲՇ վերջին ընդհատակյա նիստի ժամանակ Ռոբերտ Զահրումյանը ապացուցեց, որ տաղանդների որոշակի տոկոսը անհրաժեշտ է, թեկուզ այն պատճառով, որպեսզի ժողովրդին բացատրեն, թե ինչո՞ւ են նրանք քիչ ուտում և ցրտին այդքան լավ դիմանում: Հակառակ դեպքում ազգը նորից անհավատ կդառնա, և Շարժման դիրքերը կթուլանան· Նոր էր առաջարկը միաձայն անցել, երբ ԱԲՇ-ների առաջ կրկին ծառացավ գենոֆոնդի հարցը՝ որտեղի՞ց Ասենք թե մեր շարքերից մեկ-երկու հատ գտանք, բա կանա՞յք: Եվ ի՞նչ երաշխիք, թե ստացված արդյունքը չի գերադասի Քրիստիան Դիորին Իսահակ Նյուտոնից: Մտքերի փոխանակությունը դեպի դանակահարություն էր գնում, երբ Դելակրույանը բացեց աչքերը, և աղմուկը, բնականաբար, դադարեց Քրիստափորիչի ծանր հայացքը միառժամանակ թափառեց գենոֆոնդի համար ոչ մի հետաքրքրություն չներկայացնող մեր շարքերով և հառնեց պատից կախված «Բացակա ընկերները» ցուցատախտակին... Հակիրճ խոսքը տաղանդի քույրն է՝ երեք բառ ասաց նա. «Կլոնավորում*: Կանչեք Բենզավոզին»:

Ոչ ոք չհանդգնեց կլոնավորման թեկնածու առաջարկել հենց իրեն՝ ուսուցչին, քանի որ բոլորս գիտեինք, որ երկու Մոցարտ. դա արդեն սարսափելի է:

Այո, բայց ո՞վ էր Բենզավոզը...

Իմ ցորնագույն, արբունքահաս ընթերցող, դու, որ հավատացիր ծարավիդ և ընտրեցիր «Սփրայթը», խեցգետնին գերադասում ես «Սնիքերս»-ը, իսկ ատեստատ ունենալուց առաջ սուսանակ չես ունեցել և

* կլոնավորում- մարդու պատճենների ստացում իր իսկ բջիջներից

հետևաբար չգիտես, թե ինչ է դժոխքը, ինչպե՞ս քեզ բացատրեմ, թե ով էր Բենզավոզ Գուգոն, կամ նրա ստրկուհի Իզաուրան: Բառերս անզոր են, քնարս՝ կոտրված, իսկ ներկերս՝ վաղուց չորացած... Ինձ մնում է միայն մի դրվագ պատմել այդ տաղանդաշատ մարդու արգասաբեր գործունեությունից, որպեսզի, գոնե ճանկերից մեկը տեսնելով, դու ճանաչես առյուծին...

Իր խոսքերով ասած՝ «կարմիր գույնի բանակից» տուն վերադառնալուց միառժամանակ անց, Գուգոն սկսեց հաճախակի հանդիպումներ ունենալ իրավապահ մարմինների հետ և աշխուժությամբ քննարկել այնպիսի փիլիսոփայական հարցեր, ինչպիսիք են «աշխատանք և ազատություն», «մարդու դերը բնության մեջ և հասարակական կյանքում», «պորտաբուծությունը՝ որպես քրեական հանցագործություն» և այլն: Իսկ ի՞նչ էր խանգարում Բենզավոզին, որևէ աշխույժ կոլեկտիվի կազմում մասնակցել հեքիաթը իրականություն դարձնելու գործընթացին: Ասածս կարող է անհավանական թվալ, բայց խանգարողը ընդամենը մի նախադասություն էր. «Հեռացված է աշխատանքային կարգապահության բազմակի խախտումների պատճառով, համաձայն ...»:

Հասկանալի լինելու համար նախ մի քիչ մանրամասն շարադրեմ գրառման ենթատեքստը. «Դիրեկտորի հրամանով և պրոֆմիության թույլտվությամբ, մեր ժրաջան կոլեկտիվը պարսավանքի է ենթարկում և աշխատանքից ազատում հարբեցող, կնամոլ և քաղաքական պոռնիկ Բենզավոզ Գուրգենին: Թող անիծյալ լինի նա ցերեկը և գիշերով, անիծյալ լինի, երբ խմում է և երբ ձախ է գնում, ու թող մինչև խոր ծերություն նրա անձնական հարցով զբաղվեն միայն իրավապահ մարմինները: Ամեն»: Այս թուղթուգիրն արված էր Բենզավոզի աշխատանքային գրքույկում:

Սիրելի ընթերցող, եթե մի օր հանդիպենք քեզ հետ բարիկադների վրա, մի' փորձիր վախեցնել ինձ գրչահատ դանակով՝ ես սոցիալիզմ եմ տեսել... Զարգացած սոցիալիզմի պայմաններում, աշխատանքային գրքույկում այսպիսի դաջվածք ունեցողը, եթե չէր ցանկանում հավաքարարի թիկնապահ աշխատել, երեք ճանապարհ ուներ՝ ինքնասպանություն, խելագարություն և այլախոհ քաղաքական գործունեություն: Բայց հանճարի մեծությունն այն է, որ նոր ճանապարհ ցույց տա մարդկությանը և այդ ճանապարհը փակուղի չտանի· Դեռ տարին չէր բոլորել այն օրից, ինչ Գուգոն հրաժեշտ էր տվել հարազատ կոլեկտիվին «Ամբոխ, ես ունեցել եմ ձեզ» խոսքերով, երբ բոլորս հրավեր ստացանք նրա կոնսպիրատիվ բնակարան՝ ընդհատակյա քեֆի: Բնակելի տարածության 40 %-ը զբաղեցնող սեղանը պատիվ կբերեր Կալիգուլային՝ հինգ տեսակի օղի, չորս տեսակի թթու, իսկ երշիկեղենը հաշվել չկարողացա՝ արդեն ուշ էր...Այդ սեղանը սպասարկում էին երեք ծանր վարքի տեր փերիներ՝ մեկ «մայր մեղվի» ղեկավարությամբ... Վաղուց արդեն մթնել էր, և սկսվել էին

սեղանակիցներիս հովհարային անջատումները, երբ Քրիստափորիչը բաժակ բարձրացրեց՝ առաջարկելով խմել իրականություն դարձող երազների կենացը և պահանջեց Բենզավոզից ցուցադրել հրավիրատոմսում խոստացված հրաշքը· «Մայր մեղուն» իսկույն լուրը հասցրեց Իզաուրային և վերջինս խոհանոցից բերեց մի տարօրինակ սկուտեղ՝ տարօրինակ ոչ թե ձևով, այլ բովանդակությամբ: Սկուտեղին դրված էին երկու թանաքաման, մեկ գրչածայրով գրիչ, որ շատ տարօրինակ է՝Գուգոյի աշխատանքային գրքույկը և, որ արդեն ապշեցուցիչ էր՝ մի լայնաբերան ապակյա անոթ, որում երեք ուտիճներ էին վազվզում: «Ծանոթացեք օգնականներիս հետ, քաջեր, Լիզի, Մայքլ և Ջոնի՝ երեքն էլ սոված: Իսկ հիմա տեսեք, թե ինչպես են նրանք ինձ օգնելու»: Գրչածայրը առաջին թանաքամանի մեջ թաթախելով (հետագայում իմացանք, որ պարունակությունը «Galina Blanca»-ի լուծույթ էր), Բենզավոզը չընդհատվող կորագիծ անցկացրեց իր գրքույկի գրության տառերով և, էջը բաց, իջեցրեց անոթի մեջ. Ջոնին, Մայքլը և Լիզին իսկույն հարձակվեցին բաց էջի վրա և մեր աչքի առաջ կերան ճակատագրական տողերի «Galina Blanca»-ով թրջված սև թանաքը· Երկարատև, բուռն ծափահարությունների և ճիչերի ուղեկցությամբ, պատմության մեջ առաջինը կուսությունը վերականգնած Բանզավոզ Գուգոյի աշխատանքային գրքույկը ձեռքից ձեռք անցավ ու հանձնվեց ժպտացող Longus-ին: ԱԲԾ լավագույն ձեռագիրն ունեցողը գլխով արեց, վերցրեց սև թանաքի մեջ թաթախված գրիչը և հիմնարկի կնիքի ու դիրեկտորի ստորագրության վերևում ավելացրեց. «Ազատված է սեփական դիմումի համաձայն, ըստ...»:

Պատանի ընթերցող, եթե չես հավատում ինձ, փորձիր Բենզավոզի մեթոդը սեփական ծննդականիդ վրա և կհամոզվես, որ չես ծնվել. Ուտիճներ խորհուրդ կտամ ձեռք բերել գործազուրկ հարևանիս տանը՝ նրանք միշտ քաղցած են: Երբեմն այդ ուտիճներից մեկնումեկը ինձ հյուր է գալիս և ես չեմ կարողանում մեջս ուժ գտնել նրան սատկացնելու: Չէ՞ որ չի բացառվում, որ նա կարող է Ջոնիի թոռնիկը լինել:

ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՈՐՍԱՁԵՎ

«Ծիծաղում է նա,
ով առաջինն է կրակում»:
ՍԱՄՈՒԵԼ ԿՈԼՏ

Կարծիք կա, որ առողջ տրամաբանությունը մեր քարանձավային նախնիների ընդհանրացված կենսափորձն է: Համարձակություն եմ գտնում պնդելու, որ նրանց կտակում կան ուրիշ արժեքներ ևս, մասնավորապես, սերը որսորդության և հավաքչության հանդեպ: Նկատած կլինեք, որ ինչպես քարե դարում, այնպես էլ հիմա, որսորդության նկատմամբ թուլություն ունեն հատկապես տղամարդիկ, մինչդեռ հավաքչությունն ավելի հատուկ է կանանց: Չնայած նրան, որ վերջին մի քանի հարյուրամյակում տղամարդիկ էլ սկսել են հավաքածուներ կազմել. դրոշմանիշներ, դրամներ, լուցկու տուփերի պիտակներ, ծուռ, ժանգոտ մեխեր, ինչեր ասես, որ չեն հավաքում: Ըստ երևույթին, դա տեսակի այլասերման վկայություն է, չնայած, հնարավոր է, կոնկրետ այդ թշվառների քարանձավային նախնիները, մամոնտների սպառման հետևանքով, նույնպես հավաքչությամբ են զբաղվել: Այս միտքը սփոփում է ինձ, քանի որ սուրճի բաժակների հավաքածու ունեմ, որը միշտ ձգտում եմ հարստացնել:

Այլ է իրավիճակը որսորդության հարցում. որսորդ կին հասկացությունը համահունչ է ոչխարապահ գայլին: Դա առիթ է տալիս ենթադրել, որ ամեն անգամ, երբ քարե դարի որևէ կին (բնականաբար, ընկերուհիների հետ միասին) փորձել է քարանձավային արջ կամ թրատամ վագր (մախայրոդոս) որսալ, հակառակն է ստացվել ու գենետիկ հիշողության թելը կտրվել է, որսորդ կնոջը տալով զուտ հիպոթետիկ բնույթ:

Ողբերգությունն այն է, որ դասական, շուրջկալով որսը, նետ ու աղեղի, և, հատկապես հրազենի ի հայտ գալուց հետո, դարձավ մի տափակ զբաղմունք, ավելի շատ վայել թագավորներին և գլխավոր քարտուղարներին, քան այն անվեհեր քաջերին, որոնք, զգալով սեփական գեների թուլացումը, ենթագիտակցորեն ձգտում էին կրկնել նախնիների սխրանքը տեսակը պահպանելու համար: Սակայն մարդկությունը միշտ լուծել է իր առջև ծառացած խնդիրները:

Ելքերից մեկը գտնվեց գործընթացի արհեստական բարդացումով: Որպես օրինակ կարող եմ բերել աղվեսի հոգնեցումը անընդհատ հետապնդմամբ (երբ որսի ակամա մասնակիցը, ի վերջո, սուտմեռնուկ է տալիս), կամ ձմեռային գայլաորսը (երբ քերծեներով շրջապատված գայլի վրա ձիուց ուղղակի «դեսանտ» է իջնում պարանով զինված որսորդը):

Նույն բնույթն է կրում ԽՍՀՄ-ում 60-ականների թվականներից որոշակի

տարածում ստացած «Նաիրիտ» որսաձևը, որը ցանկանում եմ ներկայացնել ձեր ուշադրությանը:

Որսի օբյեկտ են հանդիսանում ճագարամկները կամ ցանկացած այլ տափաստանային կրծողներ, հասկանալի է, ոչ այնքան փոքր, որ տուն բերողը ծաղրի արժանանա:

Նախքան որսաձևը նկարագրելը պետք է հայտնեմ, որ ամեն լեռնեցի, անկախ սոցիալական ծագումից ու դաստիարակությունից, դամոկլեսյան սրի նման իր գլխավերևում կրում է վախից խելագարվելու վտանգը, քանի որ ոչ ինքը, ոչ իր նախնիները կյանքում ճագարամուկ չեն տեսել և գենետիկորեն նախապատրաստված չեն այդ հանդիպմանը: Բացառություն են կազմում, թերևս, պոստմոդեռնիստ արվեստագետները. ճագարամկան կոնցեպտուալ տեսքը միայն նրանց կարող է հրճվանք պատճառել: Պատմականորեն, ինչ-որ չափով դրությունը շտկեց այբուբենի ստեղծումը (տեղեկատվական առումով): Որպես օրինակ կարող եմ բերել Հայկական լեռնաշխարհում գոյություն չունեցող մի հսկա կաթնասունի մանրամասն նկարագրությունը, որը նույնիսկ երկու անուն ստացավ. որմզդեղն և իշայծյամ: Անգրագիտության դեմ պայքարի նվաճումներից մեկը դարձավ այն, որ հիմա ամեն հայ հոգեբանորեն պատրաստ է իշայծյամի հետ հանդիպման: Ցավոք սրտի, որմզդեղնից փոքր շատ կենդանիներ ուշադրության չարժանացան: Բնականաբար, դրանց թվում էր ճագարամուկը· Իսկ գուցե ճագարամկան մասին հիշատակության բացակայությունը մեր մագաղաթյա մատյաններում բացատրվում է նրանով, որ լեռներից իջնող քերթողը նրան տեսնելուն պես կաթվածահա՞ր է եղել կամ խելագարվե՞լ, չգիտեմ· Կա ևս մի դժվարություն. որսորդները, սովորաբար, քիչ են կարդում և ճագարամկան մասին կարող են ընդհանրապես լսած չլինել: Ելքը մեկն է խմել: Խմել այն աստիճան, որ նույնիսկ սպիտակ տենդի կարապետ, կանաչ վիշապի հայտնվելը միայն քմծիծաղ առաջացնի, նամանավանդ որ, «Նաիրիտ» որսաձևը առանձնապես մեծ ճարպկություն չի պահանջում:

Այնուամենայնիվ, որոշակի գիտելիքներ անհրաժեշտ են: «Գիտելիքն ուժ է»,- ասել է Ֆրենսիս Բեկոնը, իսկ նա գիտեր, թե ինչ է ասում ..

«Նաիրիտի» կազմակերպման համար որոշակի գիտելիքներ են անհրաժեշտ էլեկտրա և գազաեռակցման ոլորտներից: Պետք է ճարել կալցիումի կարբիդ (գազաեռակցման պրոցեսում կիրառվող) և էլեկտրաեռակցման ձողիկներ:

Ինչ վերաբերում է «դավաճան» առնետին. Երևանում լիքն են (բռնեք թեկուզ սեփական շենքի նկուղում):

Էլեկտրաեռակցման ձողիկները հեսանի վրա սրվում են, մարտական սվինի սրության աստիճանի: Կալցիումի կարբիդը (0,5 կգ) լցվում է ցանցատոպրակի մեջ և ամուր կապվում «դավաճան» առնետի պոչից:

Հիմա մնում է միայն գրավյալ տարածքների որևէ տափաստանային հատվածում ճագարամկների գաղութ գտնել: Ստորգետնյա բազմաճյուղ բնի բոլոր ելքերը խցանվում են էլեկտրաեռակցման սուր ծողիկներով, իսկ մուտքերից մեկով բաց է թողնվում սարսափահար «դավաճան» առնետը.

Մնում է բնի մեջ մի քանի դույլ ջուր լցնել: Առնետի պոչից կապած կալցիումի կարբիդը, ջրի հետ փոխազդելով, ինտենսիվ կերպով ացետիլեն է արտադրում, որը (ցանկացած գազաեռակցող խոսքըս կհաստատի), շնչելու բան չէ: Խեղդամահության վախից խուճապահար, ճագարամկներն ու «դավաճան» առնետը հազալով փորձում են դուրս պրծնել իրենց թաքստոցից և խրվում են էլեկտրաեռակցման ծողիկներին...

Ինձ կարող եք առարկել, որ նկարագրածս գործընթացը ավելի շուտ սպա՞նդ է հիշեցնում: Պատասխանում եմ. ոչ ավելի, քան մամոնտների որսը քարե դարում:

ՑՐՏԵՑ ...

Զոհված հետախույզի մասին ընդունված է ասել,թե նա ցրտից չվերադարձավ

Ավան-Առինջ թաղամասի բնակիչներին կարող են ապշեցնել Պենտագոնի եռամսյակային հաշվետվությունները, քանզի ցրտից ետ չեկածների թիվը, ի տարբերություն Ավան-Առինջի, առանձնակի սեզոնային տատանումներ չունի: Պատճառներից մեկն էլ դա է, որ համապատասխան թվերը երկու վայրում էլ համարվում են պետական գաղտնիք և չեն հրապարակվում: Գուցե իմաստ ունի՞ Ավան-Առինջի գարնանային մարդահամարի հաշվետվությունում ցրտահարված ընկերների մասին գրել, թե զոհվել են հետախուզական առաջադրանք կատարելիս: Բայց, նախ, սեզոնային տատանումների հարցը կմնա, և երկրորդ արտասահմանյան հայագետների մոտ կարող է այն տպավորությունը ստեղծվել, թե ժամանակակից հայերը տարվա երեք եղանակներին զբաղվում են քարից հաց քամելով, իսկ ձմռանը հետախուզությամբ: Սարսափելի է մտածել, թե ինչ կկատարվի, եթե նոր զարգացող երկրները հետևեն մեր օրինակին... Այսպիսի մռայլ մտքերի մեջ մոլորված, Կարացուպայի* մասին գիրքը ձեռքիս, նստած էի վառարանիս դիմաց, երբ զանգահարեց Բիձեն և տեղեկացավ պատրա՞ստ եմ արդյոք մեր ազգն էներգետիկ ճգնաժամից դուրս բերելուն: Պետք է ասեմ, որ Բիձուն խաբելն անիմաստ է. նա ընդհանրապես ոչ մի բանի չի հավատում, ուստի ազնվորեն խոստովանեցի, որ ուտելիք և Վեդու արտադրության ցորենի օղի մի քիչ ունեմ, իսկ վառելիքից մնացել են միայն սոնետների մի պսակ և Ռիմսկի-Կորսակովի նամակագրությունը: Կես ժամ անց, ուսապարկի ծանրության տակ կքած, Վեդու «լիտրանոցը» մի ձեռքին, իսկ «դիպլոմատը»՝ մյուս, խորհրդավոր ժպիտը դեմքին Բիձեն ներս եկավ: Այդ խորհրդավոր ժպիտը, որ ինձ ծանոթ է ավելի քան քսան տարի, ոչ մի լավ բան չի խոստանում: Մինչ օգնում էի ուսապարկից ազատվել, նա ասաց. «Օջալ, հիմա դու կտեսնես, ինչպես է վառվում արժանապատիվ ապագան»: Ուսապարկի ամբողջ պարունակությունը՝ մոտ 20կգ, տարբեր թեկնածուների նախընտրական թերթիկներ էին, որ նա ժամանակին վերցրել էր, որոշ գումարի հետ միասին, ընտրողների շրջանում տարածելու նպատակով: Ի պատասխան այն հարցի, թե մյուս ձեռքում թեկնածուների գանգամաշկեր չե՞ն արդյոք, Բիձեն բացեց «դիպլոմատը» և

* Կարացուպա - խորհրդային սահմանապահ

հանեց ևս 3 շիշ «Վեդու ցորենի»... Մտքովս իսկույն անցավ, թե ինչ լավ է, որ Կարացուպան չի ճանաչել Բիծուն, թե չէ կխմեր, կկործաներ իրեն էլ, իր Ինգուս շանն էլ .. Սիրելի ընթերցող, թույլ տուր կես ժամ ջնջել Հայոց պատմությունից, քանզի ինքդ գիտես, թե ինչ դժվարությամբ է խմվում առաջին շիշը, նույնիսկ եթե Վեդու արտադրության է: Շիշուկես անց, ձեռքի հետ մի քանի մանր-մունր համաշխարհային պրոբլեմ լուծելուց հետո, իմ վաղեմի ընկերն անցավ իր այցելության բուն նյութին: Ըստ Բիծու, ազգիս սառչելու դեմ պայքարի հաջողության բանալին թաքնված է գլաուբերյան** աղի մեջ:

«Ամառային արևի կիզիչ ազդեցության տակ ֆազային փոփոխության ենթարկված 6 տոննա գլաուբերյան աղը կարող է 20 աստիճան ջերմություն ապահովել միջին չափերի բնակարանում ամբողջ ձմեռվա ընթացքում Մնացածը տեխնիկական մանրուքներ են»: Սա էին պնդում Բիծու հաշվարկները, որ արված էին «Արժանապատիվ ապագայի» նախընտրական թերթիկի լուսանցքներում: Արդեն պատրաստվում է հարցնել, թե ինչու հաշվի չեն առնված ջերմության աշնանային կորուստները, երբ նկատեցի, որ Բիծեն անհետացել է... Եվ այսպես միշտ... Կհայտնվի կես տարի անց հերթական պրոբլեմի լուծման բանալին ձեռքին· Նույնիսկ չհասցրեց լսել իմ առաջարկը կենսագազի տեխնոլոգիայի կիրառման վերաբերյալ· Այնինչ դրանում է փրկությունը: Երևանի ամբողջ կոյուղու պարունակությունը պետք է վարակել համապատասխան մանրէներով, ստանալ կենսագազ և այն այրելով ջեռուցել քաղաքի բնակարանները: «Դու պետք է բարին կերտես չարից, քանզի ուրիշ հումք չկա»: Կարծեմ այսպես էր ասում Մեֆիստոֆելը Ֆաուստին, և ես կասկած անգամ չունեմ, որ նա ի նկատի ուներ կենսագազը...

Վեդու արտադրությունից պայծառացած, «Արժանապատիվ ապագայից» տաքացած՝ ես քայլում էի Տերյան փողոցն ի վեր ու ժպտում միայն տգեղ կանանց, որպեսզի փոքր-ինչ մեղմացնեմ բնության դաժանությունը... Ահա հարազատ դպրոցս: Ահա այն սրճարանը, ուր այնքան գարեջուր ենք խմել, որ կարելի էր դիմացի ավազանն ամբողջովին լցնել... Ես հպարտ էի և հանգիստ, որովհետև չորս կողմս հումք էր կենսագազի արտադրության համար: Իսկ մնացածը տեխնիկական մանրուքներ են:

ԱՎԵԼԻ ՑՐՏԵՑ ...

Ցուրտ ժամանակ էսկիմոսը շուն է վերցնում անկողին, ավելի ցրտելու դեպքում երկուսը և այդ գիշերը կոչվում է երկու շան գիշեր:

Հիմա Երևանում երեք շան գիշերներ են, և իմ տիպի, վառելիք չունեցող ամուրիներին միայն մի միտք է սփոփում քնելուց առաջ եթե առավոտյան չարթնանամ, ապա գոնե երկար ժամանակ թարմ կմնամ.. Մի քանի տարի առաջ, քաղաքապետի որոշմամբ, գնդակահարվեցին քաղաքի անտեր շները, և այդ իսկ պատճառով մենք անկարող ենք հետևել գրենլանդական էսկիմոսների իմաստուն օրինակին: Խոսք չկա, Վեդու արտադրության ցորենի օղին նույնպես հզոր միջոց է, սակայն ինչպե՞ս կարելի է նրանով տաքացնել, ասենք, ծծկեր մանուկներին, կամ այն դեռատի օրիորդներին, որոնց հոգին դեռ ոչինչ չի ալեկոծել, Տերյանի բանաստեղծություններից բացի: Առավել ևս, «Վեդու ցորենի» կարող են չճարել, իսկ թե ինչի կարող է բերել այլ խմիչքների օգտագործումը, հուսով եմ, ավելորդ է նշել (հիշեք, թեկուզ, Մոցարտին*) Տեղյակ լինելով, որ խոշորագույն գիտական խնդիրներից շատերը լուծված են եղել քնած ժամանակ, ես 200գ ընդունեցի և մտա անկողին. Մենդելեևն** իր պարբերական աղյուսակը տեսել է երազում, իսկ ես երազում տեսա Մենդելեևին, Ստախանովին*** և Կարացուպային* իմ տանը, ցորենի օղի խմելիս: Սեղանի կողքի բազմոցին, Կարացուպայի Ինգուս շանը փաթաթված, քնած էր Մոցարտը: Երբ Մենդելեևն առաջարկեց հոտնկայս խմել գրենլանդական էսկիմոսների և հայ ժողովրդի դարավոր բարեկամության կենացը, ես վեր թռա սառը քրտինքի մեջ կորած... Լուսանում էր... Ագռավների և կաչաղակների մի հոծ խումբ, մոռացած, որ իրենք ձմեռող թռչուններ են, երամ էին կազմել և պատրաստվում էին թռչել տաք երկրներ: Ցրտի և սովի պատճառով լրիվ անջատված, նրանք թռան դեպի հյուսիս: Այս տխուր տեսարանը ես դիտում եմ արդեն 3-րդ անգամ: Ի՜նչ մղձավանջ էր... Եվս մի այսպիսի երազ, և ես չեմ վախենա ոչ մի ցրտից, իսկ խնդիրը կմնա չլուծված, քանզի բոլոր գերազանցիկները չվել են տաք երկրներ: Ակամայից հիշեցի Բենզավոզ Գուրգենի հին խրատներից մեկը. «Մտածի՛ր, Օջալ, դու այնքան հիմար չես, ինչքան իրականում»: Նոր էի սկսել մտածել, երբ ուղեղումս կայծակի նման շանթահարեց՝ V=KT, որտեղ V -ն մոլեկուլների շարժման

* Մոցարտ- ավստրիացի կոմպոզիտոր

** Մենդելեև -ռուս գիտնական

*** Ստախանով- խորհրդային հանքափոր

արագությունն է, K-ն Բոլցմանի* հաստատունը, իսկ T-ն բացարձակ ջերմաստիճանը: Փառքդ շատ լինի, Լյուդվիգ Բոլցման, խնդիրը լուծված է: Ուղղակի պետք է բնակարանից դուրս նետել բոլոր դանդաղ մոլեկուլները, իսկ փոխարենը դրսից ներս բերել միայն արագներին: Ջերմաստիճանի բարձրացումն անխուսափելի է ըստ սահմանման: Բերկրանքիս չափ ու սահման չկար ես ցրտից փրկել էի ամենաքիչը ողջ մարդկությունը, բայց պետք է խոստովանեմ, որ տխրության մի մասնիկ էր խառնված այդ բերկրանքին Վեդու արտադրության ցորենի օդին նահանջում էր երկրորդ պլան...

* Բոլցման-ավստրիացի գիտնական

ԱՋԱՏԳԱՐՈՒՄ ՅՐՏԻՑ

«Գիտելիքն ուժ է»
Ֆրենսիս Բեկոն

Բևեռախույզները, որպես կանոն, լավ պատրաստված են լինում ցրտին դիմակայելուն, և մենք շատ բան ունենք նրանցից սովորելու: Այս սարսռազդու օրերին Հին Գվարդիայի բազմաչարչար տղաներից շատերը, բացի ցորենի օղուց, լցված են նաև խորին ափսոսանքի զգացումով այն բանի համար, որ ժամանակին բևեռախույզ չդարձան: Ո՞վ կմտածեր, թե ինչ կորած, մոռացված բաներ է հուշելու մեզ ցուրտը. փայտի, ածխի, աթարի ունիվերսալ վառարաններ, պրիմուս, կերոգազ: Իսկ ինքնաշեն էլեկտրական տաքացուցիչների մասին էլ չեմ խոսում. դրանցից շատերը տեսնելով Օհմը* չեղյալ կհայտարարեր իր օրենքը: Հեռուստատեսությամբ տարբեր մասնագետներ կոչ էին անում պահպանել էներգիան, մոռանալով, որ էներգիայի պահպանման օրենքն ունիվերսալ բնույթ ունի և իրենց կոչերի կարիքը չի զգում: Չմեղադրենք նրանց, քանզի ցրտից մարդ կարող է սեփական ազգանունն էլ մոռանալ, ուր մնաց՝ մասնագիտությունը: Ես արդեն չեմ հիշում, թե քանի քիթ ու ականջ էր ցրտահարվել ԱԲՇ շարքերում, երբ «Բոլոր պրոբլեմների վերացման» ֆրակցիան ձեռնամուխ եղավ սառչելու խնդրի լուծման պրոբլեմին: «Դիալեկտիկայի» հեղինակ Հեգելը** ասում էր, որ Միներվայի *** բվեճը մթնշաղին է թռչում, իսկ նա գիտեր, թե ինչ է ասում դահլիճում ջերմաստիճանը 0 էր, երբ զեկուցումով հանդես եկավ փրկարար Longus-ը: Համառոտ ներածական խոսքում զեկուցողը թվարկեց փայտի, քարածխի, նավթի սակագները և իր անձնական վերաբերմունքն արտահայտեց դրանց վաճառքով զբաղվողների ծնողների և հարազատների վերաբերյալ: Այնուհետև, չնկատելով դահլիճը լքող պատգամավորներին, Longus-ն անցավ զեկուցման բուն նյութին: Թռուցիկ նշելով, որ լավ է մոռանալ մայրենի լեզուն, քան էներգիայի պահպանման օրենքը, զեկուցողը վերջին խոսքերով հիշատակեց այն գովազդողներին, որոնք պնդում են, թե իրենց արտադրության տաքացուցիչները նույն ջերմությունն են տալիս, ինչ որ մյուսներինը, բայց կրկնակի քիչ հոսանք են ծախսում: Դրանից հետո նա անցավ քամու էներգիայի օգտագործման խնդրին և կեղտոտ հայհոյեց: Այդ ամենը լսելով ԱԲՇ նոր անդամագրվածների մեծ մասը ընկճախտ ձեռք բերեց, քանի որ զգաց իր. ոչ միայն էներգիայի պահպանման օրենքը, այլև մայրենի լեզվի բազմաթիվ արտահայտություններ չիմանալը:

* Օհմ - գերմանացի ֆիզիկոս
** Հեգել - գերմանացի փիլիսոփա
*** Միներվա - իմաստության աստվածուհի

Ընդհատակյա նիստը, այս էլ որերորդ անգամ, մտավ փակուղի .. Ո՞վ կարող էր այնտեղից մեզ դուրս բերել, եթե ոչ ԱԲՇ հոգևոր հայր և անփոխարինելի առաջնորդ, մեր շարժման անդուլ հնոցապան, անխորտակելի հածանավ Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանը Նիստի բոլոր մասնակիցները հետագայում խոստովանեցին, որ պատմական ճառը լսելիս են զգացել, թե ինչով է տարբերվում հանճարը առաջին մեծության տաղանդից: Անձամբ ինձ վրա ելույթը թողեց Բախի «Տոկկատա և ֆուգա ռե մինոր»-ի տպավորություն: Ճառի միայն մի հատվածը լսելու համար արժեր Հյուսիսային բևեռում ձմեռել... Ահա այդ հատվածը. «Զինակիցներ... փայտից և այլ էներգակիրներից ջերմություն ստանալ կարող է ամեն մի ախմախ: Մեր խնդիրն է +20 ջերմաստիճանի օդ ստանալ -20 աստիճան օդից, ընդ որում առանց ջեռուցման: Դրա համար ես բոլորիդ առաջարկում եմ անցնել հեղուկ օդի արտադրման սեփական բնակարաններում: Արտադրված հեղուկ օդը, որի ջերմաստիճանը -196 աստիճան է, պետք է անմիջապես պատուհանից թափել փողոց· Մենք կտաքացնենք մեր բնակարանները շրջակա միջավայրի սառեցման հաշվին և այդպես կապրենք դարեր»: Երկար կյանք ունենաս, Քրիստափորի՛չ, գոնե մինչև ամառ, որպեսզի ազատագրես մեզ անտանելի շոգից...

ՈՒՍՈՒՑՉԻՆ ՀԻՇԵԼԻՍ

Կյանքի 51 տարին չբոլորած, առանց խումհարից դուրս գալու, իր մահկանացուն կնքեց Ազգային Բրոունյան Շարժման հոգևոր հայր և անփոխարինելի առաջնորդ, մարդկության հավերժ հերթապահ փրկարար Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանը: Հանգուցյալի վերջին խոսքերն էին. «Զգուշացրեք Մոցարտին»

Հիմա, երբ երկու գլուխ ցածրացած մարդկությունը նրա մասին ամենատարբեր գովասանքներ է տպում իր անթիվ թերթերում, որոնք զինակիցներս ու հարազատներս խնամքով թաքցնում են ինձանից, ես ցավով հիշում եմ մեր վերջին զրույցներից մեկը, երբ նա ասաց. «Օջալ, ոսկե տարիքը 50-60 տարիներն են, երբ ինչ-որ բան արդեն գիտես և որոշ բան դեռ կարող ես»: Հանգուցյալի կտակի համաձայն, նա թաղվեց «օղորմածիկի» կողքին, երկու տարի առաջ ընդհատված զրույցը շարունակելու ակնկալությամբ: Իսկ հիմա լսիր, ընթերցող, թե ինչ թռիչք ընդհատվեց...

Այն անձրևոտ գիշերը, երբ ուսուցիչն աշխարհ եկավ, իրար էր խառնվել Շիլաչիի ամբողջ ծննդատունը: Ծեր մանկաբարձուհին, իր աշխատանքային պարտականությունները մոռացած, անընդհատ խաչակնքում էր, իսկ ծննդատան գլխավոր բժիշկը, հուզված հոր այն հարցին, թե ինչո՞ւ երեխան լաց չի լինում, վախվորած պատասխանեց. «Նա մտածում է... Հեռու կգնա... Խորհուրդ կտամ անունը դնել Վլադիմիր»: Երջանիկ հայրը թաքցրեց ատրճանակը և լաց եղավ որդու փոխարեն:

Հատորներ են գրված Քրիստափորիչի երջանիկ մանկության, էքսպերիմենտալ կենսաբանության ոլորտում նրա ապշեցուցիչ հետազոտությունների մասին, բայց դեմագոգները երբեք ամբողջ ճշմարտությունը չեն ասում, այլ միայն նրա այն մասը, որը իրենց եկամուտ է խոստանում: Փոքրիկ Վլադիմիրի մանկությունը անամպ չէր... Երբ Շիլաչիի նարդու բաց առաջնության կիսաեզրափակիչում նրան որակազրկեցին, իբր թե, հակառակորդների վրա հիպնոտիկ ազդեցություն կիրառելու համար, Քրիստափորիչը այնպիսի յուրօրինակ ձևով բողոքարկեց դատավորական կազմի որոշումը, որ հայտնվեց մանկական գաղութում: Հիմա քչերը գիտեն, որ «Դու շեշը որպես կամք և երևակայություն» աշխատությունը գրված է եղել կալանավայրում... Հանցավոր վարչակազմը արգելեց այն տպագրել, պատճառաբանելով, որ գրվածքում արտացոլված չէ «Կոմկուսի ղեկավար դերի աճը»: Նորմալ հրատարակվելու համար Դելակրույանը որոշեց շտապ փոխել

վարչակարգը, և որպես հետևանք ևս 13 տարի ազատազրկում... Ինչ կարող ես անել երեխաները մաքսիմալիստ են, բայց, ինչպես Բենզավոզ Գուգոն էր ասում. «Բենզինը ջրով չես հանգցնի», և Փյունիկը հառնեց նորից... Խոր ընկճախտի մեջ խրվեց ամբողջ Կոշի գաղութը, երբ երիտասարդ Դելակրուայանին ժամկետից շուտ ազատեցին թգբեհի արտադրության տեխնոլոգիայի կատարելագործման համար. Գաղութի պետը, իր աշխատասենյակի պատին կախված դիմանկարը փոխելու համար նույնիսկ քիչ էր մնում վարչական տույժ ստանար, բայց ճարպկորեն խույս տվեց, ասելով, թե. «Ի՞նչ եք ախմախ-ախմախ դուրս տալիս, սա ձեր նույն Վլադիմիրն է, ուղղակի քսան տարեկանում»: Նույնիսկ ամենաիմաստուն մարդիկ խելոքանում էին Դելակրուայանի հետ շփվելիս:

Որոշ ժամանակ, «Ի՞նչ անել» հարցը իր համար վաղուց պարզած, Քրիստափորիչը նստում էր «Կռունկ» գարեջրատանը և մտածում, թե «Ինչի՞ց սկսել»: Այնտեղ էլ կայացավ մեր ծանոթությունը:

Սուտ են ասում, թե ընդհատակում կարելի է հանդիպել միայն առնետների: Այս կյանքում ամենավեհ այրերին մենք հանդիպել ենք նկուղներում, ցանկապատների կամ սեղանների տակ, որպես կանոն պառկած վիճակում: Երբ ծանոթանալուց հետո, երկու ժամ անընդհատ իրար տուն էինք ուղեկցում, իմ կոշիկի կրունկը պոկվեց, ու մենք մտանք մոտակա կոշկակարի արհեստանոցը: Դելակրուայանը սևեռուն հայացքով նայեց արհեստանոցի պատին, ինչ-որ մերկ պարուհու լուսանկարի կողքին փակցված Ռոբերտ Բրոունի դիմանկարին և ասաց. «Օ՜ջա՜լ, մի դրոշակ կարիր, ուսմունք եմ հորինել»· Եվ ծածանվեց շուտով Հին Գվարդիայի գլխավերևում Ազգային Բրոունյան Շարժման չալպտուրիկ դրոշը...

Եթե նույնիսկ Դելակրուայանը ոչինչ չաներ, մասնավորապես, չվերականգներ Բրոունյան շարժումը որպես ապրելակերպ և գաղափարախոսություն, ցույց չտար մեզ պայծառ ապագան և չբացատրեր, թե ինչու է նա անհասանելի, միայն «Տարերային անարխիստի հիշատակարանը» բավական կլիներ նրան մարդկության առաջին մեծության հանճարների շարքը դասելու համար: Վերջերս լատինաամերիկյան և աֆրիկյան պետություններում մեր դեսպան, գեներալ Կճոզյանն ինձ հայտնեց, որ Զիմբաբվեի նախագահը, «Տարերային անարխիստի հիշատակարանի» նախաբանը կարդալով, անմիջապես կարգադրել է հեղինակին շնորհել առաջին աստիճանի «Ոսկե բառաբ» մրցանակ: Մեծերի ճանաչումը միշտ ուշացումով է գալիս, չնայած, կարծում եմ, Քրիստափորիչը կհրաժարվեր մրցանակից, քանի որ կյանքում երկու բան տանել չէր կարողանում. ռասիզմը և նեգրերին: Դելակրուայանի փոքրիկ, մարդկային թերություններից էին նաև մարտնչող աթեիզմը, սերը սեփական զոքանչի և Վեդու արտադրության ցորենի օղու

նկատմամբ (նա անվանում էր այն «մեռոն»):

Դարեր կանցնեն, և մարդկանց փոխարինելու եկած կիբորգներն ու ռոբոտները քմծիծաղով կթերթեն մեր ընտանեկան ալբոմները և մեզ կընկալեն իբրև իրենց ուղեղի հնարավորությունների % -ն օգտագործող սպիտակուցային էակներ, որոնք ստիպված էին անընդհատ նյութափոխանակության մեջ գտնվել շրջակա միջավայրի հետ, բայց կա երկու նկար, որոնց նայելիս նրանց քմծիծաղը կփոխվի խոր հարգանքի ու ակնածանքի: Այդ նկարներում, ծաղրական ժպիտը դեմքներին, դեպի ապագա են նայում Ռոբերտ Բրոունը և Վլադիմիր Դելակրույանը...

ԱԶԳԻ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՁԵՌՆԱՐԿ

«Ամեն ինչ պետք է պարզեցնել հնարավորին չափ, բայց ոչ ավելի»:
ԱԼԲԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆ

Օզանյան Անդրանիկի պատգամի համաձայն, «Ամեն օր, քնանալու նպատակով գլուխս բարձին դնելիս, ես մի քիչ մտածում եմ ազգիս մասին» և հետաքրքիր եզրահանգումների գալիս... Բացի հին, բազմադարյա պատմություն ունեցող ժողովրդի անարժան զավակ լինելը, ես մի պրոբլեմ էլ ունեմ որքան քիչ եմ ծանոթ լինում որևէ խնդրի, այնքան ավելի մեծ եռանդով և խորաթափանցությամբ եմ ձեռնամուխ լինում հարցի լուծմանը և այնպիսի ապշեցուցիչ արդյունքների հասնում, որ ինքս էլ եմ զարմանում. Մի հարմար առիթով (կարծեմ նշում էինք «Անտառապահի օրը») ես խնդրեցի Բիձուն իր կարծիքը հայտնել սույն ֆենոմենի մասին ու գիտե՞ք ինչ ասաց այդ սրիկան. «Առաջինը չես, դեռ Թոմաս Մորն էր «Ուտոպիայում» նշել. «Հիմարության գագաթին հասնողն իրեն իմաստության գագաթին է զգում»:

Այդ պահից սկսած հետազոտություններս շարունակում եմ մենակ և պարտավոր եմ ձեզ ներկայացնել կարևորագույն արդյունքներից մի քանիսը:

1. Բազմադարյա պատմություն ունեցող ազգերը, հատկապես եթե ռեժիմով կեղեքվել են հարևան քոչվոր ցեղերի կողմից, ձեռք են բերում որոշ կարևոր հատկանիշներ, որոնք թույլ են տալիս անորոշ ժամանակով երկարաձգել գոյատևումը: Դրանցից ամենապարզունակը նյութական արժեքների ստեղծման դադարեցումն է, ինչը հարևան վայրի ցեղերին բերում է նույն թշվառ կարգավիճակին, որում գտնվում է դիտարկվող ժողովուրդը: Նշեմ, որ վտանգավոր ուղի է, քանզի նյութական արժեքների ստեղծման լրիվ դադարեցումը դիտարկվող ժողովրդին նույնպես կարող է դարձնել քոչվոր և վայրենի:

2. Կա ավելի նուրբ, բայց ազդեցիկ եղանակ: Այն է. ստեղծել խոշոր կշռագաբարիտային նյութական արժեքներ (օրինակ եկեղեցի կամ վանքային համալիր), որոնք ենթակա չեն մաս-մաս տեղափոխման: Իհարկե, հարևան վայրենիները կարող են բարկանալ և մի քանի արժեք ուղղակի ավերել, բայց վաղ թե ուշ կհասկանան, որ վանդալիզմը ոչ միայն հոգնեցուցիչ, այլև անիմաստ զբաղմունք է: Անպայման նշեմ, որ հսկայական քաշն ու չափերը պարտադիր են: Օրինակ յարը, որը նույնպես մաս-մաս տեղափոխման ենթակա չէ, կարելի է տեղափոխել ամբողջությամբ (հիշիր «Սիրեցի, յարս տարան...»), փոքր կշռագաբարիտային չափերի պատճառով:

Ընթերցողը կարող է հարցնել. «Մի քիչ ուշացած չե՞ն Ձեր

հետազոտությունները, պարոն: Որտե՞ղ եք Ձեր շուրջը քոչվոր, վայրենի ցեղ տեսնում»:

Ես կպատասխանեմ ձեզ Բիծու խոսքերով (չնայած սրիկայի մեկն է). «Պատմության ուսումնասիրությունն ու մեկնաբանումը մի նախավարժանք է, որ մենք կատարում ենք իրականությունը վերափոխելուց առաջ»... Ուստի մինչ առօրյա հոգսերին անցնելը, հիշատակեմ գոյատևումը երկարաձգելու ևս մի միջոց, որը ճիզվիտներին էլ պատիվ կբերեր:

3. Խոշոր կշռագաբարիտային, մաս-մաս չտեղափոխվող նյութական արժեքներին զուգահեռ, ստեղծվում են հոգևոր արժեքներ (այբուբեն, կերպարվեստ, խազեր և այլն), որոնք թալանելուց հետո, կեղեքիչը, փորձելով յուրացնել տարածը, «կյանքում մնացած ամեն ինչին մնաս բարյավ ասելով» անցնում է նստակյաց կյանքի, սեփական մշակութային արժեքներ ստեղծում և սկսում մտածել հավերժի մասին...

Նախավարժանքն ավարտված է. անցնենք առօրյա հոգսերին:

Տիգրան Մեծից Տիգրան Պետրոսյան ընկած ժամանակահատվածում բազմադարյա պատմություն ունեցող իմ տառապյալ Հայրենիքն անընդհատ փոքրանում էր, և միայն այս վերջերս մի քիչ մեծացավ Փոխանակ ցնծագին ողջունելու այս գեղեցիկ երևույթը, ոմանք լրջորեն խոսում են տարածքների վերադարձման մասին: Քանի որ հանգամանքների բերումով մենք պարտավոր ենք մասնակցել քննարկմանը, ես մի առաջարկ ունեմ. տարածքները զիջել, բայց ո՞ւմ. իհարկե Ճապոնիային. Բացատրեմ թե ինչու:

Ետպատերազմյան, ջախջախված, իր «Հյուսիսային տարածքները» կորցրած Ճապոնիան այնպիսի մի Վերածնունդ ապրեց, որ այլ կերպ չեն կոչում, քան «Ճապոնական հրաշք»: Իսկ հիմա, քաղաքակիրթ մեթոդներով, պայքարում է կղզիների վերադարձման համար. Դա մի քիչ չի համընկնում իմ ծրագրի հետ: Ճապոնիային պետք է վերադարձնել Հորադիզը «Հայ-Ճապոնական համատեղ հրաշք» ստեղծելու նպատակով Ինչ վերաբերում է հարևան երկրին, ապա նրան պետք է վերադարձնել Կունաշիր կղզին, որպես «Խաղաղօվկիանոսյան Ինքնավար կղզի Ադրբեջանի կազմում»: Մյուս կղզիները թողնում ենք Ռուսաստանին, որպեսզի լրիվ չխախտենք ժամանակների կապը: Կարծիք կա, որ նախքան Ազգը փրկելը, մտածողը պետք է վարպետանա ավելի փոքր օբյեկտների վրա (ասենք, օրինակ, փրկի որևէ կատվի, կամ՝ մարդու), բայց զգուշացնեմ, որ ժամանակը կարող է չհերիքել: Բացի այդ, խոշոր մտածողին (իսկ այդպիսին ենք բոլոր ընկերներով, բացի Բիծուց) վայել չէ զբաղվել մանր-մունր պրոբլեմներով: Այսքանը, կարծես թե, բավական է, բայց մի հարց է ինձ տանջում. այս հետազոտություններն ու առաջարկս մշակութային արժե՞ք են, թե՞ ոչ...

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Ժամանակները փոխվում են, և եթե առաջներում համարվում էր, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է տուն կառուցի, ծառ տնկի և զավակ դաստիարակի, ապա հիմա մենք գերադասում ենք քանդել հինը, ծառ կտրել և նախընտրել անվտանգ սեքսը: Ինչևէ, ընտրությունների անհրաժեշտության մասին խոսելն իսկ ավելորդ է: Նույնիսկ ցանկացած հիմարություն պետք է իրագործվի օրենքի սահմաններում, իշխանությունների կարգադրությամբ և իրավապահ մարմինների աչալուրջ հսկողության տակ. այս է պնդում առաջատար մարդկության փորձը: Մեր ազգաբնակչության զգալի մասն անձնական փորձի հիման վրա է համոզվել, որ ավելի լավ է սխալվել հարսնացու ընտրելիս, քան թաղապետ: Հիմնական դժվարությունը, իհարկե, թեկնածուներին միմյանցից տարբերելն է: Խոսքը ոչ միայն նախընտրական խոստումների մասին է. դրանք նույնն են բոլորի մոտ անխտիր և հանգեցվում են դրախտի մասնաճյուղի գործարկմանը ձեր թաղի տարածքում: Զարմանալին այն է, որ այդ տնաքանդները արտաքնապես էլ նման են. հղի կնոջ կազմվածք, հայերեն հիշեցնող լեզվով կրակոտ ճառեր, «Մերսեդեսներ», դե գնա և տարբերիր՝ Արդյունքն էլ , հիմնականում, նույնն է. ազգաբնակչությունը համոզվում է, որ իրենց ընտրյալը Ռիչարդ Առյուծասիրտը չէ, քանի որ նախընտրական խոստումները չի կատարում, իսկ դա ասպետին վայել չէ: Ու սկսվում են հերթական գնդիկ-բոքոնիկների ընտրարշավները... Այս գործընթացը կարող է ձանձրացնել, իսկ թե ինչ սարսափելի զգացում է ձանձրույթը բոլորս գիտենք: Այն ստիպեց գեներալ Պինոչետին պետական հեղաշրջում կատարել և Մարիպոզայի իր պատմական ճառում նշել. «Շուտով ես կմեռնեմ, բայց ընտրություններ չեն լինի»: Պինոչետը սխալվեց վաղ թե ուշ ընտրություններն անխուսափելի են: Ուղղակի պետք է ճիշտ ընտրել ընտրությունների ձևը: Մարդկության վերջին տարիների փորձը ցույց տվեց, որ բազմաթիվ փոքրիկ, զարթոնք ապրող երկրներ դադարեցին զարգանալ, որովհետև փորձում էին կրկնօրինակել մեծ, առաջատար երկրների փորձը ազատ և արդարացի ընտրությունների հարցում: Եվ դա պատահականորեն չէ, քանզի, ինչպես վաղուց է հայտնի, «Այն, ինչ թույլատրվում է Յուպիտերին, չի թույլատրվում ցուլին»: Վաղուց հայտնի է նաև, որ զարգացման առաջին անհրաժեշտության նախապայմաններից ամենակարևորը կայունությունն է, այսինքն եթե ցանկանում ենք զարգացում ունենալ, նախ պետք է կրկնօրինակենք որևէ կայուն երկրի փորձ: Այդ նպատակով ամենահարմարը, ըստ իս, Նոր Գվինեայի պապուասներն են, քանզի, որքան ինձ հայտնի է, վերջին հարյուր տարում նրանք ոչ մի ազգային արժեք չեն վերագնահատել:

Պատմեմ, ուրեմն, ինչպես են թաղապետ ընտրում Նոր Գվինեայի պապուասները: Գործընթացը չափից դուրս պարզ է. թեկնածուին ստիպում են մագլցել մատղաշ արմավենու կատարին և սկսում են, ծառին կապված լիանաները քաշքշելով, վիբրացիոն փորձարկումները: Որոշ ժամանակ անց, թեկնածուն թաղապետ է ճանաչվում: Փորձարկմանը չդիմանալու դեպքում, ցեղախմբից կախված, թեկնածուին հասարակական պարսավանքի են ենթարկում, կամ՝ ուտում: Թաղապետը տարին մեկ անգամ, պետք է հաստատի իր կարգը, այսինքն մասնակցի կրկնվող փորձարկման:

Ես ոչ միայն խորապես համոզված եմ, որ մենք ի զորու ենք տեղայնացնելու Նոր Գվինեայի պապուասների իմաստուն փորձը, այլև հստակ տեսնում եմ, թե ինչպես է մեր հուժկու բազուկների ուժից ճկվում և ուղղվում Նաիրյան դալար բարդին, որի ճյուղերից կառչել է ժպտադեմ Տարզանը իմ թաղապետը ապագա:

ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐ

«Լինում են րոպեներ, երբ ամեն ինչ որոշում են վարկյանները... Եվ դա տևում է ժամեր»:
Գեներալ Կճոզյան. «Իմ Վաթերլոոն», 2001:

Լուսահոգի թաղային տեսուչս ժամանակին ասում էր. «Սմբատ, եթե կյանքդ չստացվեց, մի ավելի հետաքրքիր զբաղմունք գտիր...»: Միշտ հավատարիմ եմ մնացել այդ պատգամին, չնայած անունս Կարեն է... Ընդհանրապես, ոմանք, ում հետ, հանգամանքների բերումով, ծանոթացել եմ մինչև առավոտյան ժամը 11-ը, ինձ անվանում են Սմբատ: Սկզբում բարկանում էի, հետո հաշտվեցի. այնուամենայնիվ, մի հոգի չէ, ուրեմն ես էլ, ըստ երևույթին, մի հոգի չեմ, ուստի բողոքելու առիթ ընդհանրապես չկա. ուրիշները իսկի մի կյանք էլ բարով-խերով չեն ապրում, իսկ ես ապրում եմ երկուսը միաժամանակ՝ Ջեքիլի ու Հայդի օրինակով... Նման նախատիպ ունեցողը, բնականաբար, պետք է զգոն լինի, և եթե ժամանակակիցներս հաճախ աշխատում են մոռանալ ոչ վաղ անցյալի տհաճ դեպքերը, ապա իմը հակառակն է. ես աշխատում եմ հիշել, թե ինչ եմ արել և հատուկ ծոցատետր եմ պահում գրառումների համար. .
Օրը սկսվեց սովորականի նման. զարթուցիչին միացրած մագնիտոֆոնից հնչեցին «Տառապանքներն ըստ Մատթեոսի», ավտոպիլոտ եղանակով մի գավաթ սուրճ ներմղեցի և անցա ծխախոտի որոնումներին... Սովորական ծխախոտը գրպանումս էր, իսկ հյուրասիրության համար նախատեսված, սև վառոդով լցոնածներն այդպես էլ չգտա:
Դրա փոխարեն գտա մի ճմրթված գրություն՝ «Երբեք չեմ ների, սրիկա... քո Լուսե». Այն, որ Կարենը սրիկա է, նորություն չէ, բայց՝ ի՞նչ Լուսե...
Եվ որտե՞ղ է հանդիպել Կարենին...Միամիտ հարցեր եմ տալիս ինքս ինձ: Իհարկե Բոլշի տանը, էլ որտեղ պիտի եղած լինի երեկ սրիկան՝ Չէ, բան չեմ հիշում, պետք է գրի առնել: Լավ, ճանճերը չմոռանամ... Ամբողջ ճանապարհին աշխատում էի հիշել, թե էլ ինչ եմ մոռացել՝ Հարազատ հիմնարկ հասնելուն պես հիշեցի. չեմ լվացվել. Դե, ոչինչ, աշխատանքային օրը կսկսենք լվացվելով:
Արդեն թարմացած միանգամից աշխատանքի անցա փոխեցի Նարեկացու և ներկա-բացակաների մատյանների կազմերը, վերցրի անցագրայինի մի դատարկ թերթիկ ու, սենյակումս փակվելով, սկսեցի կազմել օրվա այցելուների ցուցակը.

1. Աբովյան Խաչատուր
2. Չինգաչհուկ Մեծ Օձ

3. Հենզել
4 Գրետել
5. Բուտրոս Բուտրոս Ղալի
Այսօրվա համար, այսքանը, կարծես թե բավական է: Ցուցակը տվեցի մեր կիսագրագետ ցրիչին և, հնարավորին չափ հարմար, տեղավորվեցի բազկաթոռին, քանի որ փոխատեղման ժամը մոտենում էր· Արթնանալով, որոշեցի մյուսներին էլ արթնացնել: Նախօրոք պատրաստած Սուրեն Քոչարյանի «Թմկաբերդի առման» ձայնագրությունը միացրի ներքին ռադիոցանցին և ձայնը քոքեցի մինչև վերջ.

- Վեր կացեք, վե՜ր, ամբողջ գիշեր
Մարդ է գնում ու գալի...
Հե՜յ զարթնեցեք, ի՞նչ եք քնել
Քաջ զինվորներ Թաքուլի...

Դատելով միջանցքի աղմուկից՝ ազդեց: Տեսնես ի՞նչ են ծվծվում... Թաքուլն էլ մեր նոր տնօրենն է. մի շաբաթ առաջ ենք ստացել, դեռ չի հասկանում, թե ուր է ընկել, իսկ եթե ասեմ, որ խուլիգանը ոչ թե ես էի, այլ՝ Սմբատը, լրիվ կանջատվ... Ավելի լավ է մեռած ձևանալ:
Մեկ ժամ անց, զարմանալով, որ փոխատեղումը դեռ չի կատարվել, որոշեցի ավարտել առավոտից սկսած բանականության սիմֆոնիան: Հարկի բուֆետում եփվող շիլայի մեջ կես բուռ կանաչ պլաստմասե ճանճ գցեցի և, սենյակ վերադառնալով, զանգեցի ֆինբաժին. «Աղջիկներ, դուռը պինդ փակեք, Աբոն խելագարվել է.. Մուրճը ձեռքին հարկից հարկ է ընկել... Արդեն ոստիկանություն են կանչել... Մինչև Աբոյին բռնելը դուռը ոչ-ոքի չբացեք»:
Ըհը՜, հիմա զանգենք արտադրության պետին. «Աբո ջան, ֆինբաժնի աղջիկները ուզում են Ջոկոնդայի նկարը պատից կախել, բայց չի ստացվում: Մի հատ մուրճ վերցրու, արի՛»:
Թվում էր, ամեն ինչ հաշվարկված է նախօրոք. ամենահարմար ժամանակավոր թաքստոցը զուգարանն է...
Բայց այստեղ ես դարձա սեփական կոմբինացիաիս զոհը. զուգարանը զբաղված էր: Տղաները փսխում էին... Սա ի՞նչ նորույթ է. . Միահամուռ հետ տալ առաջին անգամ եմ տեսնում... Հանկարծ հիշեցի շիլայի մեջ գցած ճանճերիս մասին, և ամեն ինչ իր տեղն ընկավ: Չկա հետևանք առանց պատճառի· Եվ ընդհանրապես. աշխարհը ճանաչելի է:
Ուրիշ ի՞նչ պատմեմ... Ձեզ երբևէ ծեծե՞լ են հովանոցներով: Ու՜ֆ, ոնց է վիզս ցավում .. Ես այսօր էլ աշխատողը չեմ:
Գնալիս, այնուամենայինիվ, Թաքուլի առանձնասենյակի դռանը գրեցի.
«Ցնծացեք, բոզեր, խեղդեցիք ճգնավորին»:

Եզնիկ Կողբացի
Լավ, ասենք թե լքեցի այս իշամեղվի բույնը, բայց էսպես հալածված, կոտրած քնարով, հիմա ես ու՞ր գնամ, ի՞նչ կասի ներքին ձայնս երկրորդ եսիս: Ներքին ձայնս ցավազրկող էր խնդրում, և ես ուղղեցի մոլոր քայլերս առաջին մտածող ճագարի՝ վաղամեռիկ Կարախանի մարգիչ բանասեր Բոլշի տուն...
Ներս մտնելուն պես հասկացա, որ բավական ուշացել եմ: Հերթական խնջույքի մասնակիցներն արդեն կորցրել էին չափի և հումորի, տարածության և ժամանակի զգացողությունները: Բնականաբար, ազգային մտածելակերպի մասին խոսք լինել չէր կարող: «Մոնսերաթ» Ծովինարը հիշել էր 1929 թ. սովամահ եղած իր պապիկին և հեծեծանքների ընդմիջումներին լացակումած բացականչում էր «Կուլակաթափ արիք, ջհանդամը, գոնե հաց տայիք, ուտեր, վա՜յ, պապի ջա՜ն...»: Լավ, սա պարզ է, բա մնացածներն ու՞ր են
Բոլշին գտա խոհանոցում, շշի հետ զրուցելիս, ընդ որում՝ չափածո.

Այս մոխրակոլոլ դեգերումներում
Մեզ մնացել են մի շիշ և հուշեր .
Ու եթե ես չխմեմ, Բիծա՛,
Եվ եթե դու չհարբես, Բիծա ,
Ո՞վ կհամբարձվի այս գիշեր...

Վիճակը կարծես մոտ է բոսորագույն մղձավանջներին: Ուշադիր պետք է լինել:
Հանկարծ Բոլշը կտրուկ վերցրեց դիմացի շիշը, և ձեռքը շփելով պիտակին, բացականչեց. «Բիծա, Խոտաբիչը որ դուրս գա, մորուքից կբռնես, չփախչի»..
Բոսորագույն մղձավանջների այս փուլը ինձ անծանոթ էր, ուստի, բավական տագնապահար, ձեռնամուխ եղա Բիծու որոնումներին: Բոլոր սենյակների տակնուվրա վիճակը հուշում էր, որ Բիծեն եղել է այստեղ, բայց ու՞ր է գնացել, ե՞րբ, ինչու՞: Լվացարանում մի 44 համարի կոշիկ գտա. Ծովինարի համար մեծ է, Բոլշի համար՝ փոքր, ուրեմն, եթե ուրիշ հյուրեր չեն եղել, Բիծեն մոտերքում է, հեռու չէր կարող գնալ...
Հարևաններին հարցնեմ...
Հարևաններին գործը չհասավ. աղբատար խողովակի մոտ ծունկի եկած, դեմքով, չգիտես ինչու, դեպի հյուսիս, անուղղելի աթեիստ Բիծեն աղոթում էր.
«Օ՜, ացտեկների ռազմաշունչ աստված Վիցլիպուցլի, միակ աստվածը, որին ես հավատում եմ, քանզի քեզ չհավատալ հնարավոր չէ...
Մեղքերի թողություն չեմ խնդրում քեզանից՝ ո՛չ անցյալի, ոչ ապագա..

Ուղղակի գթասի՛րտ եղիր. ստեղծել ես, տերությո՛ւն արա...
Ուղեկցիր մեզ «Վեդի ալկոյից» դեպի «անմահական ջուրը հայոց», ազատիր այս բոսորագույն մղձավանջներից...
Բայց մի շտապիր... մի շտապիր... մի շտապիր...»
Այս ամենին դիմանալն արդեն անհնար էր... Ու ես նորից դարձա Սմբատ:

ՎՐԱԵՐԹԻ ԿԱՆԽԱԶԳԱՑՈՒՄ

Ասում են, թե Նապոլեոնի աշակերտական տետրերից մեկի վերջին էջում գրառում է եղել. «Սուրբ Հեղինեն փոքրիկ կղզի է»: Նույն տիպի կանխազգացում ունեցավ Աննա Կարենինան, երբ նամակներից մեկում գրեց, թե երազում տեսել է սիրո անիվները, որոնք ճզմելու են բոլորիս... Հիմա Երևանում ցուրտ ձմռան վերջն է, բայց մոտալուտ գարնան կանխազգումը չի լքում ինձ, կարծես լսում եմ սիրո շոգեքարշի անիվների դղրդոցը և տեսնում, թե ինչպես են նրանք ճզմելու բոլորին անխտիր: Ու եթե կանայք դեռ պետք է լսեն իրենց թեկնածուի ձայնը և զգան նրա հոտը, ապա տղամարդիկ կսիրահարվեն տեսնելուն պես, ակնթարթորեն: Ոչ մի նորմալ մարդ պաշտպանված չէ սիրահարվելու վտանգից, հատկապես գարնանը. Սիրո վրաերթին ենթարկված մարդը ահավոր թշվառ անձնավորություն է, քանի որ, եթե նույնիսկ պահպանում է մտքերը շարադրելու կարողությունը, այնքան տափակ և հիմար բաներ է ասում, որ հուզվում է նույնիսկ սիրո օբյեկտը, էլ չխոսենք մնացածների մասին. Հատկապես սարսափելի է պլատոնիկ սերը (երբ դու սիրում ես մի կնոջ, իսկ նրա հետ կենակցում է Պլատոնը): Հարգելի ընթերցող, եթե որևէ պուրակում դու տեսնես, ապուշի ժպիտը դեմքին, ծաղկեփնջով զինված մի տղամարդու, որն անթարթ հայացքով նայում է մեկ լուսնին, մեկ ժամացույցին, իմացած եղիր դա սիրո վրաերթ է: Այն փոփոխվող ուժգնությամբ է ազդում տարբեր տարիքային խմբերի վրա Կարելի է ասել, որ Ռոմեոյի և Ջուլիետի տիպի անչափահասները, Անուշն ու Սարոն ներառյալ, դեռ լավ պրծան, քանզի տարիքային աճի հետ սիրո տանջանքներն ուժեղանում են և դառնում սատանայական, հատկապես, երբ անպատասխան սիրո օբյեկտը թոռնիկ է ունենում, և քեզ թվում է, թե նյարդերդ են ճզմվում թոռնիկի հեծանիվի անիվների տակ. Իզուր չէ, որ ժողովրդական անեծքն ասում է. «Խոր ծերության հասակում լուրջ սիրո հանդիպես»: Երկար ժամանակ վեճերի առարկա էր այն հարցը, թե ունենո՞ւմ են արդյոք նման տանջանքներ հոմոսեքսուալիստներն ու սադոմազոխիստները, բայց հիմա մենք գիտենք, որ նրանք էլ սովորական մարդիկ են, իսկ այլասերվածությունները իրականում երկուսն են. խոտի հոկեյը և բալետը՝ սառույցի վրա ճակատագիրը հատկապես անողոք է այն տղամարդկանց նկատմամբ, որոնք ընդունակ են սիրահարվել միայն մի կնոջ (ինձ ճիշտ հասկացեք «Նա» լինում է մեկը, իսկ մնացածները լինում են «նրանք»): Իտալիայում նույնիսկ փողոցային ցուցատախտակ կա. «Այստեղ Դանթեն տեսավ Բեաթրիչեին»: Ինչպես հայտնի է, դրանից հետո նա գրեց «Դժոխքը»:

Ի՞նչ միջոցներ ասես չեն կիրառել Հին վարդիայի տղաները սիրո վրաերթից խուսափելու համար, բայց՝ ապարդյուն: Բիձեն, օրինակ, սկսեց

ուսումնասիրել հին հույն մտածողների աշխատությունները, բայց դա էլ չօգնեց. գիշերվա ժամը 2-ին նա զանգահարեց ինձ ու լացակումած ձայնով հարցրեց. «Օջալ, եթե նույն գետը երկու անգամ չես մտնի, ես ինչպե՞ս եմ երրորդ անգամ ընկնում նույն ք...-ի մեջ»: Ի՞նչ պատասխանես: Ստիպված ստեցի, թե հին հույների իմաստուն լինելու մասին կարծիքը չափազանցված է, քանի որ նրանք նույնիսկ չգիտեին, որ իրենք հին հույներ են և այլն...

Նման ծանր կացության մեջ գտնվող մարդկանց բուժելու համար ժամանակակից պսիխոթերապևտներն առաջարկում են հակաընկճախտային տարբեր դեղեր, բայց դրանց ազդեցության տակ, հավատացնում եմ ձեզ, մարդ կորցնում է սերը ոչ միայն կնոջ, այլև մայրենի լեզվի, հայրենիքի և ծնողների նկատմամբ, ինչը, հուսով եմ կհամաձայնեք, անընդունելի է: Դրանք ժամանակակից բժշկություն են ներմուծվել Քիմիական պաշտպանության ուժերի զինանոցից լայնածավալ պատերազմական գործողությունների բացակայության պատճառով, և կգոհացնեին միայն Զախեր Մազոխին*: Ժամանակակից պսիխոթերապևտների համեմատությամբ մարքիզ դե Սադը** ուղղակի բարի բժիշկ Այբոլիտն է: Մի դիմեք նրանց:

Պետք է խոստովանել, որ, սիրահարվելու դեպքում, մարդուն արդեն ոչինչ չի փրկի, այսինքն Ամուրի փոքրիկ աղեղն իր հզորությամբ չի զիջում Հայկ նահապետի լայնալիճ աղեղին: Սակայն գոյություն ունի մի հզոր պրոֆիլակտիկ միջոց, մշակված ԱԲՇ «Բոլոր պրոբլեմների վերացման» ֆրակցիայի կողմից, որն իմ պարտքն եմ համարում ներկայացնել ձեր ուշադրությանը:

Խոսքս աֆոկալ օպտիկայի մասին է, ավելի ճիշտ գլանային աստիգմատիկ ոսպնյակների: Ոչինչ, որ չգիտեք, թե դա ինչ բան է, դուք դա կզգաք: Սիրո վրաերթից տղամարդուն փրկելու համար նախատեսված ակնոցները լինում են երկու տեսակի սեղմող և լայնացնող: Երկու տիպի ակնոցների դեպքում էլ խուսափեք հայելու մեջ նայելուց կարող եք վատանալ: Սեղմող գլանային աստիգմատիկ ոսպնյակներով ակնոցներ կրելու դեպքում դուք նորմալ կազմվածք կտեսնեք միայն ութերորդ ամսվա հղիության կանաց մոտ, այսինքն տեսականորեն սիրահարվելու վտանգը դեռ մնում է: Այդ իսկ պատճառով խորհուրդ եմ տալիս ձեզ կիրառել լայնացնող գլանային աստիգմատիկ ակնոցներ: Կանայք, որոնց դուք կտեսնեք այդ ակնոցներով, բնության մեջ գոյություն ունենալ չեն կարող, թեկուզ գրավիտացիոն օրենքի պատճառով, իսկ ոչ մի տղամարդ չի կարող սիրահարվել կնոջ, որը բնության մեջ գոյություն ունենալ չի կարող. Դա գիտական փաստ է:

* Զախեր Մազոխ - մազոխիզմի հիմնադիրը.
** Մարքիզ դե Սադ - սադիզմի հիմնադիրը·

Դու նորովի կընկալես աշխարհը, ընթերցող: Ձնջիր վրաերթի կանխազգացումդ: Ամենապայծառ գարնանը դու խաղաղ, մառախլապատ աշուն կունենաս քո հոգում, եթե, իհարկե, քթարմատիդ ակնոց կրես լայնացնող գլանային աստիգմատիկ ոսպնյակներով:

ՇԵՇՏԱԿԻ ՀԱԿԱԳՐՈՀ

Հնդկաստանի Բենարես քաղաքում մեկնարկեց Օստապ Բենդերի հիշատակին նվիրված աշխարհի թույլ խաղացող շախմատիստների անդրանիկ առաջնությունը: Ի տարբերություն պրոֆեսիոնալ և սիրողական առաջնությունների, որ անցկացվում են արդեն հարյուր տարուց ավելի և վաղուց ծանծրացրել են շախմատասեր հասարակայնությանը իրենց տաղտկալի ընթացքով և ոչ ոքիների առատությամբ, նոր առաջնությունը խոստանում է իր գեղեցկությամբ և անմիջականությամբ մի իսկական բանականության պարահանդես դառնալ շախմատի բոլոր այն նվիրյալների համար, որոնք, կոպիտ ասած, խաղալ չգիտեն: Իսկ անունը նրանց, ինչպես հայտնի է, լեգեոն է: Սեղանի խաղերի որոշ գլադիատորներ առաջարկում էին նույնիսկ խաղարկել դասական շախմատից շատ ավելի բարդ չինական տարբերակը, որտեղ տախտակի մակերեսի մի մասով հոսում է Մեծ և Դեղին Հուանհե գետը: Բարեբախտաբար, առաջարկը չանցավ խեղդվելու մեծ հավանականության պատճառով: Որոշ «արհեստավարժներ» էլ փորձեցին խոչընդոտել առաջնության անցկացմանը ասելով, թե շախմատի իրական գեղեցկությունն ընկալվում է վարպետի կոչումն ստանալուց հետո միայն, և նման այլ անհեթեթություններ: Հիշեցնեմ նրանց, որ շախմատային «Դիփ Բլյու» ծրագիրը հաղթել է աշխարհի չեմպիոնին, և հարց է ծագում, թե ի՞նչ աստիճանի գեղեցիկ պետք է լինի գեղեցկությունը, որպեսզի չպարտվի մաքուր հաշվարկին: Եվ ընդհանրապես, հեռու մեր առաջնությունից, թշվառներ, որ ստիպված եք միայն ճիշտ քայլեր կատարել և հիշել նախկինում կայացած հազարավոր պարտիաներ: Դուք վաղուց մոռացել եք, թե ինչ բան է անբացատրելի սխալն ու որն է նրա արժեքը կյանքում և խաղատախտակի վրա, իսկ շախմատի գեղեցկության մասին հեքիաթները, ինչպես անգլիացիք են ասում, պատմեք ձեր տատիկներին ժամը 12-ից հետո: Շախմատային խաղի նպատակը հակառակորդին հաղթելն է· Եվ եթե հակառակորդը ճիշտ ձեր մակարդակի խաղացող է, երևան է գալիս հոգեբանությունը և խաղը դարձնում արժեքավոր: Որպես օրինակ, ցանկանում եմ ձեր ուշադրությանը ներկայացնել երկու արժանի հակառակորդների մենամարտ, որ կայացավ առաջին շրջանում.

Դոստ Ակբար - Յուն Սու

Հնդկաստան Չինաստան

Բերդի սկզբնախաղ

1. f2-f4· Նալով ավելի հաճախակի է սկսել հանդիպել տարբեր մրցումներում, քանի որ շատ խաղացողներ են սկսել մոռանալ, թե ով էր Բերդը և ինչու էր այդպես սկսում խաղը: Ասեմ, որ Բերդը XIX դարի

շախմատիստ է: Հայտնի նրանով, որ մեկ անգամ խաղացել է Մորֆիի հետ և պարտվել: Հիշեցնեմ նաև, որ Ռոբերտ Ֆիշերը և Օստապ Բենդերը գերադասում էին 1. e2-e4·

1. . d7-d5: Հոգեբանական պայքարը սկսված է, սևերը չկիրառեցին Ֆրոմի գամբիտը (e7-e5): ուցե պատճառն այն է, որ Ֆրոմը քիչ հայտնի շախմատիստ է, նույնիսկ Բերդից քիչ հայտնի, իսկ Մորֆիի հետ ընդհանրապես չի խաղացել:

2. Ձb1-c3: Խորամանկ և լավ թաքցված ծուղակ, եթե սևերը հիմա խաղան b7-b5, սպիտակները Ձc3-b5 կպատասխանեն և օ՜Ֆ էլ չեն անի:

2. ... e7-e6: Հիրավի, Չինական պարիսպ կառուցելը հատկապես սազում է չինացիներին...

3. Ձc3-b1: Խոր դիվանագիտական մոտեցում, քանզի առաջարկ է վերականգնելու «ստատուս քվոն»: Միևնույն ժամանակ ոչ ոքիի համար առաջարկություն. միակ բանը, որ ոճային իմաստով միավորում է թույլ խաղացողներին և արհեստավարժներին:

3. . . c7-c5: Լռությամբ մերժելով առաջարկությունը: Յուն Սուն հավատարիմ է իր հայրենակից Կոնֆուցիոսի խրատին խաղը ժամանակ համարձակ լինել գործերում, բայց ոչ խոսքերում:

4. h2-h3: Վերջնական հրաժեշտ բոլոր շախմատային դասագրքերին և առաջին բարևը պսիխոանալիզին:

4. .. Ձb8-c6: Սև հեծելազորը պատրաստվում է գրոհի:

5. g2-g4: Սվինամարտի հրավեր: Համարձակ որոշում և միաժամանակ ճակատագրական սխալ... Այնինչ շախմատի գաղտնիքը չափազանց պարզ է պետք է անել 40 ուժեղ քայլ և հետաձգել հանդիպումը: Բայց մոտենում էր ցայտնոտը... Իսկ միաժամանակ դիմանալ հոգեբանական ճնշմանը և ցայտնոտին, նույնիսկ Դոստ Ակբարի ուժերից վեր էր:

5. ... Թh4X· Սպիտակները չհասցրեցին հանձնվել:

ՋԱՏԱԳՈՎՆԵՐԸ

«Նա, ում զարգացած երևակայությունը համադրված է բարի նպատակներին, ջատագով է»:
Ի. ԿԱՆՏ

Ծանոթներիս ու ընկերներիս մասին խոսակցություններում աշխատում եմ չօգտագործել «տաղանդ» և, հատկապես, «հանճար» բառերը, քանզի, ինչպես հաճախ հիշեցնում է Գալոյանը. «Ներսեսն ընդամենը շնորհալի էր»...

Այնուամենայնիվ, Գրիշը տաղանդ էր: Մի քանի տարի անընդմեջ նա ընդունվում էր ֆիզիկայի ֆակուլտետ, մինչև հունվար թոշակ ստանում, հետո, քննություններին չմասնակցելու պատճառով հեռացվում համալսարանից: Այդ տարիներից ի վեր, ֆակուլտետի միջանցքներում հաճախ մի ասացվածք է հնչում. «Եթե չգիտես, թե ինչ ասել, ասա Գրիշ...»:

Հանգամանքների բերումով ես խմբի ավագն էի և, ի պաշտոնե, ստիպված էի ժամանակ առ ժամանակ պարզել, թե ինչու Գրիշը դասերին չի հաճախում: Սովորաբար մենք դա պարզում էինք «Կռունկ» գարեջրատանը. մեր խմբի կոմերիտմիության քարտուղար Բիծու ակտիվ մասնակցությամբ· Բանը հասել էր նրան, որ նույնիսկ «Կռունկի» պառավ հավաքարարը, երբեմն, խոր հոգոց հանելով, ասում էր. «Գրիշ ջան, լավ տղերք են, մեկ-մեկ հետները դասի գնա, էլի՞»:

Այդպիսի մի հոգեփրկիչ զրույցի ժամանակ էլ մենք հասկացանք, թե ինչով է տարբերվում տաղանդը ծառի հովին տերև ուտող ոչխարից...

Այդ պատմական հանդիպման ժամանակ քննարկվող թեման էր «Մարդու դերը և նշանակությունը սեփական կյանքում»: Հասկանալի է, նման էկզիստենցիալ և, ես նույնիսկ կասեի, տրանսցենդենտալ խոսակցության համար ոչ օղին կիերիքի, ոչ գարեջուրը, ու վերջին բաժակը լցնելիս Բիծեն այն միտքն արտահայտեց, որ մարդը, նույնիսկ կոմերիտական լինելով, ընդամենը վառելիքի մի տեսակ է, որի կրակը հանգցնելու համար խմիչքը միշտ պակասում է... Մինչ ես փորձում էի մտքի ամբողջ խորությունն ըմբռնել, Գրիշը խնդրեց ընդամենը կես ժամ սպասել ու շտապ քայլերով հեռացավ... «Կռունկն» այնքան հաճելի տեղ էր, որ նույնիսկ դատարկ սեղանի շուրջ, համոզված լինելով, որ բաժակակիցը լքեց մեզ, Բիծու հետ տաքացած շարունակեցինք բանավեճը ու եկանք այն եզրահանգման, որ մարդը վառելիքի մի տեսակ է, իսկ Գրիշը սրիկայի մեկը. գոնե ցտեսություն կարող էր ասել...

Ընթերցող, ես երջանիկ մարդ եմ, կամ, առնվազն կյանքում մեկ անգամ, եղել եմ. Գրիշը վերադարձավ, ընդ որում, ինչ-որ գումար ձեռքին:

Քննարկումը հարմոնիկ կերպով վերածվեց քեֆի...

Հաջորդ առավոտն ընկալվեց որպես սովորական հարբեցողի առավոտ. գլխացավ, ընկճախտ, վերջույթների դող և հոգու տվայտանքներ... Հետո իմացանք, որ Գրիշի համար դա ամենաքիչը Վաթերլոոյի լուսաբացն էր...

Ի՞նչ է պարզվում: Չարաբաստիկ կես ժամվա ընթացքում նա հասցրել էր գնալ բժշկականի դիահերձարան (ինձ ավելի շատ դուր է գալիս «անատոմիկ թատրոն» անվանումը), կտակել իր ապագա դիակը ուսումնասիրությունների և գիտափորձերի համար, առանց երկար-բարակ սակարկելու փողը վերցնել ու գալ: Սա իմանալուն պես Բիծեն ներեց նրան բոլոր չմուծված կոմերիտական անդամավճարները, և այնուհետև ամեն առիթով ասում էր. «Գրիշ 2-րդը նույնպես Մեծ է»: (Գրիշ 1-ինը, ըստ Բիծու, Նարեկացին էր):

Մարդու հոգեկան տանջանքների ուժգնությունն ուղիղ համեմատական է նրա տաղանդին· Հակառակը ինձ մի՛ համոզեք: Ինչևէ, երկու-երեք օրում վերականգնելով բյուջեի ճեղքվածքը, Գրիշը վերադարձավ «Անատոմիկում» ու, երկարատև, թախանձագին խնդրանքներից հետո, ետ գնեց իր ապագա դիակը:

Ինչքա՞ն ճիշտ է նախազգուշացրել դասականը. քեֆ անողին քեֆ չի պակսի. շաբաթ էլ չանցած, մեր հաջորդ հանդիպման ժամանակ, Գրիշը նորից փորձեց կտակվել ազգին, ընդ որում շատ ավելի ցածր գնով...

Նորմալ անատոմիայի ամբիոնի վարիչի վերջին խոսքերն էին. «Դուրս կորիր, սրիկա, էստեղ լոմբա՞րդ է քեզ համար, էշի՛ քուռակ...»:

Ես վաղուց արդեն կարոտել եմ Գրիշին: Իսկ նրա տեղն իմ հոգում փորձում են զբաղեցնել ինչ-որ անհեթեթություններ. Բերեմ մի օրինակ: Հայրենական արտադրության զարգացման ջատագովների մի հոծ խումբ որոշեց վերականգնել շերամապահությունը Հայաստանում, բայց, ի տարբերություն Գաբո բիծու բարձր տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Բարձր տեխնոլոգիաները Հայաստանում շատ յուրովի են կիրառվում. որպես կանոն, կառուցվում է մի «մոդեռն» շենք, գնվում են վերջին մակնիշի 16 «Pentium» համակարգիչներ, դրանց կից 32 հատ մինչև 25 տարեկան բարետես աղջիկներ (բնականաբար, անգլերենի մի մասի լավ իմացությամբ) և նշանակվում է մի այնպիսի հաստիքային աշխատավարձերի սանդղակ, ինչպիսին գործում է վարկատու երկրում: Բայց, նախ, պետք է ներկայացնել «բիզնես-պլան» և համաձայնության գալ կաշառքի վերաբերյալ: Աշխարհում ընդունված կարգ է... Վարկատուն միջազգային «Թռիր, թիթեռ» կազմակերպությունն էր: Բայց դա կարևոր չէ. «Ճախարակ» ՍՊԸ-ի «բիզնես-պլան»-ին ծանոթանալով, Պենտագոնն էլ չէր դիմանա... Օրագրով նախատեսվում էր շերամի և «որդան կարմիր» միջատի հիբրիդ ստանալ կարմիր բոժոժներ գործելու նպատակով:

«Ճախարակ»-ի հաստիքային բանաստեղծը նույնիսկ «Շառագունած թթենին» վերնագրով պոեմ էր գրել և կցել «բիզնես-պլանին»: Վարկային ամբողջ դրամագլուխը վաղուց ծախսված էր, բայց արդյունք չկար, նույնիսկ շերամ չկար (ու երբեք չէր էլ եղել): Միակ ելքը հաջորդ վարկավորումն էր...

Ու այստեղ կատարվեց այն, ինչ կատարվում է արդեն հարյուրավոր տարիներ, և չի թողնում, որ «բիզնես-պլանները» նորմալ իրագործվեն. գրասենյակը մեռավ... Նրան սպանեցին ներքին պառակտումները:

Հուզվում եմ: Մի քիչ դանդաղ պատմեմ... «Ճախարակ» ՍՊԸ-ի գիտական ատենապետը, չցանկանալով թերագնահատել սեփական ես-ը, «բիզնես-պլանի» շրջանակներում սեփական ենթածրագիր ներկայացրեց (բնականաբար, առանձին վարկավորմամբ) «Կարմիր շերամի կլոնավորում» թեմայով: Եկեղեցին չառարկեց, քանզի վերջին 1700 տարում համոզվել էր, որ «տղերքը գործ անող չեն»: Բայց նույն «Ճախարակ»-ի «շրջակա միջավայրի պահպանման գծով» փոխտնօրենը, խանդից դրդված, իր ենթածրագիրը ներկայացրեց. «Ցեցի և կարմիր շերամի խաչաձևում թեթև արդյունաբերության թափոններից կարմիր մետաքսի ստացման համար»... Ու սկսվեց...

«Թռիր, թիթեռ» միջազգային կազմակերպության ղեկավարները դադարեցին հասկանալ, թե իրենց հասանելիք կաշառքը (հատկացվող վարկի 20 տոկոսը) ո՞վ պետք է վճարի և ե՞րբ... Խորագույն ցասումով լցված, նրանք դադարեցրին ֆինանսավորումը և հաշվետվություն պահանջեցին կատարված աշխատանքների մասին... «Ճախարակը» կանգ առավ: Ագահությունը դժվար է համատեղվում տաղանդի հետ:

Այս պատմությանը ծանոթանալով, ես չգիտեի, թե ի՞նչ ասել և ասացի Գրիշ... Քո տաղանդը մեծ էր, ուղղակի դու գործում էիր անտանելի պայմաններում... Քեզնից հետո եկած «Ճախարակի» ժողովուրդը քո եղունգը չարժեն, քանզի բարի նպատակ չունեն... Քո և քեզ նմանների բացակայությունը կասեցնում է իմ երևակայության թռիչքը ու ստիպում զբաղվել առօրյա հոգսերով...

Ես անհամբերությամբ սպասում եմ հաջորդ սերնդի ջատագովների երևան գալուն:

ՉԱՂՃԱՏՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱՎԻՂՆԵՐՈՒՄ*

«Հայրենասիրությունը սրիկաների վերջին հանգրվանն է»:
ՀԱՅՆԵ

Ամենացավոտ հարվածները մտերիմներից ենք ստանում: Փաստ է: Ընկերներիս ճնշող մեծամասնության քոչելն ավելորդ անգամ հաստատում է այն: Հատկապես ցավալի է հայերի անգլիական ձևով հեռանալը: Արդեն որերորդ անգամ է, միջքաղաքային հեռախոսազանգ լսելիս փշաքաղվում եմ. ուրեմն մեկն էլ է քոչել և հիմա զանգում է իմանալու, թե ինչպես եմ...

Որպես «Հարթ երկրի կողմնակիցներ» միության նախկին գիտական քարտուղար, ես խուսափում եմ տվայտանքներից և չաղճատված Հայրենիքիս բավիղներում սեփական դեգերումներս նորմալ շարունակելու համար սկսել եմ միայն հայրենասեր ընկերներ փնտրել, իսկ դա ավելի քան դժվար խնդիր է: Եթե մարդու ասածներին հավատաս, հայրենասերին գրպանահատից չես տարբերի, մանավանդ որ, ըստ Բիծու, դրանցից մեկը մյուսին հակասում է, բայց չի բացառում. Տարբերակման այս բարդագույն խնդիրը ես դասում եմ փիլիսոփայության հիմնական հարցերի շարքում, ու ոչ թե նրա համար, որ պատասխանը ինքս եմ գտել, այլ այն պատճառով, որ հզոր աջակից ունեմ ի դեմս ավստրիացի բժիշկ, լուսահոգի Զիգմունդ Ֆրեյդի:

Ուրեմն, եթե ես ու Զիգմունդը համառոտ արտահայտվենք, հայրենասերին գրպանահատից տարբերելու համար պետք է ոչ թե նրանց ասածները լսել, այլ վերլուծել նրանց տեսած երազները, իսկ ավելի պարզ ու կոնկրետ. հայրենասերը երազում էլ Հայրենիք է տեսնում, այլ ոչ թե ինչ-որ բանանալիմոնային սինգապուրներ: Այստեղից. ենթագիտակցական մակարդակով, մետաֆիզիկաբար եզրակացնում ենք. «Երջանկությունը, որպես հեքիաթային երազի իրականացում ըստ սահմանման, թաքնված է ոչ թե քոչելու, այլ ազգը երջանկացնելու մեջ (չնայած որոշ մարդկանց քոչելը և ազգը երջանկացնելը նույն բանն է): Այսպիսի խոշոր հայտնագործությունից հետո ես պարտավոր էի փորձնականորեն ստուգել տեսությունից բխող հիմնական հետևությունները և անկարող էի դա հետաձգել, քանզի, ինչպես գիտենք, մարդկությունը զարգանում է յոթ մղոնանոց քայլերով, և ցանկացած տեսություն դատապարտված է մի ավելի ընդհանուր տեսության մասնավոր դեպքը դառնալու:

Փորձի իդեալական օբյեկտ էր իմ վաղեմի ընկեր Բիծեն, որն, իր ասելով, քոչելու մեջ իմաստ չէր տեսնում այն պարզ պատճառով, որ

* Բավիղ - սովորականից մի քիչ լայն շավիղ (Ծանոթ Կ. Խ-ի)

ընդհանրապես ամբողջ Արեգակնային համակարգից էր զզվում Հոգեվերլուծողի ժամանակավոր կաբինետ ընտրել էի Գրիշի պանդոկը. դա հրաշալի տեղ էր անցած-գնացած բարի ժամանակները հիշելու համար: Խանգարող ոչինչ չկար. սեղաններն առանց սփռոց էին, իսկ ջուրբակահարն ընդհանրապես բացակայում էր: Երկու-երեք օրի-գարեջուր համազարկից հետո ես փորձեցի սահուն անցում կատարել դեպի պսիխոանալիզը բողոքեցի, որ ինձնում այլևս ներուժ չեմ գտնում Հայրենիքը սիրելու և կասկածում եմ, որ դա փոխադարձ է: Բիձեն հանգստացրեց ինձ, ասելով. «Այնքան աղճատված կյանք ենք ապրում, որ սեփական Ես-ը սիրելու ներուժ չի մնում, ուր մնաց պետական Ես-ը սիրես, այսինքն Հայրենիքը»:

Եվս 2 օրի-գարեջուր անցումից հետո, սակրավորի զգուշությամբ, սկսեցի մոտենալ երազների թեմային. պատմեցի, որ երազում հոգիս հաճախ լքում է մարմինս, մինչև լույս չարչարվում եմ, որ նրանց նորից միացնեմ, ու ոչ մի օգնական չեմ ունենում...

Այստեղ ես տեսա մի հազվագյուտ դարձած բան. Բիձու հայացքը (երկու տարի առաջ նա դադարեց մարդկանց աչքերին նայել, դա բացատրելով նրանով, որ մարդ չկա, «բոլորը զոմբի են կախարդանքի միջոցով վերակենդանացած դիակներ»): Հետո մի պահ ինձ թվաց, թե որովայնախոսի հետ եմ խմում. ձայնը վերևից էր գալիս «Հյուսիսամերիկյան դակոտա ցեղի հնդկացիները հավատում են, որ եթե հանգուցյալին շրջես երեսնիվայր, հոգին կվերադառնա նրա մարմինը, բայց ոչ ոք չի համարձակվում դա անել, քանի որ չի կարելի»: «Տաբու» կասեր ծերուկ Ֆրեյդը»,- քմծիծաղով ավելացրեց նա... Հետո ես որոշեցի մողես բռնել, բայց չստացվեց. չկար: Այո, ինձնից հոգեվերլուծող էլ դուրս չի գա. տաղանդը կարող է միակողմանի լինել, իսկ անտաղանդը միշտ բազմակողմանի է, ու իմ անզուգական բաժակակից Բիձուկի հետ մենք շարունակեցինք օրի-գարեջուր անցումները... Վերջում, ընդառաջ գնալով Գրիշի պանդոկի մյուս այցելուների թախանձագին խնդրանքներին, սեղանին կանգնած կատարեցինք ֆիզիկայի ֆակուլտետի օրհներգը դարձած «Ա՜խ, երնեկ էն օրը, որ ինձ եկան ուզելու» երգը: Հետո 3-4 անգամ մեկս մյուսին տուն ուղեկցեց... Պառկելուն պես քնեցի: Երազումս «Զվարթնոց» օդանավակայանում Զիգմունդ Ֆրեյդը ինձ ճանապարհում էր Սինգապուր: Նրա վերջին խոսքերն էին. «Դու սխալվեցիր... Հոգեվերլուծողը, փաստորեն, Բիձեն էր· Հիմա նա գիտի դու հայրենասե՞ր ես, թե՞ գրպանահատ»: Անկողնուց վայր ընկա: Մինչև լույս հուսահատ փորձում էի տեսնել երազի շարունակությունն ու պարզել, թե ով եմ: Լուսաբացին քնեցի աներազ: Հիշում եմ, որ պառկած էի երեսնիվայր, բայց հոգիս ոչ մի կերպ չէր ուզում վերադառնալ ..

ԵԹԵ ԳԱՆ

«Բումերանգը հին էր, չվերադարձավ»
*Վլադիմիր Դելակրույան**

Ռուսական կոսմիզմի հիմնադիր Նիկոլայ Ֆյոդորովը մարդկության երջանկությունը կապում էր բոլոր մեռած նախնիների վերադարձի հետ· Այդ նպատակի իրականացման տեխնիկական պրոբլեմներից մեկի. վերադարձած նախնիների բնակարանային ապահովման գործում հսկայական ներդրում ունեցավ Ֆյոդորովի հավատարիմ աշակերտ Կոնստանտին Ցիոլկովսկին: Հենց բնակեցման խնդիրն էր, իսկ ավելի կոնկրետ. երկրագնդի մակերևույթի սահմանափակ չափերը, որ ստիպեցին Ցիոլկովսկուն մշակել միջմոլորակային թռիչքների իր տեսությունը, կատարել հրթիռային շարժիչի առաջին հաշվարկները և, կոպիտ ասած, հունցել մի խմոր, որը, մեղմ ասած, դեռ շատ ջուր կքաշի:

Ընթերցողն արդարացիորեն կարող է հարցնել. «Հեկուբը իմ ի՞նչն է, կամ ես Հեկուբի, էլ չեմ ասում Ցիոլկովսկու մասին...»: Առաջ ես էլ էի այդպես կարծում, քանի որ առաջ ես էլ էի ընթերցող, բայց եկավ մի օր, ստեղծվեց ԱԲՇ-ն, և հիմնադիր ժողովի ամենաթեժ պահին Քրիստափորիչը հարցրեց ինձ. «Օջալ, կարո՞ղ ես նկարագրել այս բոլորը»: Ես պատասխանեցի. «Կարող եմ, ուսուցիչ», իսկ կուսակցական ընկերներս անմիջապես կոտրեցին քնարս և գրիչ նվիրեցին ինձ: Ու սկսվեց...

Ռուս կոսմիստ Նիկոլայ Ֆյոդորովի ուսմունքի տեղայնացումը ունի խոր տրամաբանական հիմք, եթե «մեռած» բառը փոխարինենք «քոչած»-ով, իսկ «վերադարձը» թողնենք անփոփոխ: Ուրեմն, ձեզ եմ հարցնում. երբ մեր քոչած ընկերները վերադառնան, որտե՞ղ ենք նրանց բնակեցնելու: Մի քաղաք, ուր բոլոր շենքերի նկուղները վերածված են խանութների և խորտկարանների, իսկ առաջին հարկերում նույնն է, ինչ որ նկուղներում, ինչպե՞ս պետք է ընդունի հայրենադարձների առաջին ալիքը, էլ չեմ խոսում իններորդ ալիքի մասին, որը, ըստ Այվազովսկու, ամենասարսափելին է:

Խնդրի լուծման համար ես մի քանի անգամ փորձեցի կիրառել առողջ գիտակցությունը և մաքուր տրամաբանությունը, բայց արդյունքը ահավոր էր բնակարանային շինարարության բացակայության պայմաններում միակ հնարավոր ելքն էր ստացվում ազգիս բոլոր ներկայացուցիչների

* Վլադիմիր Քրիստափորի Դելակրույան - ԱԲՇ հոգևոր հայր և անփոխարինելի առաջնորդ

չափերի փոքրացումը, մի բան, որ անընդունելի եմ համարում նույնիսկ մղձավանջային երազում: Անընդհատ մտորումներից հյուծված, խորագույն ընկճախտի շեմին, մի վիճակում, երբ արդեն Վեդու արտադրության ցորենի օդին էլ չէր օգնում, իսկ իմ սեղանակից Բոլշը անընդհատ պահանջում էր, որ իր շիրմաքարին գրեմ. «Այս մարդը խելացի ընկերոջ կարոտ գնաց»..., հազիվ ուժ գտա հեռախոսին հասնելու: Բոլշի զառանցանքից բավականին շփոթված, իսկ ավելի շատ ազդված Քրիստափորիչի թավ ձայնից,մի կերպ զեկուցեցի, որ խելացի ընկերոջ կարոտ եմ, բայց եթե բոլոր խելացի ընկերներս վերադառնան, չգիտեմ, թե որտեղ նրանց բնակեցնեմ, քանի որ նույնիսկ քաղաքի շներն ու առնետները ամուսնանալու հնարավորություն չունեն և բազմանում են՝ ինչպես պատահի: Վայրկյան էլ չէր անցել, և ինձ թված, թե լսափողից հնչեց մարդկային ամբողջ իմաստությունը, ամփոփված մի նախադասության մեջ.

«Սիրելի զինակից,,, եթե խելացի ընկեր ես ցանկանում ունենալ շուն պահիր, եթե շուն ես ուզում ունենալ ամուսնացիր, իսկ խելացի ընկերների հարցով մի մտահոգվիր հին բումերանգները չեն վերադառնում...»

Գրաքննիչի կողմից. «Հին բումերանգները չեն վերադառնում» կոչը պարզապես անհնար է շփոթել «Հին ընկերները չեն դավաճանում» նախընտրական կոչնակի հետ:

Թույլատրել տպագրության:

ՄՈԽՐՈՏՆ ՈՒ ԿՈԿՈՆ

Իմ հետաքրքրությունը խոսող թռչունների հանդեպ հին պատմություն ունի: Դեռևս դպրոցական էինք, երբ իմ համադասարանցի Արմենակի ծնողները, երեք տարի Կուբայում աշխատելուց հետո, արդար վաստակի կազմում, տուն բերեցին «Ժակո» տեսակի մի թութակ: Իր Կոկո անվան, սիրաշահելու, տերերի ջերմ վերաբերմունքի, խոսեցնելու բոլոր փորձերի նկատմամբ թութակը բացարձակապես անտարբեր էր անընդհան ինչ-որ բան էր մտածում: Արմենակը նույնիսկ կասկածեց, որ Կոկոն հավազգի է, մի հասարակ, հիմար թռչուն. նույնիսկ տիրոջը ճանաչելուն անընդունակ: Գրողի տարածը գոնե կչկչար .. Թե իմանային ի՞նչ է գլխներին գալու: Կոկոն չէր մտածում նա ուշադիր լսում էր փողոցային աղմուկը· Մեկ շաբաթ անց սկսվեցին «տառապանքներն ըստ Արմենակի». գիշերվա մեկ անց երեսունին Կոկոն սկսեց արագացված կերպով վերարտադրել ցերեկային ձայները ավտոմեքենաների ամենատարբեր շչակներ, տրամվայի դղրդոց, աղբատար մեքենայի զանգի ղողանջ և այլն.. Ու այս բոլորը նույն ուժգնությամբ: Լուսաբացին համեստորեն լռեց Եվ այսպես ամբողջ շաբաթ:

Տանն էլ քնաբեր ու հանգստացնող չէր մնացել, հարևանների բնակարանները գնահատվում էին շուկայականից անհամեմատ էժան, կատուն փախավ, իսկ պատերազմ տեսած Արմենակի տատը վերապրեց «Ստալինգրադյան կաթսան»: Անհրաժեշտ էին կտրուկ միջոցներ...

Ժամանակ առ ժամանակ ընդառաջելով Արմենակի թախանձագին խնդրանքներին ես վաճառում էի Կոկոյին· Պետք է նշեմ, որ վատ բիզնես չէր երբ բերում էին վերադարձնելու, հրաժարվում էի, ասելով, որ գումարի կեսը ծախսել եմ, բայց գնորդների համար մեկ էր. կարևորը Կոկոյից ազատվելն էր... Ի վերջո, թութակը հանգրվան գտավ կենդանաբանական այգում և, գիշերային պահակներին վախեցնելով, շարունակեց իր տառապալից ուղին... Այդպես էլ չխոսեց:

Ամեն անգամ, երբ խոսք է գնում բնատուր տաղանդի մասին, ես ցավով հիշում եմ Կոկոյին, որի ունակությունները, չգնահատվելուց բացի, երբեմն ի չարս ծառայեցին մարդկությանը, մասնավորապես Արմենակենց և նրանց հարևաններին:

Այլ է խնդիրը Մոխրոտի դեպքում. նա հերոսի կյանք ապրեց, միջազգային ճանաչում բերեց տիրոջը և, բախտի քմահաճույքով, նույն տխուր վախճանն ունեցավ: Դժվար կռահեք, որ խոսքն ընդամենը մի էգ արջագռավի մասին է... Բայց պատմեմ բոլորը, սկզբից:

90-ականներին էր, երբ խոսող թռչունների համահայկական անդրանիկ մրցույթում առաջին մրցանակ «լավագույն մարզիչ», «ամենահարուստ

բառապաշար», «լավագույն զրուցակից» և «ցնցող տեսք» նոմինացիաներում համոզիչ հաղթանակ տարան Մոխրոտ անունով ագռավը և նրա տեր, վաստակավոր երկրաբան Արշալույս Դոդոխյանը: Կոկոյի լուսանկարներն էի դիտում, երբ զանգեց Արմենակը. «Շուտ, հեռուստացույցը միացրու...»: Բարեբախտաբար, նախորդ օրն անջատել էի տեղական ալիքի դիրքում, թե չէ ո՞վ իմանա, ինչ ուղղությամբ կզարգանային դեպքերը (Պասկալն ասում էր, որ եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ երկար լիներ, աշխարհն ուրիշ կլիներ):

Հաղթողի պատվանդանի առաջին աստիճանին կանգնած էր, գլուխը կախ, մի մեծ արջագռավ: Մարմնի ծանրությունը մի թաթից մյուսը փոխելով, ստաժավոր հարբեցողի խռպոտ ձայնով, նա արագ փնթփնթում էր. «Ով չի աշխատում, նա չի աշխատում, հասկանո՞ւմ ես, Մոխրոտ, ով որ չի աշխատում, նա էլ չի աշխատում, Մոխրոտ, ի՞նչ ա պատահել»:

Հանկարծ ագռավը գլուխը բարձրացրեց, կտուցը լայն բացեց և այնպես գոռաց «Պիվես ո՞ւր ա...», որ պատվանդանի 2-րդ և 3-րդ աստիճաններին կանգնած թութակները (3-րդը կարծես թե Կոկոն էր) լեղապատառ թռան-փախան: Այստեղ ցուցադրումն ընդհատվեց, և հաղորդավարն սկսեց համառոտ կենսագրական տեղեկություններ տալ Մոխրոտ ագռավի և նրա մարզիչ, վաստակավոր երկրաբան Արշալույս Դոդոխյանի մասին: Գրիչը ձեռքիս լսում էի, որ հասցեն կամ հեռախոսը գրառեմ: Ավա՜ղ, տեղեկություն չեղավ... «Իսկ հիմա, խոսքը տանք արծաթե մեդալակիր, Կոկո թութակի մարզիչ, Երևանի կենդանաբանական այգու թռչունների վարչության խոսող թռչունների բաժնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու...»: Շարունակությունը լսելն անիմաստ էր.

Չպատմեմ, թե ինչ դժվարությամբ գտա չեմպիոններին: Նշեմ պարզապես, որ բոլորիս կյանքում կարևոր հանդիպումների մեծ մասն ուշացած են լինում: ուցե դա նրանից է, որ թռչել չգիտենք: Երևի: Մեր ընկերությունը շատ կարճ տևեց. քաղցկեղը տարավ Դոդոխյանին...

Այսօրվա նման հիշում եմ այն անձրևոտ կիրակին... Թափորը վաղուց լքել էր գերեզմանատունը, իսկ թարմ շիրմաթմբի վրա անընդհատ դեսուդեն էր վազվզում Մոխրոտը և ճչում. «Պիվես ո՞ւր ա... էս ի՞նչ արիր, ես քու ծնողը...»:

Մոխրոտին իմ տուն չտարա. չէի կարող խնամել ինչպես հարկն է: Տաղանդները չընդհատվող ուշադրություն են պահանջում, իսկ իմ անընդհատ շրջագայելու պայմաններում դա անհնարին էր, նույնիսկ Համազասպը (այդ կրիային ես Իջևանում էի գտել և տուն բերել) չդիմացավ և, անհասկանալի է ինչպես, կորավ... Ապրի կենդանաբանական այգու անձնակազմը. Մոխրոտին փառահեղ տեղավորեցին Կոկոյի հարևանությամբ, մի ավելի ընդարձակ ու լուսավոր վանդակում:

Եթե կարծում եք, թե պատմությունն ավարտվեց, սխալվում եք, այն նոր է

սկսվում. երկու տաղանդները հայտնվեցին կողք-կողքի...
Կենդանաբանական այգու տոմսարկղի մոտ սկսեցին հսկայական հերթեր գոյանալ, իսկ Մոխրոտի վանդակի մոտ ընդհանրապես ասեղ գցելու տեղ չկար ու անընդհատ սարսափելի ժխոր էր (...«ասեք թող որբաչևի մասին խոսա...»): Այստեղ նշեմ, որ եթե լավագույն խոսող թութակների (արա, ժակո, կակադու) բառապաշարը կարող է կազմել մինչև 400 բառ, ապա Մոխրոտը այդքան միայն հայհոյանք գիտեր (ողորմի անցավորներիդ, Արշալույս Դոդոխյան):
Կոկոն էլ հետ չէր մնում. նրա մի գիշերային շչակից հետո շաքարախտով տառապող, նոր աշխատանքի ընդունված պահակի շաքարն իջավ ու մինչև օրս չի բարձրացել (հատուկ հետաքրքրվում եմ): Այնպես որ, իմ քաջերը ոչ միայն զվարճացնում էին, այլ նաև բուժում (չնայած, ըստ իս, այդ երկու գործողությունները համարյա նույնական են):
Երկու տաղանդների համատեղ գործունեության գագաթնակետն, անկասկած, Լուսինեի փրկումն էր: Երկար-բարակ չպատմեմ Լուսինեի մասին, ուղղակի նշեմ, որ հերթական դժբախտ սիրուց հետո, նա հաստատ վճռել էր ինքնասպան լինել, բայց չէր կարողանում որոշել կոնկրետ ձևը: Նախորդ անգամ մի թաս ժավելի սպիրտ խմեց, բայց չմեռավ, հակառակը, հրաշալի թավ ձայն ձեռք բերեց, որը, ափսո՜ս, մի շաբաթից անցավ: Լարված մտորումների ընթացքում Լուսինեն մի շիշ օղի խմեց, այն էլ Վեդու արտադրության... Ու վճռեց կամուրջից նետվել: «Վեդի ալկո» ձեռնարկության արտադրանքին ծանոթ ընթերցողներս դժվար զարմանան, եթե ասեմ, որ ի վերջո, Լուսինեն հայտնվեց ոչ թե Հաղթանակ կամրջի վրա, այլ կենդանաբանական այգում: Ինքնասպան լինելու առիթով նա հագել էր իր ամենագեղեցիկ, կանաչ զգեստը, ուստի վերջին հաճախորդներից տարածքն ազատող հսկիչները չնկատեցին յասամանի թփի տակ քնած գեղեցկուհուն: Վաղուց արդեն մթնել էր, յասամանի թփի ամրությանն ապավինած Լուսինեն փորձում էր հասկանալ, թե ինչ է իր հետ կատարվում, երբ ետևից ոստիկանական մեքենայի մի ամպագորգոռ շչակ միացավ: Վրաերթից խուսափելու հույսով՝ նա յասամանախառը գլուխկոնծի տվեց միաժամանակյա շրջադարձով, որպեսզի դիմահար ընդունի հարվածը... Բայց ոչ մի մեքենա չկար և չէր էլ կարող լինել. վանդակների ուղղությամբ ընդամենը մի ավազածածկ արահետ էր, իսկ այնտեղ, ուր մեքենա պիտի լիներ, ցանցապատ վանդակում մի շատ գեղեցիկ թռչուն էր նստած: «Կարծես թե սկսվում է...» մտածեց Լուսինեն, հիշելով Բոլշի պատմած բոսորագույն մղձավանջների մասին: Հանկարծ կողքի վանդակից որոտի նման հնչեց. «Պիվես ո՞ւր ա, բոզ, ես քու ծնո՜ղը...»: Գոռացողը աքաղաղից մեծ մի սև թռչուն էր,, այնքան ծիծաղելի, որ Լուսինեն չկարողացավ ոչ վախենալ, ո՛չ զարմանալ...
Կես ժամ տևած անընդհատ ծիծաղից թուլացած Լուսինեն վերջապես

հասկացավ կյանքի իմաստը. այն ոչ թե ինչ-որ անխմախ սիրահարությունների մեջ է, այլ տաղանդներին անմնացորդ ծառայելու...

Դրանից հետո նա ամեն օր շոկոլադ էր բերում իր փրկիչներին մի բան, որ թռչուններին կտրուկ հակացուցված է... Սոխրոտի և Կոկոյի վիճակն օրըստօրե ծանրանում էր, բայց Լուսինեն դա չէր նկատում. նա գտել էր կյանքի իմաստը... Զարմանալի չէ, ոչ մի երկրպագու երբեք չի նկատում իր կուռքի անկումը...

Տաղանդները սատկեցին երջանիկ: Մեռան, բայց չկորան. նրանց վառ կյանքի ապացույցը փրկված Լուսինեն էր:

ԲՈՍՈՐԱԳՈՒՅՆ ՄՂՁԱՎԱՆՁՆԵՐ

Ներեցեք, որ չճանաչեցի, ես շատ եմ փոխվել:
Օսկար Ուայլդ

Գոռը Պետական հարբեցող է. նրան Պետ. պատվերով են բուժում: Իսկ ես մասնավոր եմ. որ իմացա ինչքան պիտի վճարեմ այստեղից դուրս գրվելիս, փշաքաղվեցի: Որտե՞ղ մնաց ձեր խոստացած ժողովրդավարությունը. բոզեր, հասկանու՞մ եք քանի շիշ կառնեի էդ փողով. անասուններ, հասկանու՞մ եք, որ ձեր պատճառով ես կարող է ծեծեմ Գոռին, ու՞ր են Ազատությունը, Եղբայրությունը, Հավասարությունը, հանգստացնող տվե՛ք...

Բայց դե էդ խեղճի վրա ձեռք կբարձրանա՞. նոպայի ժամանակ որ այստեղ էին բերել, քամակը չէին գտնում, որ սրսկեն: Ինքն էլ խեղճ-խեղճ մրթմրթում էր. «Նայեք, էլի՞, էդ կողմերում պիտի լինի».. Իմ լավ ընկեր, ներիր, որ բարկացած ժամանակ երբեմն քեզ եգոր եմ անվանում...

Երեկ Ծովինար IV-ը ծխախոտ ու խնձոր բերեց: Առաջին 3 Ծովինարները՝ Ծիլդան, Կալիգուլան ու Բոքոնը, պարզվում է, մարդ չեն, պիղծ արարածներ են. բա մարդուն էս վիճակում մենակ կթողնե՞ն: Չորրորդից էլ իմացա, որ երեքշաբթի օրը Մայր Հայրենիքին թաղել են... Ուրեմն դուրս էին գրել տանը մեռնելու համար, իսկ մենք մտածում էինք, թե դեպի լավն է գնում: Բայց, դե, եթե Բոսորագույն մղձավանջները սկսել են ամեն օր այցելել, ի՞նչ՝ դեպի լավը: Բոլորս էլ աշխատում ենք որոշ տհաճ փաստեր չնկատել...

Հրաշալի տղա էր Մայր Հայրենիքը՝ հանգիստ, համեստ, քչախոս· Բա հաղորդումնե՛րը, հաղորդումնե՛րը... Ռադիոյում հաղորդավար էր եղել: Հենց աշխատավայրում էլ, կամաց-կամաց, Բոլշի ասած, «հագել էր շշին», Բոսորագույն մղձավանջներն էլ, ինչպես միշտ, երկար չսպասեցրին, ու տառապյալ Մայր Հայրենիքին, ինչպես Արևմուտքում է ընդունված ասել, «բերին հոս»...

Երբեմն, մեզ չանհանգստացնելու համար, նա բարձով ծածկում էր երեսը և դանդաղ, պատը ճանկռելով, ցածրաձայն մզմզում: Մեկ էլ կլսեինք, որ բարձը մի կողմ է նետել ու հերթական հաղորդումն է եթեր տալիս. «Երեկ, Հարավ-Աֆրիկյան... տեղի ունեցան հուզումներ... մանկահասակ... կանանց, սովահար ծերունիների դեմ.. Փառք Աստծո, հայեր չկային... արցունքաբեր ռետինե մահակներ... Տե՛ր Աստված, սատանայի հոգին առ... բլղուր»...

Իհարկե, ասածները լրիվ չէինք հասկանում, Բայց Բիձեն մեզ

հանգամանալից բացատրեց, որ Մայր Հայրենիքը, ի տարբերություն մեզ նման անհեթեթությունների, արվեստի մարդ է և, համաձայն Պավլովի տեսության, ավելի խոցելի է խմիչքի հանդեպ, ու եթե մենք միայն Բոսորագույն մղձավանջներ ենք ունենում, ապա նրանց մոտ առաջանում է նաև «տհաճ երրորդությունը», իսկ դա դժոխքի իններորդ պարունակից էլ ահավոր երևույթ է...

Ամեն արվեստագետ համոզված է, թե մի բառ գիտի, որն արտասանելով՝ կարող է քշել տհաճ երրորդությանը, բայց, ավա՜ղ, դա ուտոպիա է: Մայր Հայրենիքի բառը «բլղուրն» էր..

Ուրեմն մենք՝ նախկին տեխնիկական գործիչներս, դեռ լավ ենք պրծել. Նախկին եմ ասում, որովհետև, վաղ թե ուշ, գալիս է մի ժամանակ, երբ շիշը, իրենից բացի, ոչ մի ուրիշ զբաղմունք չի հանդուրժում, Բոսորագույն մղձավանջները սկսում են հաճախակի այցելել, ու, սպիտակ տենդում այրվելիս, մենք տեսնում ենք նույն կանաչ առնետներին ու սողուններին...

Եթե նախկինում գյուտարար եմ եղել, ասել կուզի առնչվել եմ գոյություն չունեցողի հետ, ուրեմն ապահովագրված չե՞մ տհաճ երրորդության այցելությունից. Պատրաստ պետք է լինել, բայց, դե, միանգամից հո չե՞ս հարցնի, ուստի հեռվից սկսեցի.

- Մայր մեր, ո՞նց ես . Շան օրի, Կարեն ջան, կրկնակի դոզա են տվել, բայց զգում եմ, պիտի գա - Տհաճ երրորդությու՞նը - Բա շու՞նը էլի պատը չանգռելու եմ, եղունգ չմնաց .. «Բլղուր» գոռալու ուժ էլ չունեմ . - Մայր մեր, դրա գալը ո՞նց ես զգում, ի՞նչ տեսք ունի, ի՞նչ է անում . Կարեն, տեսքը չգիտեմ, որովհետև սկզբում բոսորներն են գալիս ու աչքերդ մթնեցնում, հետո հանկարծ տհաճ երրորդությունը հոգիդ հանում է, մտցնում քամակդ ու դարձնում էն բան, էն Բիձեն որ ասում էր, էն ո՞նց էր ասում...

- Խրամատային ակորդեո՞ն·

- Հա, ֆռանտավոյ գառմոշկա.. Կարեն ջան, էն բարձը տուր, ոնց որ սկսեց Բլղու՜ր ..

Վերջնագծին մոտ մենք, իհարկե, նույն խղճուկ արարածն ենք դառնում, բայց ասել եմ ու կասեմ. մինչև քայքայվելը այս տխրության տան ակամա հյուրերը մեկը մյուսից արժանի անհատականություններ են: Իսկ ով չմեռավ երեքշաբթի, կմեռնի չորեքշաբթի..

Ամեն առավոտ, իրենց ադաթի համաձայն, բժիշկը ստուգում է մեր վիճակը: Այնքան էլ տարօրինակ հարցեր է տալիս, ակամայից կսկսես մտածել, բայց հենց հարցրեց, թե վերջին տարվա ընթացքում թեկուզ մեկ ուրախ օր ունեցել եմ, թե՝ ոչ, ակնթարթորեն պատասխանեցի «մի անգամ»:

Կայծակը թզուկին չի խփում. ինձ այստեղ էին բերել երիտասարդ մուրացկան ծեծելու համար, իսկ Բոլշն ու Բիձեն կամավոր եկան: Հարբած էին զմայլվելու աստիճան և կտրականապես պահանջում էին իրենց գենետիկ կոդերը փոխել: Անմիջապես հանգստացնող տվեցին, որը նրանց

շատ դուր եկավ.. Հենց այդ ժամանակ էլ, «հելենիումից» խաղաղված նրանց իմաստուն դեմքերին նայելով, երիցս համոզվեցի, որ կայծակը թզուկին չի խփում...

Մոտ մեկ շաբաթ մեր ուրախությունն էին այդ քաջերը, մեկը՝ մտքի, մյուսը՝ գործողության: Հետները բերել էին մի հսկա սեխ, որի մեջ, ինչպես երեկոյան պարզվեց, լիտրի չափ սպիրտ էր սրսկած Առաջին բաժակը ծանոթության համար խմելուց հետո, Բիծեն առաջարկեց խմել իմ ծեծած երիտասարդի կենացը, առողջություն ցանկացավ նրան, ստեղծագործական հաջողություններ աշխատանքում ու կյանքում և ավելացրեց, որ եթե ես ծեր մուրացկան ծեծած լինեի, ընդհանրապես չէի արժանանա իրենց հետ խմելու պատվին: Այդ պահին, արկած որոնողի խրոխտ քայլերով, մոտեցավ Բոշի էշը (Խոհեմության սահմանը վաղուց խախտած զազրելի մի տիպ, որը հաճախ նեղացնում էր Մայր Հայրենիքին): Նրա առաջին և վերջին բառերն էին «Խի դուք ո՞վ դառաք, արա »՝

Ես համոզված եմ, որ եթե այդ պահը նկարահանվեր և ցուցադրվեր դանդաղեցված, միևնույն է, Բոլշի հարվածը չէր երևա (այդպիսի հարված տեսել եմ միայն Թայսոն-ՄըքՆիլի հանդիպման ժամանակ, երբ հանդիսատեսների մեծ մասը չհասկացավ, որ մրցամարտն ավարտվել է):

Հաջորդ օրը Մայր Հայրենիքը բացատրում էր Բոշի էշին, որ նրա ուղեղի ցնցման պատճառը առաստաղի փլուզումն է եղել, իսկ Բիծեն ավելացրեց, որ «Բոլշը կյանքում խեղճին, թույլին, համեստին, մատով չի դիպչի, բայց եթե հաճախորդը լկտի է, ոռից ոռ կհանի, փորից՝ ճրագու»՝

Երբ Բիծուն հույժ կարևոր փաստաթղթերով մի տգեղ կին, դուրս գրել տվեց և, Բոշի էշի կարծիքով, տարավ իր տուն, Բոլշը քոչեց Մոսկվա... Չեմ հավատում Բիծեն էլ է քոչել, թե չէ տուն կզանգեր, կգար այստեղ, սեխ կբերեր (Ծովինար IV-ի էս խնձորներին արդեն նայել չեմ կարողանում) ..

Ինձ կհասկանար միայն Թումանյանը.
Ու՞ր կորան... մոտիկներս ու՞ր կորան,
Ձեն եմ տալիս, լաց լինում,
Ձեն չտվին .. լուռ կորան:

«Մենակ մարդու տատուն էշերը գզեն», . երբեմն ասում էր Բոլշը: Բա ես մա՞րդ եմ, բա ես իրավունք ունե՞մ ապրելու. բա սա շրջապա՞տ է.. Ես սրանց հետ ի՞նչ շփվեմ՝ Բոշի էշը ցնցումից վերջին չորս տարվա հիշողությունը կորցրել է, ժամը մեկ հարցնում է՝ ինքը ամուսնացա՞ծ է, թե՞՝ ոչ, ես ո՞նց չխելագարվեմ, էդ թխվածքները բերողը կարո՞ղ է տատմերդ է, ա՛յ անասուն: Իսկապես որ՝ Բոշի էշ...

«Սուսիկ թայֆի» ժողովրդին էլ, բժիշկն ասում է, բերել են Հայրենիքի խմբակային դավաճանության համար սրանց մոտենա՞լ կլինի: Առաջ գոնե

մի կուսակցություն էր, նրա պլատֆորմի վրա էլ ցնդում էին, հիմա հարյուրից ավելի են, մեռան մեկը մյուսի գաղափարներին դավաճանելով, թե ձեզ որտեղի՞ց գաղափար, ո՞վ կբացատրի: Քաղաքում ինչ պլատֆորմի վրա ցնդած ասես չկա: Ախտորոշումն էլ մեկն է՝ շիզոիդ, ափսոս չե՞ն իմ հարազատ, բոսորագույն մղձավանջները... Խեղճ Մայր Հայրենիքն էլ ենգաբար մեռավ, հիմա «ո՞վ կմոտենա, ո՞վ կբարևի»... Ասա էդքան ապրել էիր, մի քիչ էլ ձգեիր, էլի՜, զանգեիր տուն, իմանայիր, որ էստեղ եմ, սեխից-բանից բերեիր, քի՞չ բան քեզ սովորեցրեց Բիձեն... Մնացել է մենակ Գոռը, է՜, Գոռի հետ խոսելով գիտակցությու՞ն կպահպանես: Լավ է, գոնե, հանգստացնող բերեցին, հիմա մի քիչ կխաղաղվեմ:

Լավ, կարծես թե ամեն ինչ պարզ է դառնում, բայց, Գո՛ռ, էս անգամ ինձ ինչի՞ համար են բերել... Դու լրի՞վ գժվեցիր, ախմա խ, տերտեր ծեծե՞լս որն է... Եգոռ, էս ինչե՞ր ես ասում, էսպես ո՞նց կլինի... Տե՜ր Աստված, սատանայի հոգին ա՛ռ, բլղու՛ր, բլղու՛ր: Էս ի՞նչ եմ դառնում .. բլղու՜ր...

ԽՈՍՔ ԸՆԿԵՐՈՋՍ ՄԱՍԻՆ

Երկար մրսելուց հետո, կյանքի 42-րդ տարում իր մահկանացուն կնքեց Երևան քաղաքի հիմնական մարդկանցից մեկը համոզված ուտոպիստ, ռոմանտիկ կնամոլ, խորապես խմող, մտածող և լրագրող Օ՜Զալոյանցը:

Մինչ նրա անունը հոլովելը կդառնա մոդայիկ, իրենց մահախոսականները կտպեն աշխարհի բոլոր թերթերը, և քաղաքում ասեղ գցելու տեղ չի մնա նրա արձանների և կիսանդրիների առատության պատճառով, ես ցանկանում եմ մի քանի խոսք ասել այդ հրաշալի մարդու մասին:

Ունենալով խոր իռլանդա-խեթական արմատներ, Օ՜Զալոյանցի նախնիները դեռ վաղ միջնադարում լքեցին մառախլապատ Ալբիոնը և եկան Հայաստան մի քիչ տաքանալու: Ներկայումս մեծ դժվարությամբ կարելի է վերականգնել նրանց փառապանծ տոհմածառը հաճախակի էտման պատճառով: Հայտնի է միայն, որ դարերի ընթացքում իռլանդական արյունը նրանց երակներում պակասում էր, իսկ հայկականն ավելանում. Թե ինչ ֆանտաստիկ արդյունք ստացվեց դրանից, կարծում եմ, ավելորդ է նշել...

Օ՜Զալոյանցը ծնվել է 1958թ. գարնանային օրուգիշերահավասարի օրը, Արարատյան դաշտավայրում, ծովի մակերևույթից 600-800 մ բարձրության վրա:

Դեռ մանուկ հասակից նա սովորեց դիմանալ ճակատագրի հարվածներին, բարձր և ցածր ջերմաստիճանների և խոնավության ազդեցությանը, ինչպես նաև տրանսպորտային վիբրացիային և ցածր մթնոլորտային ճնշմանը·

Էքստեռն ավարտելով Տեր-Թոդիկի անվան ծխական դպրոցը, բնականաբար, նա ընդունվեց ֆիզիկայի ֆակուլտետ, որպեսզի ավարտելուց հետո կարողանա տարբերել ֆիզիկան մետաֆիզիկայից: Ցավով պետք է նշել, որ այդ երազանքը մնաց անկատար...

Հենց այդ տարիներին էր, երբ մի երեկո, «Կռունկ» գարեջրատանը նստած մի խումբ ուսանողներ լսեցին նրա խռպոտ բարիտոնը. «Ֆելլինին ճիշտ էր, դժոխքում ոչ թե ինը շրջան է, այլ 8 1/2, վերջին կեսի սպասումը իրագործումից սարսափելի է: Այդ մասին գիտեն բոլոր հին շախմատիստները»: Այս խոսքերը լսելով, հարևան սեղանի տակ պառկած Վլադիմիր Քրիստափորի Դելակրույանը արտասվեց, նայեց խոսողին, խաչակնքեց և շարունակեց արտասվել: Օ՜Զալոյանցը տուն ուղեկցեց Քրիստափորիչին, և, չնայած պարզվեց, որ լրիվ ուրիշ տուն է ուղեկցել, սկսվեց մի ընկերություն, որը, առանց որպե իսկ ընդմիջվելու, տևեց երկար տարիներ...

Օ՜Զալոյանցը չէր սիրում ժամանակ կորցնել և, համալսարանն ավարտելուց հետո, անմիջապես աշխատանքի անցավ Տիեզերական ճառագայթների լաբորատորիայում որպես ճառագայթվող՝ Սակայն ուսման ծարավն անհաղթահարելի էր, և Օ՜Զալոյանցը մեկնեց ասպիրանտուրա: Մոսկվայում նրա ղեկավարը Ժոռն էր, Ֆիլիպ Աուռեոլ Տեոֆրաստ Բոմբաստ ֆոն Գոգենհեյմի (Պարացելս) միակ գիտական ժառանգորդը: Բացի գիտական աշխատանքը, աշակերտն ու ուսուցիչը մեծ վաստակ ունեցան Գալիլեյի գործի վերանայման ու արդարացման խնդրում: Ո՞վ գիտի ինչ բարձունքների կհասնեին այդ անվեհեր մարդիկ, բայց սկսվեց ազգի զարթոնքը, և ամեն ինչ անցավ երկրորդ պլան Քրիստափորիչը սպասում էր...

Քրիստափորիչի և Օ՜Զալոյանցի քաղաքական պայքարը սկսվեց խմբային միզադուլից, որի համեմատ հացադուլը մանկական խաղ է հիշեցնում դա կհաստատեն գարեջրի բոլոր սիրահարները: Երբ մեզի պարունակությունը արյան մեջ կյանքի համար սպառնալի չափերի հասավ, Քրիստափորիչը հղացավ ԱԲԾ հիմնարար գաղափարները, որոնք նրա խոսքերից գրի առավ Օ՜Զալոյանցը Հանրապետական հիվանդանոցի վերակենդանացման բաժնում, սեփական հիվանդության պատմության թերթիկի վրա. Ձեռագրերն, ինչպես հայտնի է, չեն այրվում՝ Դեռ հիմա էլ առանձին հատվածներ և մեջբերումներ «Տարերային անարխիստի հիշատակարան»-ից կարելի է հանդիպել ցանկապատերին գրված և նույնիսկ ժողովրդական բանահյուսությունում, իսկ մի հատված երգի վերածվեց. (Հայ եմ ես, հայ ես դու, ես հայ եմ, դու հայ ես, քո ցավը տանեմ):

Կարճ ժամկետում երկու ընկերները իրենց ամբողջ պոտենցիալ էներգիան վերածեցին կինետիկի և շարժումն անկասելի դարձավ Բայց ցրտեց .. Եվ հունվարյան մի երեկո, հերթական տրամվայը ազգովի սարն ի վեր հրելիս, ժողովուրդը նկատեց, որ չնայած ծեր առյուծի (առյուծները սկսում են ծերանալ 10 տարեկանից) ճանկերը պահպանվել են, նա մրսում է:

Հանգուցյալին հիշելիս ընդունված է նշել միայն նրա արժանիքները. Արդյոք անթերի՞ մարդ էր Օ՜Զալոյանցը: Իհարկե ոչ: Մասնավորապես, նա չէր կարողանում լուրջ ընկալել որևէ մարդու, եթե վերջինիս անունը Ռոբերտ չէր: Բրոուն, Հուկ, Բոյլ, ահա նրա ուսուցիչները: Միակ բացառություններն էին Վլադիմիր Դելակրույանը և ես: Մեկ անգամ չէ, որ նա ասել է ինձ. «Կխեղդեմ, ապուշ, չնայած անունդ Ռոբերտ է»: Դա այն ժամանակ էր, երբ լճացման հաղթահարման համար Օ՜Զալոյանցը ճահճացման կոչ արեց, որպեսզի, իր խոսքերով ասած, «ճահճում լոտոսներ աճեցնենք և դառնանք լոտոֆագներ»:

Խոսքը արծաթ է, լռությունը՝ ոսկի: Օ՜Զալոյանցը միշտ գերադասում էր արծաթը. ավելի բարձր էլեկտրա և ջերմահաղորդականության

պատճառով: Երեկ երեկոյան նա փոխեց իր կարգավիճակը, դարձավ ոսկի, և այդ ոսկու փայլը երկար կջերմացնի բոլոր այն մարդկանց սրտերը, ովքեր բախտ են ունեցել ճանաչելու Օ՜Զալոյանցին:

ՌՈԲԵՐՏ ԶԱՀՐՈՒՄՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ճակատագրի թմբուկները 3
Կայացավ 5
Ընկճախտ.....7
Տգիտության վտանգը 9
Մեկուսիչը.....11
«Քրիստափորիչ 50» 11
Յաղագս ինքնասպանի 16
Համառոտ հրատապ պատմություն 18
Շերեփի ասպետը 20
Տխուր պատմություն 23
Ռազմիկի ուղին 25
Դանկոն 27
Երազողները 29
Գարնանային սրացում 36
Մտորումներ ծմերուկի մասին 38
Վերադարձ.....41
Հայաստանի առևանգումը 43
Հանճարը 45
Յուրօրինակ մի որսաձև 48
Ցրտեց 51
Ավելի ցրտեց 53
Ազատագրում ցրտից 55
Ուսուցչին հիշելիս 57
Ազգի գոյատևման համառոտ ձեռնարկ 60
Ընտրություններին ընդառաջ 62
Փոխատեղումներ 64
Վրաերթի կանխազգացում 68
Շեշտակի հակագրոհ 71
Ջատագովները 73
Չաղճատված Հայրենիքի Բավիղներում 76
Եթե գան 78
Մոխրոտն ու Կոկոն 80
Բոսորագույն մզձավանջներ 84
Խոսք ընկերոջ մասին 88

Թուղթը՝ օվսեթ: Չափը՝(60x84): Տպաքանակ 100

Գինը պայմանագրային:



ԸՆԿԵԱԽՏ...

(Հայ գրող Օ՞Ջալոյանցը

Կովկասյան գամփռ Չոմբեի հետ:

Բաղեն-Բաղեն 2000թ.)

Մի ամպ էր թևում երկնքում
Ծածկելով արև ու լուսին,
Քամին էր խաղում թփերում
Եվ նորմալ սուսում էր սոսին:
Արևի ցոլքից բռնկվեց
Թավուտը՝ լցված հովերով...
Բայց ուղտը դուռնս չոքեց՝
Նախապես այդ ամենն ուտելով:
Նա կերավ բույսերը բոլոր,
Վախեցրեց միակ արտույտին,
Մթնեցին աչքերս մոլոր...
Եվ ես թքեցի փայտին:

.....

Երբ ես թքեցի փայտին
Անսամակ, բայց մոայլ բացատում
Կատուս մլավում էր քաղցած
Անծառ, անծաղիկ թավուտում:
Հետո Հասարակ մի Բարկեն,
Որին ես Բարո եմ ասում,
Անվերջ քարեր էր փնտրում
Բավական դեղին ավազում:
Նա ոչ մի քար չգտավ
Այդ տեղ-տեղ դեղին ավազում,
Ինձնից էլ խիստ նեղացավ,
Որ իրեն Բարկեն չեմ ասում...
Ու ես՝ մի գործող գործազուրկ,
Հիմա իմ կատվին եմ բռում,
Որպեսզի նա գորանա
Եվ խեղդի ուղտին թավուտում:

.....

Իմ կատուն առյուծ է, Բարո՛,
(Կներես, որ Բարկեն չեմ ասում),
Մնվում է միայն ուղտերով
Ու դուրս է գնում ավազում...
Երբ ուղտը, արտույտն ու Բարոն
Փայտին կթքեն վերջում,
Առյուծս ամպեր կտեսնի
Իր ծերունական երազում:

.....

Ամբողջ աշխարհի Բարկեննե՛ր,
(Կներեք, որ Բարո չեմ ասում),
Ես ինձ հենց նոր եմ գտել
Այս անծառ, անծաղիկ թավուտում: